

ՀՀ ԳԱԱ ՀԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Կ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ,
Ա. ԳԱԼՍՏՅԱՆ, Լ. ՂԱՄՈՅԱՆ, Ս. ՊԱՊԻԿՅԱՆ,
Ն. ՍԱՐԳՍՅԱՆ, Տ. ՍԱՖԱՐՅԱՆ**

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՐԱԿ Ա

**ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022**

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

Ա 858

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհուրդը:

Պատասխանատու խմբագիր՝ Թ. Ասոյան

Արդի հայերենի հետազոտություններ: Պրակ Ա.- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ
Ա 858 հրատ., 2022. - 159 էջ:

Գրքում ներկայացված են ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի արդի հայերենի բաժնի աշխատակիցների աշխատանք-
ները, որոնք 2013թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովա-
ծուններում, գրքերում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են
ժամանակակից հայերենի ուսումնասիրության ընդհանուր ու մասնավոր
խնդիրների: Ժողովածուն կարող է օգտակար լինել մասնագետներին և
առհասարակ ժամանակակից հայոց լեզվի հարցերով
հետաքրքրվողներին: Ներկայացված նյութը կարող է օգտագործվել
հանրագիտարանային բնույթի աշխատանքներում, ուսումնական
դասընթացներում:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-9298-1-1

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2022

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժինը մեծ ավանդ ունի ժամանակակից հայոց լեզվի գիտական հետազոտության բնագավառում: Բաժնի գիտաշխատողների ուշադրության կենտրոնում են եղել հայերենի հնչյունաբանական, բառապաշարային, քերականական, խոսքային իրողություններին վերաբերող հարցերը: Ուսումնասիրվել են ինչպես լեզվական առանձին միավորներ ու հատկանիշներ, այնպես էլ տեսական հարցեր: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են մենագրություններում, բազմաթիվ հոդվածներում ու զեկուցումներում:

Ներկայում լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնում շարունակվում են աշխատանքները լեզվական տարբեր երևույթների ուղղությամբ: Մասնավորապես քննվում են բառապաշարային առանձին թեմատիկ խմբերին, հայերենի բառակազմության, ոլորտային տերմինագիտությանը, ձևաբանական և շարահյուսական նորմավորմանը, շարահյուսական կապակցման միջոցներին ու եղանակներին, հատկական փոխառություններին, լեզվաոճական իրողություններին, ուսուցման խնդիրներին, խոսքային տարածված սխալներին վերաբերող բազմաթիվ հարցեր: Ուշադրություն է դարձվում Մխիթարյանների հայերենագիտական գործունեությանը արևմտահայերենի ուսումնասիրության և կանոնարկման ուղղությամբ: Հետազոտությունները կատարվում են ինչպես նկարագրական, այնպես էլ պատմական եղանակներով: Ավարտվել են աշխատանքները բավականին ծավալուն «Արդի հայերենի ուղղագրական բառարան»-ի վրա:

Իր գիտական արդյունքները ի մի բերելու, հանրությանը և ժամանակակից հայոց լեզվի հարցերով հետաքրքրվող ներկա ու հաջորդ սերունդներին ամփոփ կերպով ներկայացնելու նպատակով ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժինը սկսում է հրապարակել աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումները պարունակող «Արդի հայերենի հետազոտություններ» ժողովածուների շարք՝ ըստ տարիների: Նյութերը քաղվում են լույս տեսած տարբեր ամսագրերից ու ժողովածուներից՝ առանց հեղինակային կամ խմբագրական միջամտության:

Շարքի առաջին պրակը պարունակում է բաժնի աշխատակիցներ Կ. Առաքելյանի, Ա. Բարսեղյանի, Ա. Գալստյանի, Լ. Ղամոյանի, Ս. Պապիկյանի, Ն. Սարգսյանի, Տ. Սաֆարյանի աշխատանքները, որոնք 2013 թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են արդի հայերենի ուսումնասիրության ընդհանուր ու մասնավոր խնդիրներին

Թ. Ասոյան

ԱՌԱՐԿԱՅԱՀԱՍԿԱՅԱԿԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ
ԲԱՌԱՇԵՐՏԸ
Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԳՐՔՈՒՄ*

Առաքելյան Կարինե
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Այս կամ այն հեղինակի բառապաշարի իմաստային կառուցվածքը քննելիս հաճախ հարկ է լինում կատարել մի քանի ստորաբաժանումներ, քանի որ բառերը կարող են օժտված լինել տարբեր՝ առարկայահասկացական, գնահատողական, հուզաարտահայտչական, փոխաբերական և այլ իմաստներով:

Ցանկացած բառ, որ պատկանում է բառապաշարի չեզոք շերտին, օժտված է անվանողական արժեքով, որը հիմնականում նրա առաջնային, ուղղակի իմաստն է: «Չեզոք բառապաշարը ծառայում է իբրև ֆոն, որի վրա և որի շնորհիվ իր ամբողջ բազմազանությամբ ու նուրբ երանգավորմամբ ի հայտ է գալիս խոսակցական և գրքային բառերի հուզաարտահայտչական բնութագիրը... Բառերը միավորվում են բառապաշարային խմբերի մեջ գործառնարտահայտչական տեսակետից»¹:

Չեզոք շերտի բառերը «կազմում են ամեն մի լեզվի, նմանապես նաև հեղինակային լեզվի հիմնական բառաշերտը: Այսպես, օրինակ, ըստ հետազոտությունների... «չեզոք հիմքը ներկայացնում է ժամանակակից ռուսաց գրական լեզվի տարրերի երեք քառորդը...»²:

* «Ձախուկյանական ընթերցումներ, հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ», Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 5-12:

Շատ անգամ գեղարվեստական պատկեր ստեղծելու համար այս կամ այն հեղինակը բառերն օգտագործում է ոչ ուղղակի կամ առաջնային, այլ փոխաբերական իմաստներով: Մակայն շատ հաճախ իրենց անվանողական իմաստներով բառերն ստեղծում են հիացմունքի արժանի պատկերներ, արվեստի գլուխգործոցներ, և Ջահուկյանի քնարերգությունն էլ այս առումով բացառություն չէ: Համոզվելու համար դիմենք բնագրային վկայություններին:

Հիշենք *պատկեր* բառը: Այն հասարակ գոյական է, և բառարաններն այն հիմնականում բացատրում են որպես «Գեղանկարչական ստեղծագործություն թղթի, կտավի, տախտակի վրա, նկար: Որևէ բանի ընդօրինակված վերարտադրություն... Առարկայի անդրադարձած տեսք երևույթ: Տեսք, կերպարանք, դեմք: Տեսարան, բնապատկեր»³ և այլն, նաև նշում ինչ-ինչ փոխաբերական իմաստներ:

Բառն իր տեղն է գտել հեղինակի ամենավաղ շրջանի ստեղծագործություններում: Տակավին պատանի՝ տասնհինգամյա Ջահուկյանը բանաստեղծական ճանապարհին անում էր անդրանիկ փորձերը, թեպետև, ինչպես ինքն էր խոստովանում. «Ճիշտ է, եղել են ավելի վաղ (7-8 տարեկանից) փորձեր, բայց 1935 թվականից ես պարբերաբար բանաստեղծություններ եմ գրել՝ առանց դրանք հրատարակելու»⁴: Ահա հենց 1935-ին գրված բանաստեղծություններից մեկում կարդում ենք.

Դողդողաց մի *պատկեր*

Անձրևոտ փողոցում... (5)

Թվում է՝ գործ ունես հասարակ պատմողական նախադասության հետ, որտեղ բոլոր բառերն օգտագործված են իրենց առաջնային, անվանողական իմաստներով, սակայն ամեն հաջորդ բառի հետ համոզվում ես, որ ոտանավորը կառուցված է

փոխաբերության հիմքի վրա, և պատկերն էլ թերևս անդրադարձ է, բայց ոչ որևէ առարկայի, այլ ցաված հոգու անդրադարձ անձրևոտ փողոցում, որն այս դեպքում կարելի է ընկալել իբրև տխրության խորհրդանիշ.

Ուր հազար կաթիլներ

Լալիս են, հեծեծում,

Ուր երգերն իմ անտեր

Ցավով սիրտ են խոցում... (5)Նմանատիպ

երևույթ նկատում ենք նաև «Գիշեր» բանաստեղծության մեջ, որտեղ բոլոր տներն սկսվում են նույն «Քայլում էր նա...» պատմողական նախադասությամբ, ապա կառուցվում այլաբանական պատկերներ, ինչպես.

Քայլում էր նա... Հուր ծիծաղով

Կանչում էր լույսն ու մարում,

Թավալվում էր գետը խաղով

Հագարայյա խավարում (15):

Երբեմն բանաստեղծը մեկ բանատան, անգամ ամբողջական բանաստեղծության բոլոր կամ գրեթե բոլոր բառերն է օգտագործում առաջնային-անվանողական իմաստով և ստեղծում գեղարվեստական պատկերներ, որոնք որևէ կերպ չեն զիջում հուզաարտահայտչական երանգով օժտված բառերով կազմված պատկերներին, ինչպես.

Առավոտյան գային աշխույժ մանուկներ,

Թափառեին իմ շիրիմի մոտ լի ցողով,

Հնչեցնեին ուրախ խոսքեր ու երգեր

Քրքջային անմահական ծիծաղով... (27)

Անշուշտ «ոչ միայն իրական դեպք կամ տպավորիչ պատկեր, այլև խորը փիլիսոփայական խորհրդածություններ կարելի է

պատկերավոր կերպով արտահայտել բառերի ուղղակի իմաստների օգնությամբ»⁵:

Հաճախ անվանողական արժեքով օժտված բառերը հեղինակին օգնում են կերտելու պատկերավորման այլազան միջոցներ, ինչպես, համեմատություն- «Մրահոն ճակատիդ ներքևում Փայլփլող գույգ աչքերն եմ սիրում, Բոլորող լուսնի պես լուսավառ Իմ անո՛ւշ, իմ անո՛ւշ սիրահար» (7) , «Ըկած էր նա այդպես տխուր, գլխաբաց, Ընկած էր նա որպես անձայն մի ուրու» (59). փոխաբերություն - «Ոչ էլք ենք գտնում անտառից հսկա, ոչ կարողանում դառնալ դեպի հետ... Մեզ համար երբեք փրկություն չկա, Մեր ճանապարհը փակված է հավետ» (71) , կրկնություն. «Մոռացել ես, մոռացել ինձ, Եվ ուժ չկա էլ խոսելու» (183). չափազանցություն - «Նա չխոսեց, նա չարտասպեց, չսգաց Արև ծածկող դագաղի մոտ սիրուհու» (59) և այլն:

Բառերն իրենց անվանողական-առաջնային իմաստներով հաճախ օգտագործվում են հեղինակի արձակ բանաստեղծություններում: Երբեմն միայն այս միավորների միջոցով կառուցվում են ամբողջական պարբերություններ, ու միշտ խոսքը հարստանում է զանազան նրբերանգներով, ինչպես. «Այսօր ես ցանկանում էի մենակ լինել: Ես վերցրի գիրքը և գնացի պուրակը: Եթե մեկը նայեր ինձ, կգարմանար, թե ինչու եմ ես այդքան ուշադիր նայում միշտ միևնույն էջին: Ա՛խ, ինչ իմանար զարմացողը, որ դու հեռանում ես ինձնից և հեռանում ես գուցե հավիտյան» (138):

Այստեղ բոլոր բառերն արտահայտում են իրենց ուղղակի իմաստները, վերաիմաստավորում չկա, սակայն դրանից ամեննին չի տուժում պատկերի բանաստեղծականությունն ու արտահայտչականությունը: Որոշ լեզվաբաններ առարկում են

բանաստեղծական պատկերները միայն մակդիրներին և դարձույթներին հանգեցնելու դեմ՝ պնդելով, որ «հարցը միայն պատկերավոր արտահայտությունները չէ, այլ յուրաքանչյուր բառի անխուսափելի պատկերավորությունը, քանի որ այն մատուցվում է գեղարվեստական նպատակներով, քանի որ այն տրվում է ամբողջական պատկերավորության համատեքստում»⁶:

Երբեմն բառերի անվանողական իմաստներից բանաստեղծը կտրուկ անցում է կատարում նույն բառերի փոխաբերական իմաստներին՝ ստեղծելով հակադրության ինքնատիպ օրինակներ, ինչպես «Գարունը եկավ» տողով սկսվող արձակ բանաստեղծության մեջ. «Գարունը եկավ, բոլոր պարտեզները ծաղկեցին, երգեցին բոլոր թռչունները: Բայց իմ հոգու պարտեզը երբեք չծաղկեց, ու երբեք չերգեց իմ հոգու թռչունը» (116):

Բացի անվանողական արժեքով օժտված բառերից Ջահուկյանի քնարերգության մեջ մեծ դեր ու կշիռ ունեն գնահատողական արժեքով օժտված բառերը: Գնահատողական նշանակություն ունեցող բառերն արտահայտում են հասարակության կողմից ընդունված դրական կամ բացասական բնութագիր ունեցող իրերի, երևույթների կամ դրանց հատկանիշների հասկացություններ⁷: Ինքնին վերցրած՝ այս միավորները հուզաարտահայտչական երանգավորում և ոճական գործառույթ չունեն: Սակայն գեղարվեստական գրականության մեջ, խոսքային համապատասխան միջավայրում, նման բառերը հաճախ ստանում են ոճական երանգավորում, նպաստում խոսքի հարստացմանը և ծառայում ոճական այլևայլ նպատակների: Սա, անշուշտ, կատարվում է նախ և առաջ հեղինակի՝ տվյալ իրի կամ երևույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքի շնորհիվ: Ըստ որոշ լեզվաբանների «ուշադրություն դարձնելով ոճական երևույթի

հատկապես գնահատողական իմաստին... նկատենք, որ այն կարող է ընկնել ոչ միայն ոճաբանական միջոցի (ոճաբանական իմաստի շնորհիվ), այլև ոճաբանական հնարանքի ստեղծման հիմքում, անկախ այն բանից, թե ինչպիսի ոճաբանական միջոց է նրա միջուկը»⁸:

Ջահուկյանի քնարերգությունն առատ է թե՞ դրական, թե՞ բացասական գնահատողական երանգավորմամբ օժտված բառերով: Դրական երանգավորմամբ բառերը խոսքին հիմնականում հաղորդում են վեհություն, գրավչություն, նրբագեղություն, օժտում այլ արժանիքներով: Այսպիսին է պարագան *հմայուն* և *պերճ* բառերի դեպքում «Քո աչքերը» բանաստեղծության մեջ.

Այդ քո մանկական շող աչքերի մեջ

Մի ողջ աշխարհ կա *հմայուն* ու *պերճ*... (65)

«Խնդություն» ոտանավորի մեջ, սկսյալ վերնագրից, բանաստեղծը խոսացրել է դրական երանգավորմամբ բազմաթիվ բառեր՝ ստեղծելով մարդու և բնության ներդաշնակության, հոգեկան ցնծության գեղարվեստական պատկեր.

Նայեցի դուրս՝ պայծառ օր,

Հուսո երգ կար չորսսրբուր,

Լի էր երկինքը անամպ

Անեզրական խնդությամբ... (173)

Կապված ասելիքի առանձնահատկությունների հետ՝ գնահատողական արժեքով օժտված բառերը հեղինակին օգնում են խոսքը հումորով համեմատելու կամ առաջացնում են հեգնական տրամադրություն, ինչպես *ծաղր* բառի դեպքում «Համառորեն կարծում է նա» տողով սկսվող բանաստեղծության մեջ.

Կերպարանքում իմ տխրադեմ

Ոչինչ չկա *ծաղրից* բացի.
Հոգյա՞կս, ես վաղուց գիտեմ
Բոլոր խաղերը կանացի (65)

Նկատելի է նաև մի երևույթ. բացասական գնահատողական իմաստով բառերի դրական երանգավորմամբ գործածությունը: Այսպիսին է *խենթ* բառի կիրառությունը «Հուսահատ թափառում եմ կյանքի անտառում» տողով սկսվող բանաստեղծության մեջ, որտեղ խենթությունը շատ ավելի վերաբերում է պատանեկան վառ հույսերին ու ոգևորությանը, կամ *կոպիտ* ու *դաժան* բառերի կիրառությունը «Ինձ համար չունես դու ոչ մի ժպիտ» տողով սկսվող բանաստեղծության մեջ, որտեղ խոսքը ներված, սպասված ու սիրված կոպտության ու դաժանության մասին է.

Ու խորհում ենք անվերջ, ու թախծում իրար հետ
Օրերի համար վառ, հույսերի համար *խենթ*... (117)

Թող լինես *կոպիտ*, թող լինես *դաժան*,
Միայն թե ապրես ինձնից անբաժան... (67)

Նմանատիպ է նաև *մեղսային* բառի գործածությունը «Դու քո տաճած սիրո մասին» տողով սկսվող բանաստեղծության մեջ, որտեղ բառը չի կարելի հասկանալ իր առաջնային-բառարանային իմաստով, որ նշանակում է. «1. Մեղք, հանցանք հանդիսացող: 2. Մեղքեր՝ հանցավոր արարքներ կատարած՝ կատարող: 3. Մեղավոր՝ հանցավոր ձգտումներ պարունակող: 4. Ախտավոր, մոլի, դատապարտելի»⁹: Բնագրում բառը գուցե և հականիշ է իր բառարանային իմաստին.

Դու քո տաճած սիրո մասին
Ոչինչ չես ասում,
Քո փոխարեն քո *մեղսային*
Աչքերն են խոսում... (38)

Նկատելի է նմանություն հայ քնարերգության գագաթներից մեկի՝ Վահան Տերյանի բանաստեղծության հետ.

Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր,

Գիշերի պես խորհրդավոր...¹⁰

Ճիշտ է նշվել, որ «ցանկացած խոսքային միջավայր օժտված է ձուլող ուժով, որն ստիպում է բառին կատարել այս և ոչ այն գործառույթները և գունագարդում է նրան գործունեության երանգով: Գրականության մեջ գործառույթների յուրօրինակությունը և անկրկնելիությունը որոշակի է դարձնում բառընտրությունը: Յուրաքանչյուր բառ, տեղ գտնելով այստեղ, ձուլվում է նրան, սակայն բանաստեղծության կազմում հայտնվելու համար բառի բառապաշարային բնութագիրը պետք է կառուցողականորեն գիտակցված լինի գրական առումով: «Գրականության ավանդական նկարագիրը, -գրում էր Պաուլը,- նկարագարդում է բառամթերքը: Միջնադարյան ժողովրդական էպոսը, պալատական ասպետական վեպը և այլն չեն անդրադառնում բառերի մի ամբողջ ծավալի: Բառը տեղ է գտնում գրականության մեջ որոշակի պայմանների դեպքում»¹¹:

Գնահատողական արժեքով օժտված բառերը դառնում են պատկերավորման զանազան միջոցների միջուկը: Մի քանի օրինակ. մակդիր. «Չուզեցի իմ *խախուտ* բախտի հետ քեզ կապել, Իմ կողմից կլինեիր այդ արարք *տմարդի...*» (45), «Երբեք բախտը, ինձ *կույր* բախտը չգթաց, Ա՛խ, օտար եմ միշտ աչքերը քո *խոսուն...*» (102), համեմատություն. «Հիշում ես՝ անցնում էինք ես և դու: Դու՝ ծագող արևի պես պայծառ, ես՝ մայր մտնող աստղի պես դժգույն...» (144), «Դու այլևս առաջվանը չես: Դու այնպես մեղմ էիր, ինչպես գարնան արևաշող առավոտը, իսկ հիմա ձմեռվա ցրտի ես նման...» (144), փոխաբերություն. «Անվերջ հեծեծում է չար հողմը, կանչում

է, կանչում է և ո՞ր. Մշուշը պատել է չորս կողմը, Եվ սիրտս մթին է ու լուռ...» (172), «Բայց նա հեկեկում միշտ անմխիթար, Լալիս է անհույս, անարև, օտար: Եվ գիշեր-ցերեկ հոգուս անկյունում Անվերջ իր տանջող գանգատն է անում» (137), փոխանունություն. «Անհույս, անարև մշուշների մեջ Հազիվ է շողում աստղիկը կյանքի, Եվ չկա գոնե լուսեղեն մի էջ Անծիր գիշերում իմ տառապանքի...» (172), շրջասություն. «Իմ ցավն աշխարհն է բռնել Կյանքիս դոյակն է վառում, Ինձ վիճակված է մեռնել՝ Չտեսած կյանք ու գարուն...» (91), չափազանցություն. «Դու ինձ նոր կյանք ես խոստանում, իմ բարեկա՛մ, իմ մտերի՛մ, Իսկ նա առանց խճի խայթի մղում է ինձ դեպի շիրիմ, Առանց վշտի նա կհյուսի կախադանիս համար պարան, Բայց ես նրան եմ լոկ սիրում, միայն նրան, նրան, նրան...» (122) և այլն:

Գնահատողական արժեքով օժտված բառերի միջոցով հեղինակն արտահայտել է զանազան հակադրություններ, ինչը պատահական չէ, քանի որ հակադրությունը «միաժամանակ ենթադրում է առարկաների ու երևույթների համեմատություն, սակայն համեմատության հետ առնչություններ ունենալով հանդերձ՝ հակադրությունն ընդգծում է ոչ թե տարբեր առարկաների ու երևույթների ընդհանրությունները, այլ նրանց այն տարբերությունները, որոնք հակադրական են»¹²:

Մի քանի օրինակ. «Լսի՛ր շրջապատին, քանի խելոք է նա, Իսկ երբ խենթի փոխվի, լարի՛ր ըմբոստ քնար...» (78), «Տիրապետի՛ր խոսքերի մեջ ժլատության արվեստին Ու նրանով արտահայտի՛ր շռայլությունն իմաստի...» (78), «Օիժաղի տեղ՝ դառը լաց, Ու ժպիտի տեղ՝ արտասուք...» (79), «Ինձ խելոք են կարծել, Խորհուրդ նստել ինձ հետ, Մինչդեռ վաղ եմ դարձել

Անհուսալի մի խենթ...» (101), «Ինչ որ չար եմ արել, պատահական էր այն, ինչ որ բարի արի, նրանով կամ լուկ ես...» (119):

Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, հեղինակը հակադրությունները հիմնականում կազմել է հականիշների միջոցով, սակայն հետաքրքրական է նկատել, որ ոչ միշտ: Ջահուկյանը հակադրել է նաև հասկացություններ, որոնք սովորական դեպքում ամեննին հակադրական չեն, և ստեղծել, կարելի է ասել, դիպվածային հականշության ինքնատիպ օրինակներ: Այսպիսին է պարագան «Չոգուս մեջ ահա մտել են վեճի» տողով սկսվող բանաստեղծության մեջ, որտեղ հակադրված են աշխարհաճանաչողության երկու տարբեր ճանապարհներ, և երկուսն էլ ճիշտ են՝ հաճախ իրարամերժ լինելով հանդերձ.

Չոգուս մեջ ահա մտել են վեճի

Շանճարեղ պոետն ու փիլիսոփան... (92)

Սակայն բանաստեղծն ու փիլիսոփան չեն կարող մշտապես հակադրվել, ի վերջո պիտի լրացնեն միմյանց, գուցե և միավորվեն միևնույն գաղափարի ու նպատակի շուրջ, և բանաստեղծությունն ավարտվում է հետևյալ քառատողով.

Նոր հուր կվառեն, նոր անշեջ քուրա,

Կհերկեն բոլոր դաշտերը խոպան

Եվ կիշխեն բոլոր սրտերի վրա

Շանճարեղ պոետն ու փիլիսոփան... (92)

Երբեմն մեկ բանատան մեջ հեղինակն օգտագործում է գնահատողական արժեքով օժտված մի քանի բառեր՝ դրանով ավելի ընդգծելով ասելիքը, ավելի ցայտուն դարձնելով հոգեվիճակը, ավելի խտացնելով գույները, ինչպես.

Չոգուս մեջ՝ մութ վրեժ ու հանցանք,

Գլխիս մեջ՝ ահավոր գառանցանք:

Լոկ մի քայլ՝ դառնալու խելագար,
Մարելու այս խարույկը տկար:
-Բայց արժի՞ լինել խենթ ու խռով
Մի անմիտ ցնորքի պատճառով (12):

Երբեմն էլ մեկ բանատան մեջ օգտագործել է գնահատողական արժեքով օժտված հոմանիշ բառեր՝ ստեղծելով հոմանշային կրկնության գեղեցիկ օրինակեր, ավելի համակողմանիորեն բնութագրելով առարկան կամ երևույթը.

Մեր դեմը վշտերն են, ցավերը, վերքերը,
Եվ սուտ է աշխարհը, և կյանքը մեր՝ սին...
Ամեն ինչ ունայն է, դատարկ է ու սին է,
Ամեն ինչ խաբկանք է՝ ընկած մեր առաջ...

(183)

Տեղին է նշել, որ «անհիմն է այն կարծիքը, թե հոմանիշների համատեղ օգտագործումը վնասում է խոսքի սեղմությանը: Համենայն դեպս, դա չի կարող վերաբերել գեղարվեստական լեզվին, ուր հոմանիշների այդպիսի օգտագործումով ընդգծվում է նախադասության առանձնապես կարևոր նշանակությունն ունեցող հասկացությունը, դա ներկայացվում է իմաստային անհրաժեշտ նրբերանգներով, ավելի է զորեղանում խոսքի արտահայտչականությունը»¹³:

Անվանողական և գնահատողական արժեքով օժտված բառերի, երբեմն դրանցով կազմված տողերի ամբողջական կամ մասնակի կրկնությունները ևս հատուկ են Ջահուկյանի լեզվին և խոսքին հաղորդում են լրացուցիչ հուզականություն և արտահայտչականություն, այսպես.

Ավելորդ են հիմա բոլոր խոսքերը ջերմ,
Ավելորդ են հիմա բոլոր խոսքերն անուշ... (145)

Կամ՝

Մահն է միայն փրկություն,
Մահն է հավերժ կանչում ինձ,
Մահը, մահն է ինձ դյուրում
Քո արևշող աչքերից... (145)

Ինչպես երևում է այս համառոտ քննությունից, Գևորգ Ջահուկյանի չափածոյում անվանողական և գնահատողական իմաստներով օժտված բառերն ունեն իրենց ուրույն տեղը: Գեղարվեստական պատկերի ստեղծման գործում այս միավորները հաճախ չեն զիջում մինչև իսկ հուզաարտահայտչական բովանդակությամբ բառերին, և շատ անգամ հենց սրանցով են պայմանավորված խոսքի բանաստեղծականությունն ու կատարելությունը:

Հավելենք նաև, որ Ջահուկյանը գերազանց էր տիրապետում բառընտրության արվեստին, և այն գաղափարը, որ «միտքը ճշգրիտ արտահայտելու նպատակով առաջացած բառընտրության խնդրի հաջող լուծման համար չափազանց օգտակար է ուշադրությամբ «գննել» և «լսել» բառերը՝ ուղեցույց ունենալով տվյալ լեզվում եղած իմաստաբանական փոխհարաբերությունները»¹⁴, լիովին հասու էր իրեն: Երբեմն բանաստեղծական մի փոքրիկ տան մեջ խտացրել է անվանողական, գնահատողական և հուզաարտահայտչական արժեքով օժտված բառեր միանգամից և պատկերն օժտել բազմաթիվ հոգեբանական ենթաշերտերով, ինչպես «Չէի տենչում գանձեր բազում» տողով սկսվող ոտանավորում, որը գուցե լավագույնս արտահայտում է այս անգամ արդեն Ջահուկյան մարդու սրտի խորքից արված խոստովանությունը.

Չէի տենչում գանձեր բազում

Եվ կյանքի փառք արևահաղթ,
Փոքրիկ մի սեր էի ուզում
Եվ նրա հետ փոքրիկ մի բախտ... (169):

Ծանոթագրություններ

1. Ю.А.Бельчиков, Лексическая стилистика, Москва, 1988, стр. 30.
2. Ա.Պապոյան, Ակնարկներ Պարույր Սևակի բառապաշարի և տաղաչափության, Ե., 1991, էջ 32:
3. Էդ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
4. Գ.Ջահուկյան, Բանաստեղծական գիրք, Ե., 2001, էջ 3: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ:
5. П.Г.Пустовойт, Взаимоотношение слова и образа, в книге Поэтическая стилистика, Воронеж, 1982, стр. 17.
6. А.М.Пешковский, Вопросы методики родного языка, лингвистики и стилистики, М.-Л. , 1930, стр. 158.
7. Հմմտ. Ա.Պապոյան, նշվ. աշխ., էջ 37:
8. Т.Г.Винокур, Закономерности стилистического использования языковых единиц, Москва, 1980, стр. 62-63.
9. Էդ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
10. Վ.Տերյան, Բանաստեղծություններ, Լիակատար ժողովածու, Ե., 1985, էջ 303:
11. Ю.Н.Тынянов, Проблемы стихотворного языка, Москва, 1965, стр. 90.
12. Պ.Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Ե., 1991, էջ 165-166:

13. Ս.Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի
նճարանության, Ե., 1984, էջ 77:
14. Ю.А.Бельчиков, Лексическая стилистика, Москва,
1988, стр. 108.

Karine Arakelyan- The Object -conceptive and Appreciative Words in the Poetical Book of G.Jahookyan.-The article deals with object-conceptive and appreciative words in the poetry of G.Jahookyan. It is very rich and pithy. In creating the poetical image these lexical units do not yield to words with expressive-emotional meanings. The poetical way of thinking of G.Jahookyan is closely connected with using of object – conceptive and appreciative words, which create unique beauty.

ԲՆԱՆԿԱՐԻ ԿԵՆՏՐՄԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ
ՄԵԶ*

Առաքելյան Կարինե
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Բառապաշարային տարբեր խմբեր և դրանց ոճական կիրառությունները քննելիս՝ գեղարվեստական գրականության մեջ հաճախ հանդիպում ենք հետաքրքիր երևույթի: Բառեր, որոնք արտահայտում են այս կամ այն ոլորտի, բնագավառի պատկանող առարկաներ, իրեր, երևույթներ, հասկացություններ, հեղինակային խոսքում կարող են հանդես գալ իբրև մի կուռ ամբողջություն և ունենալ ոճական ուրույն դեր: Այստեղ ուզում ենք անդրադառնալ XX դարասկզբի արևմտահայ տաղանդաշատ քնարերգու Միսաք Մեծարենցի չափածոյի բառապաշարում առկա երկու բառախմբերի, որոնք ինքնին հույզերի կամ զգացումների անվանումներ չեն ներառում, հուզաարտահայտչական գունավորում չունեն, սակայն խոսքային համապատասխան միջավայրում ունեն ոճական անգնահատելի արժեք և գործուն

* Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 148-159:

մասնակցություն բանաստեղծական պատկերի կերտման գործում:
Խոսքը բուսանունների և կենդանանունների մասին է:

Մեծարենցի բնութենապաշտ հեղինակ լինելու մասին շատ է խոսվել ու գրվել: Նրա բանաստեղծությունների մի սովոր մասը նվիրված է բնության նկարագրությանը: Սա, անշուշտ, ինքնանպատակ չի կատարվում: Քրոջ ամուսնուն՝ Վարդան քահանա Արսլանյանին ուղղված նամակում Մեծարենցը բացում է փակագծերը՝ գրելով. «Ծիածանի առթիվ գրված նամակը անգամ մըն ալ կը կարդամ զգածվելով. «Ինչո՞ւ Տիեզերքի հոգիին հետ չես խոսակցիր» կը գրեք. բայց դիտելի է որ իմ գրեթե բոլոր քերթվածներս այդ մեծ խոսակցության կը նկրտին, որքան որ ալ իմինս չըլլա Աստծո հետ դեմ հանդիման խոսակցություն, բայց ո՞չ ապաքեն Աստված ամեն տեղ է. Ձմրան Պարզ գիշերվան մեջ հծծած աղոթքս ու Արևին ուղղած պաղատանքս իրեններուն, հետևաբար և իրեն համար էր. ի՛նչ երջանկություն, տերևի մը խարշափին մեջեն տեսնել տիեզերական գործության գաղտինքը ու այդ փոքրիկ մասնավորեն մեկնիլ դեպ ի անհունը...»¹:

Մեծարենցի գրչի տակ միս ու արյուն առած բնության զանազան իրեր, առարկաներ, երևույթներ, բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչներ հաղորդ են դառնում

¹ Մ. Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1981, էջ 288: Այսուհետև այս գրքից արվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ:

մարդկային հոգու ալեբախումներին, օգնում անհատին ճանաչելու սեփական ներաշխարհը և ինքնաճանաչողությունից հասնել անանց ճշմարտությունների ճանաչման: Այս առումով կրկնակի է կարևորվում բուսանունների և կենդանանունների դերը՝ թե՛ իմաստային, թե՛ լեզվաոճական տեսանկյունից:

Նախ խոսենք Մեծարենցի չափաձոյում առկա բուսանունների մասին: Այստեղ պիտի նշենք, որ բուսական աշխարհի երևույթներն, առհասարակ, ինչպես *ծառը*, *ծաղիկը*, *թուփը*, *հասկը* և այլն, հեղինակի չափաձոյում ունեն մեծ դեր ու կշիռ: Դիմենք փաստերին: *Ծառ* գոյականը Մեծարենցի չափաձոյում հանդիպում է քսանութ անգամ, իսկ *ծաղիկը*՝ իննսուներեք, ինչպես նաև այս բառերով կազմված այլ բարդություններ: Նշված բառերը կիրառված են ամենատարբեր իմաստներով՝ անվանողական, փոխաբերական, հուզաարտահայտչական և այլն:

Բնության նկարագրությանը նվիրված բազմաթիվ բանաստեղծություններից է «Գետափի երազանքը»: Այստեղ արևոտ ժայռերը, գետը, գետափնյա ծառաստանները, այսուայնտեղ տարտղնված ծաղիկները քնարական հերոսի համար ստեղծում են լավագույն մթնոլորտը՝ երազելու, մտքով հասնելու երանաստան և վայելելու պահի բերկրանքը: Սրանում, ի

թիվս այլոց, նրան օգնում են հնամենի ծառեր՝ մտերիմ ու սիրող հարազատի ջերմությամբ.

Եվ հնամի *ծառեր* գյումրույթ միայնությանց ընդմեջեն,
Կ'արտածորեն մուշկի բույրեր ու ժպիտներ ալ բուսոր.
Կիսամըրափ կ'երագեմ, զիս աղաղակներ կը կանաչե՛ն...
(44)

«Ցայգանվագ» բանաստեղծության մեջ արևելյան պերճ գիշերային պատկերն ստեղծելու, նաև սիրահարի հոգեվիճակը ճիշտ բնութագրելու գործում դարձյալ մեծ է ծառերի ու ծաղիկների դերը.

Ու կը շրջի անտես ոգին
Հոն անտառի *ծառերուն՝*
Խարշափն որոնց, թույլ, հեշտագին,
Կը նըվագե օրորուն...
...Դեռ մինչև ե՞րբ, ըսե՛, հոգիս՛,
Դեռ մինչև ե՞րբ տառապիմ
Պրպտելով անըջանքիս
Թոշ *ծաղիկը* մտերիմ... (34)

«Ի՛նչ արբեցությամբ...» բանաստեղծության մեջ առկա են ենթակայի կրկնության հետաքրքիր դեպքեր և դարձյալ կրկնվող ենթական մի դեպքում *ծառն* է, մյուս դեպքում *ծաղիկը*, երրորդ

դեպքում *առուն*: Այս կրկնությանն էլ հեղինակը դիմել է զարնան, բնության զարթոնքի և վերակենդանության գեղարվեստական պատկերն ամբողջացնելու համար, ինչպես.

Ի՛նչ արբեցությամբ, *ծառեր*, լույսին մեջ

Ծառեր հովին մեջ և անձրևներուն,

Վարսավոր *ծառեր*, *ծառեր* երկնուղեշ,

Ու *ծառեր* մատաղ՝ ծովածուփ կանանչ

Ցորենի ցանքին գոգն ինկած շվարուն՝

Ամենն ալ կյանքին կ'ըմպեն հորդ ճաճանչ... (131)

«Իրիկունս» ոտանավորում հանդիպում ենք *ծառ* գոյականի հոգնակի թվի ոչ սովորական կազմության, ինչի շնորհիվ խոսքն ավելի մոտենում է ժողովրդականին, այլև օժտվում յուրօրինակ գրավչությամբ, աշխուժությամբ, բանաստեղծականությամբ. «*Ծառոց* ետին ճաճանչավուխտ պաստառ մըն է արևն ոսկի...» (127):

Մեծարենցի քնարերգության մեջ առկա են *ծառ* արմատով կազմված հետևյալ բառերը՝ *ծառ ու ծաղիկ*՝ օգտագործված չորս անգամ, *ծառուղի* և *ծառուտք*՝ մեկական անգամ:

Ծաղիկ գոյականն, ինչպես նշեցինք, Մեծարենցի չափածոյում հանդիպում է իննսուներեք անգամ, օժտված է իմաստային ամենատարբեր նրբերանգներով և բոլոր դեպքերում էլ

պատկերաստեղծ ու ոճաստեղծ է: Հիշենք «Երագի պահեր» բանաստեղծությունը, որտեղ *ծաղիկն* օգտագործված է փոխաբերական իմաստով և մեծապես նպաստել է խոսքի բանաստեղծականացմանը.

Ես կը փնտռեմ մըտամուրը

Ողձանույշի ձեռքն այն փափուկ, երկնային՝

Որ պիտի տար ինձի *ծաղիկն* ըսփոփանքին... (36)

«Անանուն» ոտանավորի հերոսը *ծաղիկն* է, ընդ որում՝ անանուն *ծաղիկը*, որի հետ զրույց է բացում հեղինակը: Բանաստեղծության գրության հանգամանքների մասին Հրանդ Բալույանը հայտնում է. «Երեկո մը Պոլիս լռակյաց փողոցի մը պատի կողքին համրաքայլ Մեծարենց կը կարդայի: Բանաստեղծ Վ. Թաթուրը հանդիպեցավ, Միսաքի ամենամտերիմ ընկերներեն մին ու սկսավ Մեծարենցի կյանքը քրքրել: «Նոր Տաղեր» հատորիկը ձեռքես առնելով առաջին բացվածքին Անանուն վերնագրին քերթվածը ու ըսավ.

«Կյանքիս մեջ այդ օրը չեմ կրնար մոռնալ. Թոփ Գաբու Մեծարենցը տեսնելու գացած էի. առաջարկեց քիչ մը դաշտ բարձրանալ, ճամբան ցորենի արտի մը եզերքը պատահմամբ ցանկապատի մը տակ պզտիկ ծաղիկ մը գտնելով հարցուց.

– Վայրի՛ ծաղիկ, անունդ ի՞նչ է:

Ու քիչ անդին ծունկերու վրա «Անանունը» ստեղագործելով
վերջավորության՝

Գիտե՞ս, *ծաղիկ*, անունն ի՞նչ է

Դողին, գոր քեզ տըվավ հովիկ,

Ու ձայնին որ զիս կը կանչե...

Այդ պահուն առաջին անգամ համարձակեցավ ինձ ըսել.
«Վահրա՛մ, քիչ քիչ պիտի հատնիմ... («Նավասարդ»,
պարբերական, 1925, պրակ Գ, էջ 75)» (380):

Այս փոքրիկ բանաստեղծության մեջ *ծաղիկն* օգտագործված է հինգ անգամ, ինչպես նաև օժտված է գեղեցիկ մակդիրներով՝ երեքն արտահայտված ածականով, մեկը՝ դերբայական դարձվածով, ինչպես. *հպարտ ծաղիկ, սպիտակ, կաթ ու մազտաքե բուրող ծաղիկ* և այլն:

«Եկուր» բանաստեղծության քնարական հերոսը իր սիրո առարկային համեմատում է *ծաղկի* հետ, կյանք և երազ պարզևող *ծաղկի*.

Թո՛ղ որ նայվածքիդ ըմպեմ բոցը ջինջ,

Մոտեցի՛ր, քնքույշ *ծաղիկ* կը կյանքիս.

Համբույրի մը մեջ մոռնամ ամեն ինչ... (154)

«Տեսիլ» ոտանավորում հեղինակը մարդկային հոգին համեմատում է կապույտ երկնքի հետ՝ այս երկուսը նմանեցնելով

աներկրային քույր *ծաղիկների*, որոնք մշտապես կողք կողքի են և ժպտում են միմյանց, քանի որ մարդն էլ բնության անքակտելի մասնիկն է, և այլ կերպ չէր էլ կարող լինել.

Երբեմն ամպոտ երկինք մը՝ շո՛ւտ կը պարզըվի,

Ու լեղակի լիճ մը կ'ըլլա՝

Հոգվոյս շլացիկ ծովուն դիմաց:

Եվ իրարու կը ժպտին

Լիճն այն լեղակ ու ծովն հոգվոյս,

Քույր *ծաղիկներ* աներկրային... (163):

Ծաղիկը բազում այլ բանաստեղծություններում ևս խոսքի պատկերավորման ատաղձն է դառնում: «Ծաղկե քառյակ» բանաստեղծության մեջ կան առավելական համեմատության հրաշալի օրինակներ: «Առավելական ենք կոչում այն համեմատությունը, որի մեջ համեմատվող առարկան իր հատկանիշներով ավելի բարձր է ներկայացվում համեմատյալից (մերժողական դեպքում՝ ավելի ցածր)»²: Այսպես.

Նկարագեղ ոճով զծված

Պատկերն հուզիչ է նվազ,

Քան դաշտերե լայնատարար

Քաղված *ծաղիկն* հեշտանազ... (138):

² Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հատոր II, Երևան, 1991, էջ 14:

Ջուգահեռ է տարվում բնության և քերթության միջև: Այս գուգահեռն անշուշտ նոր չէր, տարվել էր դեռևս միջնադարում, մասնավորապես Հովհաննես Մարկավագ Իմաստասերի «Բան Իմաստութեան...» պոեմում: Եթե Մարկավագի պոեմում բնությունը խորհրդանշում է թռչունը՝ սարեկը, ապա Մեծարենցի բանաստեղծության մեջ այն խորհրդանշում է ծաղիկը: Մարեկի մասին, որի երգը դյուրում է իրեն, Իմաստասերը գրում է.

Իսկ արուեստի դու երաժիշտ ամենահնար,
անվարդապետ,

Ինքնաբաւ, ինքնուսումն, վայրաբնակ և անքաղաք,
Անմերձ և մօտաւոր, ուրախարար լըսասիրաց...³

Թռչունը չի մեղանչել Աստծո դեմ, մնացել է իր բնական վիճակի մեջ և պարզևատրվել հայտնությամբ, մինչդեռ մարդուց բարձր արվեստի հասնելու համար պահանջվում է ճիգ, ջանք, տքնություն: Եվ սակայն տքնության անքուն գիշերներից հետո էլ.

Զի վարժումն և կրթութիւն ոչ ժամանէ առ բնութիւն...⁴

Ահա պոեմի բուն գաղափարը: Նույն գաղափարն է հաստատում և Մեծարենցի ոտանավորը.

³ Հայ դասական քնարերգություն, հատոր I, Երևան, 1986, էջ 212:

⁴ Ն.տ., էջ 215:

Հո՛ն, բաժակին մեջ *ծաղկին*
Ոսկեփոշի թևով գեջ,
Միրով պատած սիրտի մ'անգին
Կ'առնե պատկերն ելևեջ:
Այդ պատկերը շատ ավելի
Հուզիչ է՝ քան քերթողին
Հույզով մ'անհուն, անպատմելի
Գրած տողերն քառյակին (138):

Մեծարենցի չափածոյում հանդիպում ենք *ծաղիկ* արմատով բաղադրված հետևյալ բառերին՝ *ծաղիկ-ծաղիկ, ծափ ու ծաղիկ, ծաղիկ ու հասկ, թուփ ու ծաղիկ, ծաղիկե, ծաղկալից, ծաղկածին, ծաղկահեր, ծաղկահյուս, ծաղկանկար, ծաղկանոց, ծաղկանույշ, ծաղկապատար, ծաղկաստան, ծաղկավետ, ծաղկե, ծաղկել, ծաղկեցնել, անծաղիկ, ոսկեծաղիկ*:

Բնագրային մի քանի վկայություն. «Ծառոց ետին ճաճանչավուխտ պաստառ մըն է արևն ոսկի, Ուր *ծաղկածին* ուղեշներու ճամուկ հյուսքը կը սողոսկի» (127): «Ու ծառերու *ծաղկանըկար* սրահակն հեշտին Ընդնշմարել կու տա լիճին կույսը խաժակ» (102): «Ի՛նչ արբեցությամբ ամենմեկ արոտ, Ամենմեկ բլրակ՝ իր կանանչ ճակտին կը կապե երփնած *ծաղիկե* նարոտ» (131): Ուր *ծաղկահեր* գլխով աղջիկն ըսպիտակ Մահիճին մեջ

ընկողմանած՝ աչքը բաց՝ Ձեռքը թուղթին՝ թուղթը սրտին՝
կ'երագե...» (171):

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ բառերի մեծ մասին ավելի բնորոշ է կիրառությունը բանաստեղծական խոսքում: Մրանք, կարելի է ասել, բանաստեղծական բառեր են, թեպետ ինչպես պնդում էր Վինոկուրը. «Բանաստեղծական և գործնական բառերի միջև սկզբունքային տարբերությունն դնող տեսությունը ոչ մի քննադատության չի դիմանում: Բանաստեղծական բառը նույնպես գործնական բառ է, միայն թե մատուցված, այսպես ասած, այլ քողի տակ»⁵:

Ծաղիկ բառի կրկրնության ևս հանդիպում ենք հեղինակի չափածոյում, ինչն արվում է հատուկ նպատակով: «Հյուղին գարունը» բանաստեղծության մեջ կրկնությունը նպաստել է գարնան գեղեցկությունների և բնության զարթոնքի համակողմանի ու ամբողջական նկարագրությանը.

Ծաղիկ մըն էր, ա՛ն ալ, փափուկ ու բուրյան.

Ծաղիկ՝ վարսերն ոսկինարգես՝ ու *ծաղիկ*՝

Թարթիչներն ու աչքեր, ճակատը շուշան,

Եվ այտերը կակաչ, բերնակն ատրուշան,

Թուշը շափրակ, այծտերևի՝ իր ձեռքեր... (108)

⁵ Քաղվածքն ըստ Օ. В. Загровская, Об эстетической функции языка, в книге – «Поэтическая стилистика», Воронеж, 1982, էջ 9:

Այստեղ *ծաղիկից* գատ առկա են նաև ոճական արժեքով օժտված բուսանուններ *շուշանը, կակաջը, այծտերևը*, առկա է և *շափրակը*: Աճառյանի Հայերեն արմատական բառարանը այս բառը մեկնում է իբրև թագ կամ պսակ, «որից շափրակագգեաց «պսակաւոր»⁶: Մեծարենցի ոտանավորում բառս օգտագործված է ծաղկի պսակ կամ բաժակ իմաստով, և դարձյալ ակնհայտ է ոճական գործառույթը:

Ուշագրավ է նաև *ատրուշան* բառի գործածությունը: Ակնհայտ է, որ այստեղ այն օգտագործված է փոխաբերական իմաստով, որ նշանակում է. «անմար հուր, ոգևորության աղբյուր»⁷:

Ատրուշան բառի՝ փոխաբերական այս իմաստով գործածության հանդիպում ենք Մեծարենցի գրեթե ժամանակակից արևմտահայ մեկ այլ տաղանդաշատ քնարերգու Պետրոս Դուրյանի «Մնաս բարյավ» բանաստեղծության մեջ.

Աչերդ սիրո Ատրուշան
Մատներդ էին գիրգ շուշան
Այտերդ վարդի նոր թերթեր,
Նայվածքեդ ծներ նոր եթեր...⁸

⁶ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977:

⁷ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. I, Երևան, 1969:

⁸ Պ. Դուրյան, Երկեր, Երևան, 1947, էջ 73:

Տեղին է հիշել նաև Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմից մի հատված.

Միրո հնոց,
Կրակ ու բոց-
Էնպես աչքեր թե ժպտուն,
Մարդու համար
Օրվա պես վառ
Գիշերները լույս կը տան...⁹

Բառընտրության հարցում Մեծարենցը չափազանց բծախնդիր է. նա հաճախ է բառի մեջ հայտնաբերում գրեթե մոռացված կամ քչերին հայտնի իմաստներ: Հիշենք *հյույժ* բառը: Հեղինակն իր ողջ չափածոյում այն օգտագործել է միայն մեկ անգամ «Միրո ուղին» բանաստեղծության մեջ՝ իր ոչ հաճախակի հանդիպող իմաստով.

Քընքույշ *հյույժեր* կը փթթին հոն
Ու հարսնուկներ հըրահոսուն.
Հոն կը հյուսեմ երգ ու գեղոն,
Ե՛ս, սիրավառ, խանդո՛տ գուսան (147):

Համաձայն Աճառյանի բառարանի՝ *հյույժ* նշանակում է նաև «թաւուտ, խարձ, եղեգնուտ»¹⁰: Այս իմաստով է հեղինակը բառն

⁹ Հ. Թումանյան, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 1958, էջ 136:

օգտագործում իր բանաստեղծության մեջ, ինչը մեկ ավելորդ ապացույց է նրա տաղանդի և լեզվի խորը իմացության: Անկասկած պիտի համաձայնել այն կարծիքին, որ «գրողի խնդիրն է ընտրել հասկացության իմաստին համապատասխանող ճշգրիտ, դիպուկ բառեր»¹¹:

Մեծարենցի քնարերգության մեջ հանդիպում ենք բազմաթիվ բառանունների՝ խոսքային ամենատարբեր իրադրություններում: Մի դեպքում կարող են առանձնակի փայլ հաղորդել պերճ բնության նկարագրությանը.

Տունկեր *ռեհան ծաթրինի*
Կը ծըխեն *խունկ* մը վայրի,
Որ կ'ամպանա ու կ'այրի
Բուրվառին մեջ արփենի (83):

Մի այլ դեպքում կարող են թարգման լինել մարդկային ամենանուրբ զգացումների ու փոխհարաբերությունների.

Բամբիռի ծափեր, *վարդի* թերթ ու շեր,
Բուրյան շոգիներ *համպար* ու *մուշկի*,
Որ կ'երփնագօծեն երեկվան հուշեր (93):

Մեծարենցի քնարերգության մեջ շատ են այնպիսի բանաստեղծությունները, որոնց որևէ հատվածը (մինչև իսկ

¹⁰ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977:

¹¹ А. Н. Толстой, Полное собрание сочинений, т. 13, Москва, 1949, с. 434.

ամբողջական բանաստեղծությունը) կազմված է չափազանցություններից: Այսպիսին է «Տեսիլ» ոտանավորի վերջին հատվածը, որտեղ քնարական հերոսը բազմաթիվ չափազանցությունների միջոցով նկարագրում է իր սրտի տիրուհու արտաքին գեղեցկությունը, ինչը երևում է շլացուցիչ գույներով վրձնած կտավի պես: Եվ այս կտավի վրա խիստ է կարևորվում բուսանունների, նաև բնության այլ առարկաների դերը.

Մազերդ անթոշ *նարկիս* կ'ըլլան.

Ճակատըդ՝ *ձյուն* կատարներուն՝

Ջոր վարդագնեց *արփն* իրիկվան.

Եվ աչքերդ կ'ըլլան գույգ մը *ծառուղիներ՝*

Ուր կը ճըչե *թռչնակն* արձակ ու ճովողուն

Իմ խայտանքիս. ու շուրթերդ ալ

Ոսկեզօծ եզրը բաժակին՝

Ուր կը հակին,

Վարդ ու *հարսնուկ*, *կակաջ*, *նարդոս*, *գարնածաղիկ*,

նունուֆար... (163-164):

Մինչ այժմ բերված օրինակներում ծառի, ծաղկի, բուսանունների ու կենդանանունների կիրառությունը կապված էր

դրական երանգավորման հետ, սակայն չափածոյում սա պարտադիր պայման չէ, և կան կիրառության նաև այլ դեպքեր: «Մենպոլիզմ»-ը երգիծական բանաստեղծության մեջ արևմտահայ գրական կյանքը ներկայացվում է որպես մի պարտեզ, որտեղ ծաղիկները՝ գրողներ, քննադատներ և այլոք, զրուցում են, արտահայտում իրենց կարծիքները: Սա, կարելի է ասել, ոչ թե բանաստեղծություն է, այլ չափածո անդրադարձ իր ժողովածուների մասին եղած կարծիքներին: Ոտանավորում հանդես են գալիս ժամանակի գրական, մշակութային գործիչներ՝ բոլորն էլ կեղծանուններով, որոնց վերծանմամբ մեր գրականագիտության մեջ զբաղվել են Վ. Ալազանն ու Վ. Նորենցը:

Այստեղ նկարագրված պտուղներն ու ծաղիկները չունեն իրական ծաղիկների հմայքն ու գեղեցկությունը, նրբությունն ու քնքշությունը: Սրանց մի մասը գրական անդաստանում հայտնի մարդիկ են՝ գոռոզ, ինքնահավան ու անհանդուրժող, որոնք բարձրավիզ հավակնոտությամբ կարող են չորացնել շրջապատի նորաբողբոջ ծիւերը, իսկ մյուս մասը մարդկային ստեղծագործություններ են, որոնք չեն ստեղծվել տաղանդի ուժով, սիրով ու ներշնչումով, այլ վաճառքի համար, միանգամայն շահադիտական մղումներով՝ նպաստելով գորշ միջակության տխրահռչակ փաղանգի առաջխաղացմանը.

Պարտեզին մեջ կար ... սոխ, սխտոր, բանձար,
Ներեցե՛ք ... կաղամբ ալ, և անպատճառ
Ամեն ինչ՝ որուն կ'ըլլար միշտ վըճար,
Ձոր կողովալիւր ծախելուն կար ճար:
Կար քիչ մ'ամեն բան, ածու մ'ալ ծաղիկ
Ձոր կը հոտոտենք, թէ չըսրողոյիք... (177)

Հեղինակի չափածոյում տեղ են գտել նաև բուսական աշխարհի բացասական ներկայացուցիչները, արդեն ոչ մեծ քանակով: Սրանք ևս մարդկային կյանքում ունեն իրենց դերն ու նշանակությունը, երևում են ավելի ցավի ու տխրության պահերին, հաճախ ճնշում, հաճախ հուսահատեցնում: «Անդարձ» բանաստեղծության մեջ Մեծարենցը զուգահեռ է անցկացնում ձանձրոյթի ու մոլախոտի, նաև փշի ու սրտի կսկիծի միջև: Ջգացողություններ, որոնց դեմ պետք է պայքարել, որոնց պետք է արմատախիլ անել, ինչպես փուշն ու մոլախոտը, ինչ, սակայն, երբեմն չի հաջողվում, ինչը գուցե ևս խորապես մարդկային է.

«Կը սիրե՛ զիս, չի սիրեր, քի՛չ մը, բընավ ... տարփագի՛ն...»

Մեկիկ մեկիկ փետտեցի, *գաղձերուն* հետ ձանձրոյթիս

Եվ արյունող *փուշին* հետ սրտիս մխվող թախճանքին (91):

Բուսանունների մասին խոսելիս անհրաժեշտ է առանձին անդրադառնալ *վարդ* բառին, քանի որ այն Մեծարենցի քնարերգության մեջ և՛ հաճախակի՝ ընդհանուր առմամբ քառասունչորս, կիրառություն և լեզվառճական որոշակի նշանակություն ունի: Հաճախակի է *վարդի* հատկապես մակդրային կիրառությունը: Գոյականական մակդիրների մասին խոսելիս պիտի նկատի ունենանք մի հանգամանք: «Գոյական անվան համար որոշչային գործառությունը ածանցիկ նշանակություն ունի: Իր ու իրողություն անվանող բոլոր խմբի բառերը չէ, որ կարող են մատնանշել հատկանիշ ու դառնալ որոշիչ, այլ միայն նրանք, որոնք ինչ-ինչ կապակցություններում կորցնում են գոյականական բովանդակությունը և ստանում իրենց էությանը բնորոշ հատկանիշի այլևայլ գաղափարներ»¹²:

«Իրիկնավերջ» բանաստեղծության մեջ կարդում ենք.

Զի կը սփռե հարսն արփավետ՝

Համայնին վրա՝ մազերն իր *վարդ* (182):

Այս երկատողը մի ամփոփ փոխաբերություն է, որտեղ արեգակի ճառագայթները՝ մազերը, բնորոշված են *վարդ* մակդիրով: Համայնը, ողջ բնությունը, բոլոր արարածները ցնծում են այս սքանչելի վայրկյանին, երբ արևի վերջին ճառագայթներն

¹² Ա. Պապոյան, Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Երևան, 1970, էջ 277-278:

ավելի նուրբ են, քնքուշ, մտերիմ, շուտով կփակվեն վարդի պես՝
իրենց բույրն ու ջերմությունը թողնելով հոգիների խորքերում:

Հիշենք մեկ այլ օրինակ «Տերևները կ'ըսեսին»
բանաստեղծությունից: Այստեղ էլ գոյականական մակդիրները
մեծապես նպաստել են դեռատի աղջիկներին բնութագրելիս՝
վարդը նկարագրելով արքայական գեղեցկությունը, իսկ *մշուշը*՝
ճերմակությունն ու խորհրդավորությունը.

Ոսկի մատիկդ հըպեցիր

Եվ համբույրիդ դըրիր բոց,

Իրիկվան մեջ այս հեշտին,

Մարիներուն ու մարդոց,

Աղջիկներուն՝ կաթնաձիր

Ու *վարդ մըշուշ* ճակատին... (122)

Մեծարենցի քնարերգության մեջ առկա են ամենատարբեր
«վարդեր»՝ խոսքային միանգամայն տարբեր իրադրություններում:
Սրանք օժտված են զանազան ինքնատիպ մակդիրներով և
իրականացնում են ոճական բազմաթիվ գործառույթներ:
Հետաքրքրական է, որ այս բազմազանության մեջ հեղինակն ունի
իր նախընտրած, իր սիրելի վարդը, որի մասին խոսում է
անդրանիկ բանաստեղծություններից մեկում: Այս ոտանավորը,
որը վերնագրված է «Դեղին վարդեր», երևան է հանում

հակադրությունը դեղին և մյուս «վարդերի» միջև, պարզաբանում հեղինակի հակվածության պատճառները հանդեպ դեղին վարդերը, որոնք բանաստեղծության մեջ բնորոշված են մի շարք մակդիրներով՝ ածականական, դերբայական դարձված և այլն.

Անհուսության դալուկն հագած դժգո՛ւյն վարդեր,

Չձեզ հավետ պիտի սիրեմ ես սրտագին.

Ու միշտ սիրել պիտի չուզե իմ դառն հոգին,

Կարմիր ու ձյուն ճերմակ վարդերն ուրախաբեր (24):

Հետաքրքրական է «Մեռելոց» ոտանավորը՝ այլաբանություն՝ սկսյալ վերնագրից մինչև վերջին տողը: Քնարական հերոսը մեկը մյուսի հետևից բաժանվում է իր սերերից: Այստեղ սիրած էակներին մարմնավորում են վարդերը: Սպիտակ վարդը սատչում է ձմռանը, «դումասկյան» վարդը նվաղում, աշնան շունչը հարվածում է դեղին վարդին: «Վարդերից» մնում է միայն հիշատակ, խորը կսկիծ և տվայտանք: Հեղինակը գրում է.

Գարուն մըն էր, և համբույրով մը բացված

Դամասկյա՛ն *վարդ*, զինով արփին գուղջ գուլեն,

Նըվաղեցավ ուրիշ սեր մը, սե՛րն, Աստվա՛ծ՝

Չոր թաղեցի՝ հարուստ՝ կյանքին կանչելեն (101):

Ավելորդ չի լինի հիշել Մեծարենցի չափածոյում առկա *վարդ* արմատով բաղադրված բառերը, *վարդաբույր*, *վարդագին*,

վարդագնել, վարդագույն, վարդե, վարդավետ, վարդենի, վարդենիք, կաթվարդ, կաթ ու վարդ և այլն:

Մի քանի բնագրային վկայություն. «Մն սաթի գույն վարսերուդ թովքը բոլոր, Ու ծաղկալից հոգվույդ շունչը *վարդաբույր*, Լեցուր գրկիս, լեցուր սրտիս մեջ թափուր...» (162), «Ճակատըդ՝ ձյուն կատարներուն՝ Ջոր *վարդագնեց* արփն իրիկվան...» (163), «Այսօր *կաթվարդ* երազե մը արթնցա, Գիրկս անսահման գրգանքներու է բացվեր...» (98), «Դո՛ւն՝ որ գիշերուն մեջ հեծեծագին Կյանքի *վարդենիքն* ինձի ցուցուցիր...» (161) և այլն:

Մեծարենցյան բնանկարի կարևոր բաղադրիչ մաս են նաև կենդանանունները: Բնության, նրա ամեն մասնիկի հանդեպ անհուն սեր տածող հեղինակը չէր կարող անտարբեր լինել կենդանիների նկատմամբ: Այս մասին վկայում են և ժամանակակիցները. «Կենդանիները շատ սիրելուն – մանավանդ էշն ու գորտը – իրեն ալ դպրոցի շրջանակին մեջ կենդանիի անուն մը փոխ կուտան՝ կոչելով մի սագ»¹³:

Ասվածի արձագանքները գտնում ենք նաև «Մենպոլիզմ»-ը երգիծական բանաստեղծության մեջ, որտեղ Մեռճանը՝ գրող և քննադատ Մերուժան Պարսամյանը, մեղադրում է Մեծարենցին «գռեհիկը»՝ տվյալ դեպքում կենդանանունները, քնարերգության

¹³ Մոր և ընկերների վկայություններից, Միսաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում գրքում, Երևան, 1986, էջ 85:

նյութ դարձնելու մեջ՝ միաժամանակ մեծարենցյան «գոեհիկին» հակադրելով իր սալոնային «գեղեցիկը».

Ես ժանյակներու անհուն կրպակն եմ,

Եվ ազնրվական կըրունկ կը պագնեմ.

Մինչ անոնք կ'երգեն *գորտ, շերամ, պաճար,*

Ամեն ինչ՝ որ է գոեհիկ, անհանճար,

Անոնց գրչակը կ'եղծե չարաչար (177):

Պարսամյանական «գեղեցիկին» Մեծարենցն անդրադառնում է նաև «Քննադատությունը» հոդվածում՝ գրելով. «Ի՞նչ է այդ երիզը, ցանկապանը կանացի գուլպայե տարբեր նշանակություն՝ մըն ալ ունի արդյոք ինձի անծանոթ: Ո՛Ֆ, սա ժանյակը՝ որուն մեծաքանակ վաճառողն է Պարսամյան՝ որ փութաց մասնաճյուղ մըն ալ բանալ վերջերս... Դերերը որքա՛ն կը շրջվին երբեմն, բանաստեղծը՝ որ ամեն գեղեցիկ բան սիրցնելու պաշտոն ունի, ատել կու տա երբեմն իր երգած իրերը. այսպես չէ՞ր որ մեր նախորդ սերունդին բանաստեղծները սրբապղծեցին ու ատելի դարձուցին «սոխակ»-ը, «առվակ»-ը նն, և այսպեսով չէ՞ որ Պարսամյան ալ խեղդամահ անել կը նկրտի ժանյակն ու իր նմանները...» (260):

Մինչդեռ Մեծարենցը ավելի սիրելի է դարձնում բնությունը՝ ամեն քայլափոխի հայտնաբերելով նորանոր գեղեցկություններ: Բնության համանվազի մեջ հեղինակը «լսում է» ամենաանշան

թվացող ձայնը և այդ ձայնը լսելի ու սիրելի դարձնում ընթերցողին, ինչպես «Ջրտուր» բանաստեղծության մեջ.

Պարտեզներուն վրա կ'իջնէ թեթև քողք մը միգամած,

Ու *ծղրիղներ*՝ լուսնակով արբշիռ անվերջ կը խոսին (94):

Մեկ այլ դեպքում Մեծարենցը կենդանանունը դարձնում է գունանկարի բաղկացուցիչ մաս և այն տեսանելի ու շոշափելի դարձնում ընթերցողին.

Աղավնիներ, լաջակներու պես մետաքսե գունագեղ,

Ճամբէ ճամբա կը թռչըտին թույլ ծածանքով

վաղանցիկ (106):

Երբեմն կենդանանուններն օգնում են հեղինակին խոսքը հումորով համեմելու: Այսպիսի դեպքի հանդիպում ենք «Այգային» բանաստեղծության մեջ.

Որմին մոտիկ սըրինգն անվերջ՝ մեղեդիներ արույրե,

Որմին վըրուն՝ *աքլորն* ըսթափ գարթոնքի ճիչն անսահման,

Որմին դիմաց աղջընակ մը տարփոտ երգեր կ'ոլորե (106):

Հասկանալի է, որ սթափ վիճակը ճնշող մեծամասնությամբ հատուկ է մարդուն, սակայն այստեղ սթափ ածականը աքաղաղի՝ «աքլորի» մակդիրն է, որը հիշեցնում է մարդկանց, որ արդեն առավոտ է: Նա զգաստ է իր պարտականությունը կատարելու մեջ,

չի թերանում: Իսկ «աքլորն ըսթափ» բառակապակցության միջոցով խոսքը դառնում է աշխույժ, նաև ստանում ժողովրդական երանգ:

Շատ հաճախ բուսանուններն ու կենդանանունները պատկերավորման զանազան միջոցների հիմքն ու ատաղձն են հանդիսանում: Այդպիսին է «Տվայտանք» ոտանավորի մեջ քնարական հերոսի սիրո առարկայի և վիրավոր եղնիկի համեմատությունը: Հերոսը տառապում է միայն սիրած էակի ցավերով, նրան մխիթարելու մեջ գտնում իր սփոփանքը.

Եվ գլխիկոր՝ ինչպես *եղնիկ* վիրավոր,
Կը տեսնեմ, երբ հուրն երազանքն իմ ծաղիկ,
Կը դաշունեն զիս մորմոքներ բյուրավոր,
Խավարելով անուրջն հոգվույս խաղաղիկ... (185)

Համեմատության մեկ այլ օրինակ, որտեղ բանաստեղծի գորշ խոհերն ու մտածումները նմանեցված են սև ագռավի.

Երզն ըլլայի թռչուններուն ծնծղաձայն,
Ու դառնայի ուրախության ճիչ մը լայն,
Բանաստեղծի հոգիներուն մեջ նըկուն,
Ուր կը թախծի խոհանքն ամպոտ, անանուն՝
Ինչպես *որհ*՝ թառած շիրմի մը գլխուն (118):

Երբեմն մեկ բանաստեղծության մեջ խտացված են բազմաթիվ բուսանուններ ու կենդանանուններ, որոնք բոլորն էլ

ոճական նպատակ են հետապնդում, իսկ դրանց համադրությունը կատարյալ է դարձնում բնապատկերը: Այսպիսի օրինակներ գտնում ենք «Գարնան հյուղը», «Ի՛նչ արբեցությամբ...», «Անդարձ» և այլ բանաստեղծություններում: «Գարնան հյուղը» ոտանավորում առկա են հետևյալ բուսանուններն ու կենդանանունները՝ *շուշան, մասրենի, վարդենի, մորի, ծաղկանույշ, ապրիմեռնիս, մանիշակ, մեխակ, բաղեղ, ճնճղուկ, տատրակ, պոք*: Մեջբերենք մի հատված.

Ու տատրակներն ալ՝ ծիածան ուլերով՝

Քմշոտ գիծ մը կը գըծեն շուրջն երազե:

Ու պոքերը, խոշոր շարժուն *շուշաններ՝*

Կ'երազեն մեջն ավազանին տաղին զով,

Ուր ծորակին մերներգն անվերջ կը վազե (107):

Այս մի քանի տողում առկա են պատկերավորման հիմնական միջոցները՝ մակդիրը, այլաբերությունը, վերջինիս հիմքում առկա համեմատությունը, և այս բոլորի կերտման գործում մեծ է բուսանունների ու կենդանանունների դերը: Պորը նշանակում է «կարապ թռչունը», որից փորահավ «հավալունս»¹⁴: Իսկ կարապի և շուշանի համեմատությունը առավել քան գեղեցիկ է ու բանաստեղծական:

¹⁴ Հ. Աճարյան, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979:

Ինչպես երևում է այս համառոտ քննությունից, Միսաք Մեծարենցի քնարերգության մեջ բուսանուններին ու կենդանանուններին մեծ տեղ է հատկացված: Ակնհայտ է սրանց թե՛ պատկերաստեղծ, թե՛ ոճաստեղծ դերը: Աներկբա է, որ նաև այս միավորների շնորհիվ է պատկերը դառնում կատարելություն, քնարերգությունը՝ ճշմարիտ և հուզառատ արվեստ:

Аракелян К.-Языковые средства в описании пейзажных образов в лирике Мисака Мецаренца- Весьма часто слова, обозначающие те или иные явления, понятия, предметы, в авторской речи играют особую стилистическую роль. В лексике талантливого западноармянского поэта Мисака Мецаренца названия растений и животных являют собой неповторимую стилистическую ценность в создании поэтического образа. Указанными лингвистическими единицами обусловлена оригинальность поэтического мышления Мисака Мецаренца.

K. Arakelyan-Linguistic Means in Landscape Descriptions in the Poetry by Missak Metsarents- Frequently, words denoting ideas, objects and phenomena of various spheres can have a particular stylistic role in the author's speech. In this respect, the names of plants and animals are of

great stylistic value and significantly contribute to creating the poetic image in the poetry by Missak Metsarents, famous Western Armenian poet.

ՇԱՐՄԱՅՑՈՒՄ ԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՉ
ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԶԼՄ-ՆԵՐԻ ԼԵԶՎՈՒՄ*

Բարսեղյան Ամալյա
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Գլխավոր անդամների կապակցությունը նախադասության (մասնավորապես երկկազմ) կառուցվածքային հիմքն է և այդ պատճառով միշտ գրավել է շարահյուսագետների ուշադրությունը: Հատկապես շատ է գրվել այդ անդամների համաձայնության մասին: Համաձայնությունը նախադասության անդամների կապակցման եղանակ է. այն դրսևորվում է նրանով, որ իրար հետ կապված անդամներն ստանում են միևնույն քերականական կարգը, ուրեմն և համապատասխան քերականական ձևավորումը: Ժամանակակից հայերենում կապակցման այս եղանակը գրաբարի համեմատությամբ զգալի չափով սահմանափակել է իր ոլորտը, և ամենաբնորոշը ենթակայի և ստորոգյալի համաձայնությունն է: «Ստորոգյալը բայական դիմայնությամբ (դիմավոր բայով) ձևավորվող անդամ է, որով հատկանիշը վերագրվում է առարկային»¹: Հասկանալի է, որ այդ կապակցության

* «Արդի լեզվաբաղաբականության խնդիրնոր» մայրենի օրվան նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., «Էդիթ Պրինտ», 2013, էջ 105-108:

¹ Ս.Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 283:

բաղադրիչները՝ ենթական և ստորոգյալը պետք է համապատասխանեն միմյանց, համաձայնությունը կատարվին դեմքով և թվով:

Սույն հոդվածում ի մի են բերված ենթակայի և ստորոգյալի հատկապես թվային համաձայնության վերաբերյալ դիտարկված ոչ կանոնական դրսևորումները ՋԼՄ-ների լեզվում, և արված են ճշգրտումներ: Շարահյուսական այս հարցը քննված է ոչ միայն նկարագրական առումով, այլև փորձեր են կատարված դրանք պատճառաբանելու ուղղությամբ: Այս կապակցությամբ ցույց է տրված առանձին բառախմբերի իմաստային դերը նրանց համաձայնական յուրահատկությունների դրսևորման հարցում:

Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության ամենաընդհանուր և հայտնի օրինաչափությունն այն է, որ եզակի ենթակայի հետ սովորաբար դրվում է եզակի ստորոգյալ, հոգնակի ենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ: Սակայն ՋԼՄ-ների լեզվում հանդիպում ենք այս օրինաչափությունից բազմաթիվ շեղումների: Այսպես՝ «Դաջվածքները այսօր երիտասարդական շրջանում լայն տարածում ունի» (փխ.՝ ունեն) /բժշկի խոսքից/. «Նման միջոցառումները պետք է հաճախ լինի» (փխ.՝ լինեն) /Ֆիլմ/. «Առաջ ինչպես էր (փխ.՝ էին) գրքերը վաճառվում» (լուրեր). «Մոտենում է (փխ.՝ են) շատ արագ տոնական օրերը» (լուրեր). «Էսօրվա (փխ.՝

այսօրվա) ելույթները ինձ շատ դուր եկավ» (փխ.՝ դուր եկան) /«Հեռուստառեստորան»/. «Հարգանքը կան» (փխ.՝ կա) /լուրեր/. «Կան դեպքեր, որտեղ օրենքը չեն գործում» (փխ.՝ չի գործում) /պատգամավորության թեկնածու/. «Թե ինչ տարածքներ է ընդգրկում (փխ.՝ են ընդգրկում) հրդեհները Լոռվա մարզում» (լուրեր). «Ամեն տեղ մատնահետքեր կա» (փխ.՝ կան) /կրկ. Ֆիլմ/. «Այս անգամ ստել էին (փխ. ստել էր) մի հանցագործ» (կրկ. Ֆիլմ.). «Սակայն եղել են դեպք (փխ.՝ դեպքեր), երբ թունավորվել են ընտանիքի բոլոր անդամները» (բժշկի խոսքից). «Ուսուցիչները հիմնականում բերվեց (փխ.՝ բերվեցին) Երևանից» (դպրոցի տնօրենի խոսքից). «Սա (փխ.՝ սրանք) ակնհայտ փաստեր են» (կլինոռեժիսոր). «Սա (փխ.՝ սրանք) այն աշխատանքներն են» (հաղորդավար). «Սա(փխ.՝ սրանք) մանրէներ են» (գովազդային տեքստից):

Հայտնի է՝ բազմակի ենթակաների հետ սովորաբար դրվում է հոգնակի ստորոգյալ: Այսպես չէ հետևյալ նախադասությունում. «Անթալիայում ծանրամարտի լավագույն եռյակ չի մտել (փխ.՝ չեն մտել) Սամվել Գրիգորյանը և Արթուր...» (սպորտային լուրեր):

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել բազմակի ենթակաների հետ եզակի ստորոգյալի գործածությունը: Երբ բազմակի ենթակաները կապված են ոչ շաղակապով,

ունենում են եզակի ստորոգյալ: Այսպես՝ «Ես նոր կյանք եմ սկսել, որտեղ ոչ դու, ոչ էլ Ռֆաֆոն տեղ չունեն» (փխ.՝ չունի) /ֆիլմ/:

Մ. Աբեղյանը գրում է, որ ո՞վ հարցական դերանվան հոգնակի ձևը քիչ է գործածվում, սովորաբար եզակի ձևով է դրվում իբրև ստորոգյալ: Բերում է հետևյալ օրինակը. «Ո՞վ են այն տղան ու աղջիկը»²: Անշուշտ, Մ. Աբեղյանն այսպիսի հարցում չէր կարող սխալվել, պարզապես այն ժամանակ երևույթն այդպես էր, ինչպես նշում է նա: Այս և այլ կարգի երևույթները ցույց են տալիս, որ գրական հայերենի օրինաչափությունները (տվյալ դեպքում ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցում) գնալով ավելի են կայունանում և ստանում համապարփակ բնույթ: Թեև ԶԼՄ-ների լեզվում հանդիպում ենք՝ «Բոլոր նրանց, ով (փխ.՝ ովքեր) ունեն» (հաղորդավար). «Գնամ տեսնեմ, ո՞վ են» (փխ.՝ ովքե՞ր են):

– Գալիս են...

– Ովքերո՞վ են (փխ.՝ ովքե՞ր են) գալիս (ֆիլմ):

«Ես շատ լավ եմ նկատում, թե ովքերով (փխ.՝ ովքեր են) են նստած սեղանի շուրջ» (ֆիլմ). «Նինա, ովքերո՞վ եք (փխ.՝ ո՞ւմ հետ ես կամ՝ ովքե՞ր են եկել) /ֆիլմ/:

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել ովքեր-ի փոխարեն ովքերով-ի գործածությունը:

² Տե՛ս Մ.Աբեղյան, Երկեր, հ. Զ, Ե., 1974, էջ 416:

Նախընտրելի է ինքը դերանվան հոգնակի թվի իրենք կազմությունը: Այսպես՝ «Հեռուստաընկերություններն ինքներն (փխ.՝ իրենք) էին իրենց մարտավարությունն ընտրում» («Կենդանի մատյան»):

Եթե ստորոգելին արտահայտված չէ գոյականով կամ գոյականաբար գործածված բառով, ապա ենթակայի հետ համաձայնությունը իրացվում է դիմավոր բայի միջոցով, որը անտեսված է հետևյալ օրինակներում. «Ձեր գունային ընկալումը զարմանալիորեն հանդարտ են» (փխ.՝ հանդարտ է) /հաղորդավար/. «Այս գծագրերը շատ կարևոր է (փխ.՝ կարևոր են) ինձ համար» (կրկ. Ֆիլմ.):

Ինչպես երևում է օրինակներից, եզակի և հոգնակի ենթակաների հետ ածական ստորոգելին չի համաձայնել, մնացել է անփոփոխ, երկու դեպքում էլ համաձայնությունը պետք է իրացվեր դիմավոր բայի միջոցով (որը չի կատարվել), քանի որ ածականին բնորոշ չէ թվի քերականական կարգը:

Օտարաբանության դրսևորում պետք է համարել ենթակայի հետ դա դերանվան գործածությունը: Այսպես՝ «Երևանը դա Հայաստանը չի (չէ)» (լուրեր). «Երկրորդ խնդիրը դա ուսման վարձն է» (լուրեր). «Բացասականը դա այն է, որ վերածվեց կուսակցամոլության» (լուրեր). «Մտամոքսի խոցը դա

լորձաթաղանթի բորբոքումն է» (բժշկի խոսքից). «Ստամոքսի խոցը դա առաջանում է» (բժշկի խոսքից). «Սահմանադրությունը դա համաձայնագիր է կամ հասարակական դաշինք: Սահմանադրությունը դա ապրող իրականությունն է» (հաղորդում սահմանադրության վերաբերյալ). «Խնդիրը դա մտածելակերպի փոփոխությունն է» (իրավաբանի խոսքից):

Ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցում հաճախ մեծ դեր է կատարում կառույցի ձևային կողմը: Եթե եզակի ենթակայի գործողությանը մասնակից է նաև մեկ ուրիշը, և դա արտահայտված է սեռական հոլովաձևի և հետ կապի միջոցով, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Թեև հետ կապով կապվող բառը մասնակից է գործողությանը, բայց չի ազդում ենթակայի և ստորոգյալի համաձայնության վրա, քանի որ այդ առարկայի անունը չի դրվում ենթակայի պաշտոնով³: Մինչդեռ ԶԼՄ-ների լեզվում այդպես չէ, օրինակ՝ «Հենց երեկ խանութներից մեկում կնոջս հետ առևտուր էինք (փխ.՝ էի) անում» (նախագահի թեկնածու). «Ես ընկերուհուս հետ մոտեցանք (փխ.՝ մոտեցա) նրան» (ֆիլմ). «Ես երեխու (երեխայի) հետ մտանք (փխ.՝ մտա) շենքի մուտքը» (ֆիլմ). «Տատն էլ երեխու (երեխայի) հետ խաղում են» (փխ.՝ խաղում է) /ֆիլմ/:

³ Տե՛ս Ս.Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, մաս Ա, Բ, Գ, Թիֆլիս, 1894, էջ 192:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հավաքական գոյականով արտահայտված ենթական: Այն, որպես կանոն, ունի եզակի թվով ստորոգյալ: Այսինքն՝ ձևային համաձայնությունը վերածվել է հստակ օրինաչափության: Այդպիսիք են՝ ժողովուրդ, մտավորականություն, ընտանիք և այլն: Մինչդեռ ՋԼՄ-ների լեզվում հանդիպում ենք գրական լեզվի կանոնից շեղումների: Այսպես՝ «Ժողովուրդը կընտրեն (փիս.՝ կընտրի) այդ երգերից մեկը» (երգչի խոսքից). «Դրա համար էլ կարտոշկան (կարտոֆիլը) ժողովուրդը քիչ ցանեցին» (փիս.՝ ցանեց) /ռադիոունկնդիր/. «Հետևաբար ժողովուրդը պետք է գիտակցեն» (փիս.՝ գիտակցի) /ոստիկան/. «Մի տեսակը հանգիստ բնավորություն ունեն» (փիս.՝ ունի) /կրկ. Ֆիլմ/. «Ընկերությունը բանակցում են (փիս.՝ բանակցում է) նաև այլ հարցերով» (լուրեր): «Յուրմալայում շատ լավ ձկնեղեն կային» (փիս.՝ կար) /«Չէին սպասում»/. «Այդ ժամանակ նրա ընտանիքը տանն են եղել» (փիս.՝ է եղել) /լուրեր/:

Սակայն հավաքական իմաստ ունեցող դերանունների հետ ստորոգյալը սովորաբար դրվում է հոգնակի թվով: Այսպես՝ «Բոլորը թարմ վիճակում է» (փիս.՝ վիճակում են) /լուրեր/:

Հավաքական գոյականով արտահայտված եզակի ենթակայի հետ հոգնակի ստորոգյալի գործածությունը բարբառայնության

արտահայտություն է և գրական հայերենի արդի փուլում կանոնական չէ:

ԶԼՄ-ներին հարիր չէ գրական լեզվի նորմերի խախտումը: Նրանք պարտավոր են ավելի ուշադիր լինել և նման կարգի սխալներ չսփռել, այլ նպաստել մայրենիի անաղարտությանը և նրա նորմերի պահպանմանն ու բնականոն զարգացմանը:

А.Г. Барсегян – Нерегулярные формы синтаксических сочетаний в языке СМИ- Грамматическая категория согласованности, являющаяся синтаксической, обеспечивает множество особенностей, как из-за смысловых свойств средств выражения подлежащего и сказуемого, так иногда и от отношения говорящего. Добавим также, что закономерности согласованности подлежащего и сказуемого постепенно стабилизируются, хотя иногда в СМИ встречаются нерегулярные проявления.

A. Barseghyan- Irregular forms of syntactic combinations in language of Media- The grammatical category of coherence which is syntactic provides a set of features, both due to the semantic properties of means of expression of a subject and predicate, and sometimes by the attitude of the speaker. Let us also add that regularities of coherence of a subject and a predicate are gradually stabilized though sometimes in media the wrong manifestations meet.

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ
ՄԽԱԼՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ՀԱՐՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Գալստյան Անահիտ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Գործնական աշխատանքների ձեռնարկներում, քննությունների առաջադրանքների շտեմարաններում, հոդվածներում, լեզվաբանության գծով պաշտպանվողատենախոսություններում առկա են մի շարք անճշտություններ, վրիպումներ, որոնց անդրադառնալն անհրաժեշտ ենք համարում: Նկատելի են տերմինագործածության անճշտություններ, ենթակայի և ստորոգյալի համաձայնության սխալներ, բանավոր խոսքից գրավոր խոսք ներթափանցած չհղկված արտահայտություններ, խմբագրման կարիք ունեցող ձևակերպումներ, բնորոշումներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

2013թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների ՏՀայոց լեզու և հայ գրականություն՝ շտեմարանի (Երևան, 2012) 1 մասի 21-24-րդ էջերում 43 վարժության պահանջը ձևակերպված է հետևյալ կերպ. ՏՔանի՞ եռաշարք հոմանիշ կարող է կազմվել տրված բառացանկից! : Հեղինակները նկատի ունեն հոմանիշների եռյակը կամ հոմանիշների եռանդամ շարքը¹:

* «Ձառուկյանական ընթերցումներ», հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, Եր., 2013, էդիթ Պրինտ, էջ 19-23:

¹ 1. Հոդվածի նյութը քաղել ենք 2012-2013թթ. հրատարակված մի շարք աշխատություններից, շտեմարաններից, պարբերականներից, հանրապետական գիտաժողովների նյութերից.

«Պնդումների փունջ» գլխում (էջ 140-151) կարդում ենք. «Ու ձայնավորը հնչյունափոխվում է միայն բազմավանկ բառերի սկզբում, միջում և վերջում»: Նույն էջում. «Արմատ + գրաբարյան նախադիր (հ,գ,ի) ածանցավոր բառեր են»:

Շարունակենք: *Հեռացած հատկացուցիչը միշտ չէ, որ տրոհվում է նախադասության մյուս անդամներից: (էջ 147): Բոլոր պարագաները կարող են ունենալ մասնավորեցնող բացահայտիչ: (էջ 150): Հատկացուցիչը հատկացյալի հետ համաձայնեցվում է դեմքով և թվով: (էջ 150): Որևէ խոսքի մասից և հանգույցից կազմված ստորոգյալը բաղադրյալ է: (էջ 149): Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնց կազմում համառոտ նախադասություն կա: (Շտեմարան 2-րդ մաս, էջ 76):*

Տրված հատվածում նշել համառոտ նախադասությունների քանակը: (Շտեմարան, 2-րդ մաս, էջ 76):

-
- ա. Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումներ (Երևան, 2012թ., հունիսի 14-15) ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ,- Ե., Զանգակ-97, 2012:
- բ. Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետ. լեզվաբանական համալսարանի,
Հայագիտություն և գուգադրական լեզվաբանություն, 2(23): Ե., Լինգվա, 2012:
- գ. Հանրապետական գիտաժողով /ՀՀ ԿԳՆ, Վանաձորի պետ. մանկավարժական ինստիտուտ: Խմբ. խորհուրդ՝ Գ. Խաչատրյան և ուրիշ.- Վանաձոր, ՄԻՄ տպագրատուն, 2013:
- դ. Հայոց լեզու և գրականություն: 2013թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան,- Գնահատման և թեստավորման կենտրոն, 2012,
- ե. Շտեմարան, մաս 2, Ե., 2012:

Հետևյալ նախադասություններում անհրաժեշտ էր պահպանել արդի գրական արևելահայերենի ենթակայի և ստորոգյալի համաձայնության կանոնները:

Ան արտաքին հոլովման պատկանող գոյականների մի մասը ունեն գուգաձև հոլովում: (էջ 144): Ան հոլովման ենթարկվող բառերից մի քանիսը կարող է հոլովվել նաև վա հոլովմամբ: (Շտեմարան, 2-րդ մաս, էջ 199):

Տրված բառահոդվածները բառարանի ուր տեսակից է վերցված: (էջ 139):

Բարեխիղճ խմբագրելու դեպքում հետևյալ ձևակերպումները առավել ճշգրիտ կարտահայտեն հեղինակի միտքը:

Հետադաս որոշիչները կարող են արտահայտվել և՞ բառով, և՞ բառակապակցությամբ, և՞ դերբայական դարձվածով: (էջ 147):

Խախտված է բաժանման տրամաբանական հիմքը:

Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները միմյանց հետ կարող են կապակցվել թե՞ համադասությամբ, թե՞ ստորադասությամբ: (էջ 148):

Եթե բայի կազմության մեջ կա –ոտ ածանցը, ապա այդ բայը պարտադիր բազմապատկական է: (Շտեմարան, 2-րդ մաս, էջ 195):

Շտեմարանի 1-ին մասի 114, 115, 123 էջերում այսպիսի առաջադրանքներ կան. ՏՆՉի՞ր, թե փակագիծ ունեցող քանի նախադասություն կա տրված հատվածում (նախադասությունները կետադրված չեն)!, ՏՆՉի՞ր այն նախադասությունները, որոնցում առոգանության նշան կա (նախադասությունները կետադրված չեն)!, ՏՈւր նախադասություններում ստորակետ կա (նախադասությունները կետադրված չեն)!, ՏՈւր նախադասություններում միջակետ կա

(նախադասությունները կետադրված չեն)՝, ՏՆՉԻՊ այն նախադասությունները, որոնցում բույթ կա (նախադասությունները կետադրված չեն)՝:

Վերոհիշյալ ձևակերպումները շտկման կարիք ունեն:

Շտեմարանի I մասի V գլխում, որն անվանված է ՏԲարդ նախադասության գծապատկերներ» (էջ 76-90), բարդ նախադասության գծապատկերները ներկայացված են շրջանակների միջոցով, այնինչ լեզվաբանական աշխատանքներում այդ գծապատկերները ընդունված է ներկայացնել ուղղանկյունների միջոցով, և այդ ավանդույթը պետք էր պահպանել: Լեզվաբանական և մեթոդական, ուսումնական աշխատանքներում ընդունված պայմանական նշանները, գծապատկերները միօրինակ ներկայացնելու անհրաժեշտությանը արդեն անդրադարձել ենք մեր հոդվածներից մեկում (տե՛ս ՏՁահուկյանական ընթերցումներ՝ 2012 թ., էջ 45):

Տարբեր ձեռնարկներում տերմինագործածության ժամանակ նկատելի են մի շարք անճշտություններ: Այսպես՝ շրջանառության մեջ է դրվել *ածանցավոր բառեր պարզ* տերմինը, ՏԵրիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումներում՝ կարդում ենք *միացման գծիկ* (փխ. *միության գծիկ*): Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի պարբերականում կարդում ենք *գեղչավոր նախադասություններ*²:

Երբեմն սխալներ և անճշտություններ են առկա հոդվածների ամփոփումների և վերնագրերի թարգմանություններում:

² Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի: Բանասիրություն, լեզվաբանություն: 1(27)- Երևան, Լինգվա, 2013, էջ 83-87:

Слова со значением родственных отношений թարգմանված է հարազատական հարաբերություն անվանախոսմբ կազմող բառեր³ (փխ. __ազգակցական հարաբերություն արտահայտող բառեր):

Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի պարբերականի ՏՀայագիտություն և գուգադրական լեզվաբանություն՝ անվանումը տարիներ շարունակ ներկայացվել է "Арменистика и сопоставительная лингвистика": Միայն 2012թ. լույս տեսած համարի վերնագիրը ճշգրիտ էր ներկայացված. "Арменоведение и сопоставительная лингвистика":

Հաճախ նկատվող կետադրական սխալներից հարկ էնք համարում նշել բազմակետի փոխարեն կախման կետերի գործածությունը. մի բան, որ անհանդուրժելի է:

Լեզվաբանական ուսումնասիրություններում նկատելի են նաև բանավոր խոսքի բառապաշարի միավորների անհարկի ներթափանցում գրավոր խոսք, վատ խմբագրված շարադրանք, որոշիչ հոդի գործածության սխալներ (*h* բաղաձայնից առաջ *ն* հոդի գործածություն *ը*-ի փոխարեն): Այսպես. ՏՀայտնի է, որ –ուի վերջածանցը հայերենը *փոխ է առել* պարսկերենից...! : (Հանրապետական գիտաժողով, Վանաձոր, 2013, էջ 33): Տարբեր աշխատանքներում կարելի է հանդիպել *վեր է լուծում, վեր է հանում, վեր է ածվել, գործ է ածվում* և այս կարգի այլ արտահայտությունների:

³ Հանրապետական գիտաժողով, ՀՀ ԿԳՆ, Վանաձորի պետ. մանկ. ինս., Վանաձոր, 2013, էջ 22:

Բազմաթիվ հեղինակների աշխատանքներում նկատել ենք այսպիսի ձևակերպումներ. «Հին կազմությունների մեջ առաջին բաղադրիչի ի-ն հաջորդ ա-ի հետ միանալով *տալիս էր եա,ե....*»⁴: «Ու հոլովիչով հոլովելիս եզակիում ի-ն *զցում են*. օրինակ՝ թագուհու, թագուհով...»⁵: «Հին կազմությունների մեջ կան նաև այնպիսի բառեր, որտեղ ի-ն մնացել է անփոփոխ և ա-ի հետ *տվել է իա....*»⁶ : «Բառասկզբի շեշտյալ ու-ն նույնպես համաբանությամբ *տվել է....*»⁷: «....Տի-ն օրինաչափորեն *տվել է տէ....*»⁸:

Այժմ էլ անդրադառնանք որոշ անվանակարգային միավորների և արտահայտությունների սխալ գործածության մի քանի դեպքերի: Լեզուների անվանումներ կազմող -երեն ածանցը բանավոր խոսքում ընդհանրացնում են, և նույնիսկ Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ուսանողներին անընդհատ հարկադրված ենք լինում հիշեցնել, որ պետք է ասել ոչ թե *չիներեն, հուներեն, այլ չինարեն, հունարեն*: Հաճախ կարելի է լսել՝ *անգլերեն լեզվի ամբիոն, ռուսերեն լեզու, հայերեն լեզու, ֆրանսերեն լեզվի դասընթաց, գերմաներեն լեզվի կարիներտ* և այլն: Դա արդեն թափանցել է նաև գրավոր խոսք: Այստեղ առկա է ածանցի իմաստի մթագնում:

Լեզվական արմատացած սխալները քիչ չեն: Հիշենք ոչ վաղ անցյալում Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական

⁴ Հայոց լեզու, «Լույս» հրատ., 1 մաս, Ա պրակ, հեղ. կոլ., 1980, էջ 135:

⁵ Ն.տ., էջ 134:

⁶ Ն.տ., էջ 135:

⁷ Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), պրակ 3, Ե., Նաիրի, 2010, էջ 75:

⁸ Ն.տ., էջ 89:

համալսարանի անվանումը՝ Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտ: Ռուսաց լեզուն, որը գործածվում էր որպես ՄՍՀՄ ժողովուրդների ազգամիջյան հաղորդակցության լեզու, չգիտես ինչու, օտար լեզու չէր համարվում. բայց չէ՞ որ լեզուն լինում է մայրենի և օտար: Ի դեպ, նշենք նաև որ *մայրենի և օտար լեզուներ, պետական լեզու, ազգամիջյան հաղորդակցման լեզու, առաջին, երկրորդ, երրորդ լեզուներ, երկլեզվություն, վաղ երկլեզվություն* և հարակից այլ հասկացությունների (և դրանք արտահայտող տերմինների) հարաբերակցությունը, դրանց բովանդակային սահմանների ուրվագծումը, պարզաբանումն ու ճշգրտումը լեզվաբանության, մասնավորապես հոգելեզվաբանության ու հանրալեզվաբանության մեջ բավարար ուսումնասիրության դեռևս չեն արժանացել: Լ. Ֆլյուսնը «Մայրենի լեզվի դերը միջմշակութային կրթության համատեքստում» հոդվածում գրում է. «...«Հայերենը օտարների համար» հայեցակարգը մեր երկրում դեռ գտնվում է ներդրման փուլում»⁹:

Անդրադառնանք ՀՀ-ում ներդրման փուլում գտնվող այդ հայեցակարգի անվանմանը: Խոսքը արևելահայերենը որպես երկրորդ լեզու դասավանդելու մասին է: Ու՜մ ենք դասավանդելու. աշխարհասփյուռ հայերի նոր սերնդին, որը տարբեր պետություններում կրթությունը ստանում է այլ լեզվով, և ցանկալի է, որ գրքեր, նյութեր, ընթերցարաններ ունենա նաև մայրենի լեզուն սովորելու, մայրենի լեզվով կարդալու համար: Հայերենը որպես երկրորդ լեզու կարող են սովորել նաև հայերենով հետաքրքրվող այլազգի քաղաքացիներ, որոնց համար այս հայեցակարգը նպատակահարմար կլինի անվանել ոչ թե «Հայերենը օտարների

⁹ Հայագիտություն և գուգադրական լեզվաբանություն, Ե., 2012 (23), էջ 64:

համար», այլ որևէ այլ կերպ, ասենք՝ «Հայերենը այլազգիների համար», «Հայերենը որպես երկրորդ լեզու», «Հայերենի դասավանդումը որպես օտար լեզու» և այլն: Այդպիսի աշխատանքներ արդեն կան: Այսպես, Դորա Սաքայանի «Արևելահայերենը անգլիախոս աշխարհի համար» (Ե., ԵՊՀ հրատ., 2007^ա գրքի վերնագիրը ճշգրիտ է, դիպուկ և արդարացված: Նույն ձևով այդ շարքի ձեռնարկները կարող են կոչվել՝ «Արևելահայերենը ֆրանսախոսների համար», «Հայերենը իսպանախոսների համար», բայց ոչ՝ «Հայերենը օտարների համար»:

Ռուսալեզու ընթերցողի համար են նախատեսված Ա. Ս. Մարկոսյանի աշխատանքները¹⁰:

Ամփոփելով լեզվաբանական տերմինների գործածության վերաբերյալ մեր համառոտ դիտարկումները՝ նշենք, որ մանրակրկիտ ուսումնասիրության կարոտ են այս ոլորտի բազմաթիվ այլ հարցեր, ինչպես՝ տերմինների համաժամանակյա կիրառության ժամանակ դրսևորվող անհարկի հոմանիշության դեպքերը, տերմինատարբերակների անտեղի ներմուծումը, ռուսերենից կամ անգլերենից կատարվող՝ տերմինների անհաջող թարգմանության և պատճենման դեպքերը և այլն:

¹⁰ А.С.Маркосян, 1. Крунк Айастан, 1 часть, "Вводный курс", "Баласс", 1998г., 2. Крунк Айастан, учебник армянского языка, Часть вторая: Основной курс,- М., "Баласс", 2001,-256 с. с илл, 3.часть третья: Продвинутый курс, - Баласс, 2004, 240с., илл, 4. Крунк Айастан, Учебный армянско-русский словарь (ок. 4500 слов),-М., Баласс, 2004.- 192с.

Анаит Галстян – Об ошибках в употреблении лингвистических терминов и о некоторых смежных вопросах. – В статье рассматриваются случаи употребления некоторых нерекондуемых лингвистических терминов. Исследуются также некоторые случаи неправильного употребления наименований языков, распространенные в устной речи носителей языка. Анализируются взаимоотношения между терминами и понятиями մայրենի и օտար լեզու, ազգամիջյան հաղորդակցության լեզու, առաջին, երկրորդ լեզու. Предлагается правильная формулировка концепции «Преподавание армянского как второго языка».

Anahit Galstyan – Some Considerations on the Wrong Usage of Linguistic Terms. – The article examines the wrong usage of Linguistic Terms. Some examples of unrecommended linguistic terms are discussed. Wrong usages of using the names of languages in oral speech are presented. The article also touches upon the relationship between terms expressing the notions: մայրենի, օտար լեզու, ազգամիջյան հաղորդակցության լեզու, առաջին, երկրորդ լեզու. It is suggested that for the purpose teaching Armenian in the Armenian Diaspora it is preferable to use 'Teaching Armenian as a Second Language', rather than 'Teaching Armenian as a Foreign Language'.

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ*

Գալստյան Անահիտ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Տերմինաբանությունը կիրառական լեզվաբանության կարևոր բնագավառ է, որի ուսումնասիրությունը արդիական է: Տերմինաբանության հիմնահարցերը միշտ էլ արժանացել են լեզվաբանների ուշադրությանը: Տերմինաշինության հարցերով, տերմինաստեղծման աշխատանքներով զբաղվում են ոչ միայն լեզվաբանները, այլև տարբեր գիտաճյուղերի մասնագետները. տերմինների բառարաններն ու տերմինարանները ստեղծվում են լեզվաբանների և տարբեր մասնագետների համատեղ ջանքերով: Է. Աղայանը նշում է, որ տերմինաբանությունն բառը գործածվում է երեք նշանակությամբ. 1. տվյալ լեզվի տերմինների ամբողջությունը, 2. տվյալ բնագավառի տերմինների ամբողջությունը, 3. բառագիտության այն բաժինը, որ զբաղվում է տերմինների համակարգի ու տերմինների տեսությամբ ու պրակտիկայով: Առաջին երկու նշանակությունները նույնական են, և տարբերությունը միայն ծավալային է, որ արտահայտվում է

* Գիտական նյութերի ժողովածու, Վանաձոր, ՄԻՄ տպագրատուն, 2013, էջ 23-30:

մասնավորող բառակապակցություններով: Երրորդ իմաստի համար մենք գործածում ենք տերմինագիտություն բառը¹:

Ուշագրավ են տերմինաբանության հարցերին նվիրված՝ Ռ. Իշխանյանի, Հ. Բարսեղյանի, Ա. Սուքիասյանի, Ա. Աբրահամյանի, Ս. Աբրահամյանի, Է. Աղայանի, Գ. Ջահուկյանի և այլոց հոդվածները, որոնցում քննվում են տերմինաբանության արդի խնդիրները, հրատապ լուծում պահանջող հարցերը²: Բանավեճի ամփոփիչ հոդվածում Գ. Ջահուկյանի առաջ քաշած հարցադրումներն ու դիտարկումները մեր օրերում չեն կորցրել իրենց արդիականությունը: Գ. Ջահուկյանը գրում է տերմինաբանական կոմիտեի աշխատանքի աշխուժացման, տերմինաբանական բյուլետենի հրատարակման, տերմինաբանական աշխատանքները մշտապես վերահսկելու, առանձին մասնաճյուղերի տերմինաբանության ուսումնասիրության, տերմինաբանական բառարանների կազմման աշխատանքի բարելավման, տերմինաբանության տեսության, խոսքի մշակույթի և բառագիտության հարցերի ավելի աշխուժացված ուսումնասիրության, տարբեր հիմնարկների փաստաթղթերի լեզվի նկատմամբ հսկողության սահմանման,

¹ Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 313:

² Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, հ. 7, 9, 1970, հ. 12, 1971, հ.1, 2, 6, 7, 8:

լեզվաբանների և այլ մասնագետների համագործակցության անհրաժեշտության մասին³:

Այսօր հրատապ են տերմինաբանական կոմիտեի (կամ՝ հայերենի բարձրագույն խորհրդի) աշխատանքները վերսկսելը, ՋԼՄ-ների լեզվի, ՀՀ այսօրվա լեզվավիճակի քննարկումներն ու գրական արևելահայերենի տարբեր դրսևորումների (օրինակ՝ պաշտոնական ոճի) կանոնարկումը:

Լեզվաբանական աշխատանքներում, հոդվածներում երբեմն առկա է այս կամ այն տերմինի գործածության երկիմաստություն, և գործածված տերմինի բովանդակային սահմանների ճշգրտման կարիք է լինում: Բերենք մեկ-երկու օրինակ: Հայագիտություն (арменоведение) տերմինը իր մեջ ներառում է ուսումնասիրության լայն ոլորտ՝ հայ ժողովրդի պատմություն, ազգագրություն, հայ բանահյուսություն, հայ գրականագիտություն, հայոց լեզվի պատմություն, հայ եկեղեցու պատմություն, մշակութաբանություն և այլն: Հաճախ հայագիտություն տերմինը գործածվում է հայերենագիտություն (арменистика) տերմինի իմաստով, այսինքն՝ իմաստային մեծ ծավալ ունեցող տերմինը գործածվում է ավելի նեղ իմաստով, իր բովանդակության մի մասի համար միայն:

³ Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը. –Լրաբեր հասարակական գիտությունների, 1971, հ. 9, էջ 93-98:

Այսպես՝ հայտարարվում է հայագիտական գիտաժողովի մասին, և լրացուցիչ հարցերի միջոցով միայն կարող ենք իմանալ՝ գիտաժողովը հայերենագիտական է, թե հայագիտական:

Ժամանակակից հայոց լեզու և արդի հայերեն տերմինները համարժեք են և ներառում են ժամանակակից հայոց լեզվի գրական երկու ճյուղերը՝ արևմտահայերենը և արևելահայերենը: Հաճախ լեզվի դասագրքերում, գործնական աշխատանքների ձեռնարկներում հայոց լեզու տերմինը գործածվում է ժամանակակից գրական արևելահայերեն իմաստով: Այնինչ տերմինագործածությունը պետք է հստակ արտահայտի տվյալ իրողության բովանդակությունը, բովանդակության սահմանները հստակ պետք է ընդգծված լինեն:

Դրանով իսկ անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալու տերմինների անհարկի հոմանիշության, անհանձնարարելի տերմինների գործածության, տերմինների բովանդակային ծանրաբեռնվածության և հարակից այլ հարցերին:

Լեզվաբանական տերմինների գործածության քննությունը ցույց է տալիս, որ տարբեր հեղինակների աշխատություններում առկա են անհարկի գործածվող տերմինատարբերակներ: Այսպես՝ Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարանում» (Ե., 1987) տրված են հոգնակերտ մասնիկներ (էջ 229), հոգնակերտ

վերջավորություններ (էջ 229, 564), տերմինները: Հոգնակերտ տերմինի առկայության պայմաններում, կարծում ենք, ավելորդ է նույն իմաստն ունեցող հոգնակիակերտի գործածությունը, որ հանդիպում է մի շարք հեղինակների գործերում: Այսպես՝ «Ժամանակակից հայոց լեզվում հոգնակիակերտ մասնիկները, ինչպես հայտնի է, չորսն են՝ -եր, -ներ, -ք, -իկ⁴»:

Հոգնակիակերտ տերմինը հանձնարարելի չենք համարում:

Միմիկա տերմինը հայերենում ունի դիմախաղ համարժեքը, որը գործածվում է և՛ թատերագիտական, և՛ գրականագիտական, և՛ լեզվաբանական աշխատություններում: Վերջերս նկատելի է դիմախաղի փոխարեն դիմախոսությունն անհաջող տերմինի գործածությունը, բառացանկերում ընդգրկելը⁵: Մեր կարծիքով, դիմախոսությունն բառը անհանձնարարելի է: Լեզվական այս կամ այն իրողությունը դիտարկելիս երբեմն փոխառվում է օտար տերմինը, այնուհետև, որպես ընդհանուր օրինաչափություն, փնտրվում և առաջարկվում է դրա հայերեն անվանումը (հաճախ՝ մի քանի տարբերակ): Այստեղ գործում է լեզվաբանության

⁴ Ալ. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն, ԵՊՀ հրատ., Ե., 2004, էջ 84:

⁵ Պ. Բեդիրյանը գործածել է դիմաշարժություն տերմինը: Տե՛ս Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1978, էջ 110:

տերմինաբանության հիմնական միտումներից մեկը՝ տերմինների հայերենացման (հայացման) միտումը:

Լեզվաբանական գիտության զարգացման ընթացքում նոր ուղղությունների, դպրոցների, տեսությունների, գիտակարգերի և միջգիտակարգերի առաջացման հետևանքով կիրառության մեջ մտնող նոր հասկացությունները, գաղափարները նշանակելու, արտահայտելու համար լեզվում կամ փոխառվում են օտար տերմիններ, կամ լեզվի բառակազմական միջոցներով ստեղծվում են հայերեն տարբերակներ: Տերմինները թարգմանվում են կամ պատճենվում. առկա է նաև կիսապատճենման երևույթը: Պսիխոլինգվիստիկա, սոցիոլինգվիստիկա, էթնոլինգվիստիկա, էթնոպսիխոլինգվիստիկա տերմինները սլյալ միջգիտակարգերի զարգացմանը զուգընթաց գործածությունից դուրս եկան, և այժմ գործածվում են հոգելեզվաբանություն, հանրալեզվաբանություն, ազգալեզվաբանություն, ազգահոգելեզվաբանություն հայակազմ տերմինները:

Առկա է տերմինների մասնակի հայերենացման երևույթը, երբ միաբառ բաղադրյալ տերմինի մի բաղադրիչն է միայն փոխարինվում հայերեն տարբերակով, իսկ բառակապակցական տերմինի դեպքում՝ բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը:

Մասնակի հայերենացած միաբառ տերմիններից են՝ ժարգոնաբանության, նեոլեզվաբանության, մակրոխոսքաշար, արգոյաբանություն և այլն: Մասնակի հայերենացած բառակապակցական տերմիններից բերենք մի քանի օրինակ՝ գենդերային լեզվաբանություն, ժեստերի լեզու, լեզվաբանական պրագմատիկա, թեմատիկ բառարան, գողերի ժարգոն, դպրոցական ժարգոն, ժարգոնային բառապաշար, իդիոմատիկ իմաստաբանություն, իզոգլոսային գիծ, նորմատիվ քերականություն, խոսքի ռիթմ, հնչյունական մուտացիա, պոլիտեխնիկական բառարան, սիմվոլիկ գրություն, սինկրետիկ հոլով, լեզվի սոցիալական տարբերակներ, ֆունկցիոնալ իմաստափոխություն, ֆունկցիոնալ լեզվաբանություն և այլն:

Ժամանակի ընթացքում նշված և բազմաթիվ այլ տերմինների օտարալեզու բաղադրիչները (կամ դրանց մեծ մասը, անշուշտ, կփոխարինվեն հայերեն համարժեքներով: Է. Աղայանի «Լեզվաբանության ներածությունում» (Ե., 2008) մի շարք օտարալեզու տերմիններ տրված են հայերեն տերմիններից հետո՝ փակագծերում. դա հայերեն տերմինը շրջանառության մեջ դնելու և աստիճանաբար օտարալեզու տերմինից հրաժարվելու ճիշտ և ուսանելի ձևերից մեկն է:

Այսպես՝ ներմարմնավորյալ ինկորպորատիվ կամ բազմահամադրական պոլիսինթետիկ) լեզուներ (էջ 252), ապաժամանակյա (ախրոնիկ) կամ հարաժամանակյա (պանխրոնիկ) հայեցակետ (էջ 38), կայական (ստատիկ) հայեցակետ (էջ 38), լեզվի իմացաբանական (գնոսեոլոգիա- կան) կամ կուտակչական (ակումուլյատիվ) գործառույթ (էջ 6), կիրարկության (ուզուս) (էջ 33), նկարագրական (դեսկրիպտիվ) կամ համաժամանակյա (սինխրոնիկ) ուսումնասիրություն (էջ 36), հնչյունների քայնացում (պալատալիզացիա) կամ փափկացում (էջ 79), առնմանություն (ասիմիլյացիա) (էջ 97), տարնմանություն (դիսիմիլյացիա) (էջ 98), համաբանություն կամ նմանակություն (անալոգիա) (էջ 100), գաղափարագրեր (իդեոգրամաներ) (էջ 105), գաղափարագրություն (իդեոգրաֆիա) (էջ 105), վանկագրություն (սիլաբիկ գիր) (էջ 106) և այլն:

Բերենք մի քանի օրինակ Է. Աղայանի «Լեզվաբանության ներածության» 1967թ. հրատարակությունից ⁶ . մեծոլորտ (մակրոսֆերա), մանրոլորտ (միկրոսֆերա), գերոլորտ (մեգոսֆերա), կիսոլորտ (հեմիսֆերա), տարոլորտ (հետերոսֆերային) հնչույթ, մենոլորտ (մոնոսֆերային) հնչույթ,

⁶ Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն, Ե., «Միտք», 1967:

բառապաշարի միասնականացում (ունիֆիկացիա), կցում (ազլուտինացիա), ձուլում (ֆուզիոն) և այլն:

Նշենք, որ սինխրոնիկ և դիսխրոնիկ բառերին լեզվաբանական տերմինների կազմում այժմ արդեն փոխարինում են հայերեն համապատասխան բաղադրիչները: Այսպես՝ սինխրոնիկ բառագիտության փոխարեն գործածվում է համաժամանակյա բառագիտություն, սինխրոնիկ դարձվածաբանության փոխարեն՝ համաժամանակյա դարձվածաբանություն, սինխրոնիկ լեզվաբանության փոխարեն՝ համաժամանակյա լեզվաբանություն, սինխրոնիկ ուսումնասիրության փոխարեն՝ համաժամանակյա ուսումնասիրություն և այլն: Լեզվաբանական տերմինների բառացանկ կազմող այսօրվա բառարանագիրը դիսխրոնիկ բառագիտություն (Նազարյան, էջ 281), դիսխրոնիկ դարձվածաբանություն (էջ 388), դիսխրոնիկ լեզվաբանություն (էջ 285), դիսխրոնիկ ուսումնասիրություն (էջ 186) տերմինների փոխարեն, անշուշտ, կգործածի հայերենացած տարաժամանակյա բառագիտություն, տարաժամանակյա դարձվածաբանություն, տարաժամանակյա լեզվաբանություն, տարաժամանակյա ուսումնասիրություն տերմինները:

Նույնը կարելի է նշել նաև բառակապակցական տերմինների կազմում սպորտային բառը հայերեն տարբերակով փոխարինելու մասին: Այսպես՝ Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարանում» նշված սպորտային տերմին (էջ 579), սպորտային տերմինաբանություն (էջ 580), Ա. Նազարյանի «Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարանում առկա սպորտային արգո (էջ 76), սպորտային ժարգոն (էջ 266) տերմինների փոխարեն այսօրվա աշխատանքներում գործածվում են՝ մարզական տերմին, մարզական տերմինաբանություն, մարզական արգո, մարզական ժարգոն:

Լեզվաբանական տերմինապաշարում նկատելի է նաև ինֆորմացիա, սիստեմ, միկրո-, մակրո- բաղադրիչների փոխարեն տեղեկատվություն, համակարգ, մանրա-, մեծա- (մասամբ) հայերեն տարբերակների կիրառությունը: Այսպես՝ Ա. Նազարյանի բառարանում նշված արտածվող ինֆորմացիա (էջ 255), բանավոր ինֆորմացիա (էջ 255), լեզվի ենթասիստեմ (էջ 461), լեզվի սիստեմայնություն (էջ 492) միավորները նոր կազմվող բառացանկերում ընդգրկելը, կարծում ենք, ավելորդ կլինի, քանի որ դրանց հայերեն տարբերակները արդեն գործածության մեջ են:

Այժմ էլ անդրադառնանք որոշ անվանակարգային միավորներին արտահայտությունների սխալ գործածության մի քանի դեպքերի: Լեզուների անվանումներ կազմող -երեն ածանցը բանավոր խոսքում ընդհանրացնում են, և նույնիսկ Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ուսանողներին անընդհատ հարկադրված ենք լինում հիշեցնել, որ պետք է ասել ոչ թե չիներեն, հուներեն, այլ չինարեն, հունարեն: Բանավոր խոսքում հաճախ կարելի է լսել՝ անգլերեն լեզվի ամբիոն, ռուսերեն լեզու, հայերեն լեզու, ֆրանսերեն լեզվի դասընթաց, գերմաներեն լեզվի կաբինետ և այլն: Համատարած այս սխալը արդեն թափանցել է նաև գրավոր խոսք: Վերոնշյալ սխալից չեն կարողանում խուսափել նույնիսկ լեզվաբանները:

Լեզվական արմատացած սխալները քիչ չեն: Հիշենք ոչ վաղ անցյալում Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի անվանումը՝ Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտ: Ռուսաց լեզուն, որը գործածվում էր որպես ՄՍՀՄ ժողովուրդների ազգամիջյան հաղորդակցության լեզու, չգիտես ինչու, օտար լեզու չէր համարվում. բայց չէ՞ որ լեզուն լինում է մայրենի և օտար: Ի դեպ, նշենք նաև, որ մայրենի և օտար լեզուներ, պետական լեզու, ազգամիջյան հաղորդակցման լեզու, առաջին, երկրորդ, երրորդ լեզուներ, երկլեզվություն, վաղ

երկլեզվությունն և հարակից այլ հասկացությունների (և դրանք արտահայտող տերմինների) հարաբերակցության, դրանց բովանդակային սահմանների ուրվագծումը, պարզաբանումն ու ճշգրտումը լեզվաբանության, մասնավորապես հոգելեզվաբանության և հանրալեզվաբանության մեջ բավարար ուսումնասիրության դեռևս չեն արժանացել: Լ. Ֆլյանը «Մայրենի լեզվի դերը միջմշակութային կրթության համատեքստում» հոդվածում գրում է. «...Հայերենը օտարների համար հայեցակարգը մեր երկրում դեռ գտնվում է ներդրման փուլում»⁷:

Անդրադառնանք ՀՀ-ում ներդրման փուլում գտնվող այդ հայեցակարգի անվանմանը: Խոսքը արևելահայերենը որպես երկրորդ լեզու դասավանդելու մասին է: Ում ենք դասավանդելու աշխարհասփյուռ հայերի նոր սերնդին, որը տարբեր պետություններում կրթությունը ստանում է այլ լեզվով, և ցանկալի է, որ գրքեր, նյութեր, ընթերցարաններ ունենա նաև մայրենի լեզուն սովորելու, մայրենի լեզվով կարդալու համար: Հայերենը որպես երկրորդ լեզու կարող են սովորել նաև հայերենով հետաքրքրվող այլազգի քաղաքացիներ, որոնց համար այս հայեցակարգը նպատակահարմար կլինի անվանել ոչ թե «Հայերենը օտարների

⁷ Ֆլյան Լ., «Մայրենի լեզվի դերը միջմշակութային կրթության համատեքստում». – Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, Ե., 2012, 2 (23), էջ 164:

համար», այլ որևէ այլ կերպ, ասենք՝ «Հայերենը այլազգիների համար», «Հայերենը որպես երկրորդ լեզու», «Հայերենի դասավանդումը որպես օտար լեզու» և այլն: Այդպիսի աշխատանքներ արդեն կան: Այսպես, Դորա Սաքայանի «Արևելահայերենը անգլիախոս աշխարհի համար» (Ե., ԵՊՀ հրատ., 2007) գրքի վերնագիրը ճշգրիտ է, դիպուկ և արդարացված: Նույնձևով այդ շարքի ձեռնարկները կարող են կոչվել՝ «Արևելահայերենը ֆրանսախոսների համար», «Հայերենը իսպանախոսների համար», բայց ոչ՝ «Հայերենը օտարների համար»:

Ամփոփելով լեզվաբանական տերմինների գործածության վերաբերյալ մեր դիտարկումները՝ նշենք, որ ուսումնասիրության կարճ տևողությամբ այս ոլորտի բազմաթիվ այլ հարցեր, ինչպես՝ տերմինների համաժամանակյա կիրառության ժամանակ դրսևորվող անհարկի հոմանիշության դեպքերը, տերմինատարբերակների անտեղի ներմուծումը, ռուսերենից կամ անգլերենից կատարվող տերմինների անհաջող թարգմանության և պատճենման դեպքերը և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն, Ե., "Միտք", 1967:
2. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, ԵՊՀ հրատ., Ե., 1984:
3. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., «Լույս», 1978, էջ 110:
4. Ալ. Մարգարյան, Հայոցլեզվիքերականություն, ԵՊՀ հրատ., Ե., 2004, էջ 84:
5. Նազարյան Ա. Հ., Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Ե., 1993:
6. Պետրոսյան Հ. Զ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:
7. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը. –Լրաբեր հասարակական գիտությունների, 1971, N9, էջ 93-98:
8. Ֆլջյան Լ., «Մայրենի լեզվի դերը միջմշակութային կրթության համատեքստում». –Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, Ե., 2012, 2 (23), Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի «Լինգվա» հրատ., էջ 164:

Анаит Галстян-Некоторые вопросы словообразования и употребления армянских лингвистических терминов- Статья посвящена вопросам терминообразования и особенностям правильного употребления некоторых лингвистических терминов. Исследуются особенности лингвистической терминологии современного восточноармянского языка, в частности, закономерности возникновения вариантов терминов, терминирования слов и словосочетаний. На основе богатого фактического материала анализируются вопросы терминологического словообразования, рассматриваются особенности замены армянским эквивалентом терминов, содержащих иноязычный компонент. Анализируется явление частичной арменизации лингвистических терминов. Рассматриваются случаи употребления некоторых нерекомендуемых лингвистических терминов. Исследуются также некоторые случаи неправильного употребления наименований языков, распространенные в устной речи носителей языка. Анализируется взаимоотношения между терминами и понятиями մայրենի և օտար լեզու, ազգամիջյան հաղորդակցության լեզու, ամաջին, երկրորդ լեզու. Предлагается правильная формулировка концепции "Преподавание армянского как второго языка".

Anahit Galstyan- Some Considerations On Term Coininages In Armenian And Their Application- The present paper addresses some problems of term coinages in Armenian and their application. It reveals the main characteristics of the linguistic terminological layer of Contemporary Armenian in general, and the usage of term variants as well as term coinages derived from words and word combinations, in particular. Drawn upon rich language data, some regularities of term-creating process are analyzed, including the Armenian counterparts of foreign terms on the basis of equivalent translation as well as Armenization a of one of the components of a compound or a derivative word. Some examples of

unrecommended linguistic terms are discussed. Wrong usages of using the names of languages in oral speech are presented. The article also touches upon the relationship between terms expressing the notions: մայրենի, օտար լեզու, ազգամիջյան հաղորդակցության լեզու, առաջին, երկրորդ լեզու. It is suggested that for the purpose teaching Armenian in the Armenian Diaspora it is preferable to use 'Teaching Armenian as a Second Language', rather than 'Teaching Armenian as a Foreign Language.

ԱՆԿԱԽ ԱՐՄԱՏՈՎ ԵՎ ԿԱԽՅԱԼ ԲԱՅԱՀԻՄՔՈՎ
ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ
ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

Ղամոյան Լուսինե
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Բառակազմական տեսանկյունից բառապաշարի գերակշիռ մասը կազմող բաղադրյալ բառերը, ինչպես հայտնի է, իրար հետ կապված են որոշակի սերման հարաբերությամբ: Համանունները, որպես ելակետային սկզբնաձև՝ նախատիպ հիմք, կարող են գուգորդվել արմատների և ածանցների հետ և նոր բառեր կազմել: Ելնելով այս ամենից՝ սույն հոդվածում կառանձնացնենք համանունության այնպիսի մի ենթախումբ, որի մեջ մտնող համանունական շարքերից յուրաքանչյուրի առաջին ելակետային միավորը բառային ինքնություն գործածություն ունեցող՝ արմատական բառ է, իսկ երկրորդ կամ երրորդ (կամ այլ) եզրը՝ բայափոխ, ինչպես՝ *թափ¹ Տուժ, կարողություն/-թափ² Տթափել բայի հիմք*: համանունական շարքից թափ¹-ը սերող հիմք է մի շարք նոր բառերի համար:

Թափ¹ Տուժ, կարողություն/-ից կազմվում են՝

- 1) Ածանցավոր՝ *թափով* (սա իրականում *թափ*-ի գործ. հոլովն է, այժմ ունի Տարագ, արագությամբ: իմաստը),
- 2) բարդ բառեր՝ հետևյալ կաղապարներով՝ ա) գոյ.+գոյ.՝ *թափանհիվ, արծվաթափ, թափեթափ*, բ) ած.+գոյ.՝ *մեծաթափ, հզորաթափ, հսկայաթափ, սրաթափ, խոլաթափ*, գ) գոյ.+բայափոխ՝ *թափալից, թափընթաց*, դ) մակբայ+գոյ.՝

* «Ջահուկյանական ընթերցումներ, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ», Ե., «Էդիթ» Պրինտ» հրատ., 2013, էջ 93-96:

հանկարծաթափ: Բարդաճանցավոր ձևերից են՝ ահագնաթափ, ուժգնաթափ, մոլեգնաթափ, ահեղաթափ, թափավազք:

Թափ² Տթափել բայի հիմք¹-ը բառակազմության ժամանակ բարդ բառերում հանդես է գալիս որպես բաղադրող հիմք, ինչպես՝ գոյ.+բայահիմք կաղապարով բառերում՝ *լեռնաթափ, կարկտաթափ, մազաթափ, մոմաթափ, հետաթափ, հողաթափ, հուսաթափ, ձյունաթափ, տերևաթափ, ներկաթափ, աղեթափ, ատամնաթափ, բեռնաթափ, անիվաթափ, ծաղկաթափ, խավաթափ, թերթաթափ, թեփաթափ, թովաթափ, ցողաթափ* և այլն:

Աճանցավոր ձևերում թափ²-ից կազմվում են նոր բառեր, ինչպես՝ թափոն, թափիչ (ՏՁուլելու կամ թափելու կաղապար¹), թափկան, թափնոց (Տժող.՝ պտուղներ թափ տալու երկայն փայտե ձող. գոլա¹), թափծու(-ո) (արևմտհ., նշ. է՝ Տթափածո, ձուլածո¹, նան՝ փխբ. իմ.՝ Տշինծու, կեղծ¹), թափվածք, թափուր, *թափ(վ)ելիք* և այլն: Կազմվում են մի շարք բայեր՝ *թափել, թափահարել, թափոտել, թափթփել, արտաթափել:*

Թուխ¹Տսև, գորշ¹-թուխ²Տթխել բայի անկատարի հիմքը¹ համանունական շարքից թուխ¹-ը, մասնակցելով բառակազմությանը, ունենում է՝

1) աճանցավոր ձևեր՝ ինչպես՝ *թխավուն, թուխլիկ* (բաղադրությունները ստացել են *արմատի ցույց տված հատկանիշի մոտ, նրանից քիչ պակաս* բառակազմական նշանակություն):

2) բարդ բառեր՝ հետևյալ կաղապարներով՝ ա) ած.+գոյ.՝ *թուխածամ (որից՝ թուխածամավոր), թուխամազ, թուխաչ (որից՝ թուխաչյա, թուխաչվի), թուխավարս, թուխդեղ, թուխերես, թխադեմ, թխաթույր, թխակեղև, թխակերպ, թխապտուղ, թխատես, թխերանգ, թխագույն, թխաբեղ, թխաբաշ, թխագանգուր, ք)*

ած.+բայահիմք՝ *թխածուփ*, գ) ած.+ած.՝ *թխանուշ*, *թխագեղ*, *թխագորշ*, *սևաթուխ*, *կարմրաթուխ*, *թուխումուխ*, *թխաթուխ*:

Թուխ²-ը բառակազմության ժամանակ լինում է բաղադրող հիմք, ինչպես՝ ա) բարդ բառերում՝ *հացթուխ* (գոյ.+բայահիմք), *նորաթուխ* (ած.+բայահիմք), *ինքնաթուխ*¹ (դերանուն+բայահիմք), բ) ածանցավոր ձևերում սերող հիմք է դառնում, ինչպես՝ *թխածո* (ուր -աձո ածանցը բաղադրյալ արմատին հաղորդում է «նախատիպ բայի գործողության արդյունք» բառակազմական նշանակություն), *թխովի* (կազմվել է ածական՝ Տարմատի ցույց տված գործողությանը ենթարկված եղող կամ ենթարկվող՝ բառակազմական նշանակությամբ), *թխվածք*, *թխվածքեղեն*, *թուխս*²:

*Փոր*¹ «մարմնի մաս, որովայն» -*փոր*² «փորվածք, փորել բայի հիքը, փոս տեղ» համանունական շարքից փոր¹-ը, մասնակցելով բառակազմությանը, ունենում է իմաստային նրբություններ, այսինքն՝ արտահայտում է Տորովայն՝ իմաստը (մեծ մասամբ), արտահայտում է Տիացի միջուկ՝ իմաստը, ինչպես՝ *հացափոր*, արտահայտում է նաև Տորոշ իրերի ուռուցիկ մասը՝ իմաստը, ինչպես՝ *մեծափոր*, *հաստափոր*, *լայնափոր* և այլն:

¹ Ս. Գալստյանը նշում է, որ հայերենի բառարաններում թեև *ինքը* դերանվամբ կազմություններից արձանագրված են բազմաթիվ երկարմատ իսկական բարդություններ, իսկ այդ կազմությունների երկրորդ բաղադրիչների գերակշռող մասը բուն բայարմատներ են, սակայն գտնում է, որ այդ կապակցություններում *ինքն* դերանունը երրորդ դեմքի գաղափար չի արտահայտում, այլ դրա կիրառությունը ավելի շատ ածանցական է համարում, նշանակում է՝ §1.երկրորդ բաղադրիչի արտահայտած գործողության իրեն ուղղված լինելը, 2.երկրորդ բաղադրիչի արտահայտած գործողության առանց որևէ օգնության, ինքնին կատարվելը՝, Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978:

² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 203:

Փոր¹Տմարմնի մաս, որովայն՝-ից կազմվում են՝

1) ածանցավոր ձևեր՝ *փորոք, փորային, փորեղ,*

2) բարդ բառեր՝ հետևյալ կաղապարներով՝ ա) գոյ.+գոյ.՝ *փորաճարպ, փորատակ, փորացավ, փորընդերք, փորալող, բ) գոյ.+բայահիմք՝ փորաբաց//փորբաց, փորախոս, փորապաշտ, փորաքարշ, գ) ած.+գոյ.՝ լայնափոր, կլորափոր, մեծափոր, հաստափոր, դ) դերբայ+գոյ.՝ ուռածափոր,*

3) Բարդածանցավոր բառեր՝ *փորաթեփուկ, փորախոռոչ, փորխոսություն, փորհարինք* կամ *փորհարություն, փորացավանք:*

Փոր²Տփորվածք, փորել բայի հիմքը, փոս տեղ՝-ից կազմվում են՝

1) ածանցավոր ձևեր, ինչպես՝ *փորեք* (ուր փոր²-ը ունի Տփայտե աման՝ փորված կոճղի մեջ՝ իմաստը), *փորոք* (Տխորշ՝ իմաստով), *փորում, փորածո, փորակ, փորատ, փորիչ, փորվածք, ընդփորվածք, արտափորիչ* և այլն,

2) բարդ բառեր՝ հետևյալ կաղապարներով՝ ա) գոյ.+բայահիմք՝ *գետնափոր, բահափոր, գերեզմանափոր, այգեփոր, փայտփոր, վիմափոր, հորափոր, հողափոր, հիմնափոր, ժայռափոր, խորշափոր, առվափոր, արծաթափոր* ³, բ) մակբայ+բայահիմք՝ *նորափոր, կրկնափոր* և այլն,

3) բարդածանցավոր բառեր՝ *ատամնափորիչ, փորատադույլ, խրամատափոր:*

Եո¹ «երեք»-ից կազմվում են՝

1) ածանցավոր ձևեր, ինչպես՝ *եռյակ, եռակի,*

2) բարդ բառերում՝ իբրև բարդ բառի առաջին բաղադրիչ սերող հիմք, արտահայտում է «երեք» իմաստը (ընդ որում նման

³ Ի դեպ, *փորագիր* բառը, որպես նախատիպ, հիմք է դառնում մի շարք բառերի համար՝ *փորագրագար, փորագրանկար, փորագրատուն (հնգ.), փորագրարվեստ, փորագրական, փորագրիչ, փորագրովի, փորագրություն, փորագրում, փորագրել, փորագրելիք* և այլն:

բարդությունների բաղադրիչներն ունեն ստորադասությամբ կապված հարաբերություններ՝ որոշիչ-որոշյալ): Այսպես՝ ա) թվ.+գոյ.՝ *եռաբերան//եռաշերք, եռագիծ, եռագլուխ, եռագույն, եռաթև, եռաթիվ, եռաթերթ, եռալար, եռալեզու, եռախավ, եռածալ, եռականջ, եռակատար, եռակող, եռահատոր, եռահարկ, եռաձայն, եռաճյուղ, եռամաս, եռանիշ, եռանիվ, եռաշերտ, եռավանկ, եռատող, եռափեղկ, եռափող, եռատոն* և այլն:

Բարդաձանցավոր բառերից են՝ *եռածորակ, եռանկյուն, եռահնչյուն, եռադաշտային, եռադաշտություն, եռակողմյա//եռակողմյան, եռահարկյան, երկողանի, եռոտանի* և այլն: Բ) Կան մի քանի բարդ բառեր էլ թվ.+բայսահիմք կաղապարով, ինչպես՝ *եռակազմ, եռահյուս, եռաբաշխ* և այլն: *Եռաբաժին* բարդաձանցավոր բառը կարելի է դիտել և՛ թվ.+գոյ.՝ «երեք բաժին», և՛ թվ. + բայսահիմք՝ «երեքի բաժանված»:

*Եռ*² «*եռալ բայի արմատ*»*-ից կազմվում են՝

1) աձանցավոր ձևեր՝ *եռք* (գործողության անուն բառակազմական նշանակությամբ), *եռում, եռանդ, եռման* (նման աձանցով բառերն հատուկ են բարբառներին, սակայն անցել են խոսակցականին և մտել գրական լեզու), *եռուն, եռացկոտ* (ունի արմատի *ցույց տված գործողության կատարմանը տրամադիր լինելու* բառակազմական նշանակությունը), *եռացկուն//եռացկան* բաղադրության մեջ բայարմատից կազմվել է ածական՝ *արմատի ցույց տված գործողության կատարման հակում ունեցող կամ մշտապես կատարող* բառակազմական նշանակությամբ:

Ասենք, որ *եռ*²-ը կարող է նաև փոխաբերական իմաստ ունենալ, ինչպես, օրինակ՝ *եռուն* բառը նշանակում է «եռացող»,

**Եռ*²-ը կարող է ինքնուրույն գործածություն ունենալ (ինչպես՝ Եռը իջել էր:) Կարող է հարադրական բայ դառնալ, ինչպես՝ եռ գալ=եռալ: Շամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.1, Ե., 969, էջ 556:

բայց ունի նաև փոխաբերական իմաստ՝ Տրուռն, աշխույժ: Այսպիսի իմաստ կարելի է տեսնել նաև «*եռանդ*» բառի մեջ, որը նշանակում է «ներքին ուժ, աշխուժություն», թեև արդի հայերենի համար որպես ածանց լիովին չի գիտակցվում *անդ* ձևույթը: *Եռանդ* բառից էլ ունենք՝ *եռանդագին*, *եռանդայի/եռանդայից*, *եռանդահորձ* (հզվդ.), *եռանդոտ*, *եռանդուն* և այլն:

2) Բարդ բառեր՝ հետևյալ կադապարներով՝ ա) գոյ.+գոյ.՝ *եռուքոր*. մի փոքր տարակուսանք կա, քանի որ այստեղ տեսնում ենք և՛ գոյ.+գոյ. (հիշենք եռ²-ի ինքնուրույն գործածության մասին), և՛ բայահիմք-բայահիմք, նույնը կարելի է ասել նաև *եռուզեռ*, *եռնեփ* բառերի մասին (չնայած այստեղ ավելի շատ «եռալը և եփելը» իմաստն է, այսինքն՝ բայահիմք+բայահիմք):

Նշենք նաև, որ *եռուքոր* բառի մեջ եռ²-ը ունի «մարմաջ, քոր, մորմոք, գրգիռ» փոխաբերական իմաստը: Փոխաբերական իմաստ ունի եռ²-ը նաև «*եռնունք*» բառում, որ նշանակում է «հուզմունք» (ինչպես նկատեցինք, վերոհիշյալ բարդությունները (*եռուքոր*, *եռուզեռ*, *եռնեփ*) համադասական հարաբերություն են արտահայտում. շաղկապական հարադրություններից ստացված կցական բարդություններ են):

բ) մակբայ+բայահիմք, ինչպես՝ *մշտաեռ*:

Փրփրաեռ բառն ունի «աստիկ փրփրած» իմաստը:

Ինչպես ասացինք, եռ²-ը *եռալ* բայի հիմքն է՝ արմատը, որը կարող է ունենալ նաև «բորբոքել, գրգռել» փոխաբերական իմաստը: *Եռալ* բայից էլ ունենք *եռացնել* պատճառական ձևը:

Ասենք նաև, որ եռ¹ «երեք»-եռ² «եռալը» երկանդամ համանունական շարքին կարող ենք ավելացնել եռ³, որն ունի «գիծ, գողում» իմաստը, ինչպես՝ *եռակցում*, *եռակցել*, *եռացում*, *եռացնել*, *եռքար* և այլն:

Ուսումնասիրելով արմատական համանունների բառակազմական հնարավորությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ համանունական շարքի անդամները, հանդես գալով երկու ձևով՝ իբրև անկախ գործածվող արմատներ և մասամբ կախյալ, տարբեր հաճախականությամբ կարող են գուգորդվել հիմնական և երկրորդական ձևայինների հետ՝ կազմելով նոր բառեր՝ բառակազմական կաղապարներում պահպանելով իրենց բուն բառիմաստը, երբեմն էլ ձեռք բերելով նոր, փոխաբերական իմաստներ:

Ghamoyan Lusine – Semantics of the Word-building of the Homonyms with the Independent Root and Dependent Verbal Stem. – Homonyms are law-governed phenomenon, because it's impossible to create an apart form for each concept and its corresponding word-meaning. The homonyms can appear in two forms: as independently using roots and partly dependent, which can associate with an equivalent and subordinating relation with basic and secondary morphemes, composing new words, preserving their essential word-meaning in the word-formative models, and sometimes acquiring new, metaphoric meanings.

ԻՐԱԴԻՍԱՅԻՆ ԲԱՌԵՐՆ ՈՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ*

Ղամոյան Լուսինե
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Լեզվի խոսակցական տարբերակը (խոսակցական լեզուն) գրական լեզվի նորմային չնախապատրաստված, անկաշկանդ խոսքն է սովորական պայմաններում, ոչ պաշտոնական միջավայրում: Ոչ պաշտոնական ինքնաբուխ և անկաշկանդ խոսքը հիմնականում զերծ է լեզվական հսկողությունից: Այնուհանդերձ, մարդկանց որոշակի մասը քիչ թե շատ լուրջ պատասխանատվություն է ունենում լեզվի նկատմամբ, թեկուզ և ենթագիտակցաբար՝ հսկում է սեփական խոսքը:

Ստորև անդրադառնում ենք երթևեկության ժամանակ փոխադրամիջոցներում իրացվող խոսքին, թե որքանով է լեզուն պահպանում իր կանոնները, որքանով է շեղվում այդ կանոններից, և ինչքանով են մարդիկ բարեխիղճ սեփական լեզվի նկատմամբ:

Ուսումնասիրությունը հենվում է հիմնականում ոչ բացահայտ՝ աննկատ արված մեր գրառումների վրա:

* Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 3-րդ գիտաժողով, Երևան, «Էդիթ պրինտ», 2013, էջ 79-83:

Խոսակցական լեզվում հանդիպող շեղումները, որոնք առաջին հայացքից անկանոն են թվում, իրականում հետևանք են այն արտալեզվական գործոնների, որոնք առկա են տվյալ հաղորդակցական իրադրության մեջ՝ ոչ պաշտոնական միջավայր, անմիջական շփում, խոսքի չնախապատրաստվածություն, կենցաղային, առտնին թեմատիկա և այլն:

Պետք է նկատել, որ տարբեր իրադրություններում գործածվում են բառեր, տերմիններ, արտահայտություններ ու բառակապակցություններ, պատրաստի ձևակերպումներ և կաղապարներ, որոնց օգնությանը դիմում է խոսողը հաղորդակցվելիս: Դրանք այնպիսի խոսքային արտահայտություններ են, որոնք արդեն ամրակայված են համապատասխան իրադրություններին և ընդունված են հանրության կողմից: Օրինակ՝ քաղաքային փոխադրամիջոցներին հատուկ նմանատիպ իրադրային արտահայտություններից են՝ «Քանի՞ կանգառ է մինչև...», «Ո՞րն է հաջորդ կանգառը», «Դուք իջնու՞մ եք», «Որքա՞ն պետք է վճարեմ», «Կներեք, ո՞ր համարի ավտոբուսը նստեմ, որպեսզի...», «Չէի՞ք ասի, այստեղից ավտոբուս գնու՞մ է...», «Այս տեղը զբաղվա՞ծ է», «Ոչ մի ազատ տեղ չկա», «Տոմսեր ստացե՛ք, խնդրեմ», «Դուք սխալ ավտոբուս եք նստել», «Դուք ազա՞տ եք» և այլ արտահայտություններ:

Խոսակիցներն իրենց արտահայտություններում համեմատաբար ազատ են: Այստեղ հաճախ են միախառնվում գրական և ժողովրդախոսակցական լեզվի տարրերը, որոնցում մեծ դեր է կատարում խոսողների ներքին կուլտուրան: Ոմանք հսկում են իրենց խոսքը և խուսափում են ոչ գրական բառեր, արտահայտություններ և քերականական ձևեր գործածելուց, ոմանք էլ, ընդհակառակը, ոչ միայն ազատորեն տուրք են տալիս ժողովրդախոսակցական լեզվին, այլև անփութորեն իրենց խոսքը խճողում են բարբառային և ժարգոնային տարրերով:

Քաղաքային փոխադրամիջոցներում հանդիպող իրադրային բառերն ու արտահայտությունները դասակարգել ենք ըստ հնչյունական, բառական, քերականական հատկանիշների: Այսպես՝

1. Ձայնավորների սղումը հայերենում հաճախակի երևույթ է (ինչպես՝ *երսուն, քառսուն*), իսկ բաղաձայնների անկումը սակավ հանդիպող երևույթ է: Երբեմն, սակայն, փոխադրամիջոցներում հանդիպում ենք նման երևույթների, օրինակ՝ *ս* բաղաձայնի անկում. «*Ինչքա՞ն եմ տալի*», «*Էն խանութը տենում ե՞ս, ապե՛, ա՛յ ըտե պահի՛, դ-ի անկում՝ «Էս կոմ արի՛, թո նստի»*, «*Ըստե//ընդե պահի*». խոսքի արագ տեմպում հնչյունական սղումների արդյունքում երբեմն բառից մնում է միայն մի փոքր նյութական

արտահայտություն՝ «Մտե՛ նստեք», «Հոպա՛ր ջան, ստե մի տե պահի՛», «Տեղ տվեք, թո նստի» ք-ի անկում՝ «Էսի մի հատ ստացի՛», «Պահի՛, ապե՛», «Մի՛ կանգնի, ապե՛, նստի՛», «Քուրի՛կ ջան, տու՛ սումկեղ պահեմ» և այլն:

Ինչքան դերանվան վերջին բաղադրիչը՝ քան-ը արտասանվում է քամ՝ «Ինչքա՛մ ա», «Ինչքա՛մ պիտի տամ» և այլն. սա ևս բարբառներին հատուկ երևույթ է:

Երբեմն բառերն արտասանվում են ավելորդ հնչյուններով, որոնք դարձյալ հատուկ են բարբառներին, ինչպես՝ «Ծանդր չի՞, քու՛րս, տու՛ բռնեմ», կամ՝ ելնեկ բայը՝ հ հնչյունի հավելումով՝ «Հեկի՛, թող նստեն», «Հեկա» և այլն, բառի հնչյունների աղավաղումներ կան՝ կանգնել բայի փոխարեն՝ կայնել, կայնի, կարո՞ղ ես-ի փոխարեն՝ կարա՛ս, այդպես նաև՝ կարամ և այլն:

Հանդիպում են քեզի, ձեզի և այլ ձևեր, որոնք արևմտահայերենում են ընդունված, կամ բարբառներին են հատուկ՝ «Ձեզի ու՛րդե ա հարմար», «Քեզի որտե հարմար ա, ընդե էլ պահի»:

2. Հաճախակի կարելի է լսել հասարակաբանություններ, օրինակ ավտոբուսում՝ «Ապե՛, մի հատ հետևո՛ք քա՛ց՝ իջնենք, էլի», «Էս էլ դեմս կանգնեց, ես քո անասուն հերն եմ անիծե» (վարորդի խոսքերից), «-Կամա՛ց, ա՛յ ոչխար (վարորդը՝ դուռն ուժեղ

փակողին)» և այլն, ժարգոնային բառեր՝ *ապե, արա*, բարբառային կամ բարբառային հիմքի վրա առաջացած զանազան բառեր, ինչպես՝ «*Կանգառում կայնի՛, ապե՛*», «*Ավտոկայան էթում ա՞ էսի*», «*Ըտենց ես, չէ՞, գնալու*», «*Ընդից էկող ուրիշ ի՞նչ կա*», «*Ըտուց ո՞ր համարը նստեմ*» և այլն, այդպես նաև՝ *ըստեղ, հավքել, տենալ, խի, բա, հլա, յա, ըսքան, ըստուց, էրկու, իրեք, լեն փողոց, էս յանը, էն յանը* և այլն:

Բառերն օգտագործվում են կրճատումներով: Մեծ հաճախականություն ունեցող բազմավանկ բառերը միտում ունեն արտասանվելու հատումներով, ինչպես՝ *մագ, ավտո*:

Քաղաքային փոխադրամիջոցներում հաճախակի կարելի է լսել բազմաթիվ օտարաբանություններ՝ *մերսի, սիձեչնի, սվետաֆոր, նառուշենի, պրյամո, զնակ, աստանովկա, ռեյս, պասսաժիո, մառշուտկա, մոմենտի տակ, զադնի տալ, արգոն անել, աստանովկա, ապասնի* (վարորդի խոսքերից) և այլն:

3. Տարածված երևույթ է նաև փոխանունությունը՝ «*Մխալ համար եք նստել*», «*Հաջորդին կկանգնեք*»: Այսպես՝ փողոցն անվանելիս կապակցության գոյական անդամը սովորաբար փոխանունաբար զեղչում են՝ «*Սայաթ-Նովայի անկյունում կպահեք*», «*Գոմիտաս հասնում եք, չէ՞*», «*Մքովյանո՞վ եք գնում*», կամ հաճախ հիմնարկի, հաստատության պաշտոնական

անվանումը կրճատում են, օրինակ՝ «Մանկավարժականի մոտ կկանգնեք, հա՛», «Ստանիսլավսկի գնու՛մ ես» և այլն:

Որոշ «ինքնատիպություն» կա հոլովների կիրառության մեջ: Այսպես, օրինակ, տրականը ներգոյական հոլովի փոխարեն՝ «Հաջորդին իջնու՛մ եք», «Մյուսին իջնում եմ», որը շատ սովորական է տրանսպորտում: Կամ, օրինակ՝ «Իջնելուց տոմս կաննե՛ս» (ճիշտը՝ իջնելիս), «Կանգառը պահի՛» (ճիշտը՝ կանգառում) և այլն:

Հանդիպում ենք այնպիսի երևույթների, որոնք մերժելի են թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում: Օրինակ՝ «Իմը ստացված ա», «Այստեղից բռնվեք, չընկնեք». վերջինս ռուսաբանություն է, որն արմատացել է մեր ժողովրդի մեջ:

Եվ, ընդհանրապես, հայերեն խոսակցական լեզվում ձևաբանական շեղումները գրական նորմայից հաճախակի են, իսկ դա մեծ մասամբ պայմանավորված է բարբառների ազդեցությամբ:

Որոշ շաղկապներ, դերանուններ և այլ բառեր ու բառակապակցություններ, շատ հաճախ շարահյուսորեն չկապվելով նախադասությանը, հանդես են գալիս թարմատարի դերում, որը շատ բնորոշ է խոսակցական լեզվին, այսպես՝ «Էսի մի հատ ստացե՛ք, կայարանում եմ, էլլի, իջնելու»: Այդ դերում հաճախ հանդես է գալիս *հա* եղանակավորող բառը հարցական

նշանակությամբ, որի պատասխանը չի պահանջվում.
«Կանգառում կկանգնեք, հա՞»:

4. Առօրյա խոսակցական լեզուն լի է հարցական, բացականչական, պատասխանական ամենանրբին իմաստային երանգներ արտահայտող բազմապիսի նախադասություններով:

Փոխադրամիջոցներում, օրինակ, զգալի տեղ են գրավում հարցական նախադասությունները, և սովորաբար հարցական նշանը դրվում է օժանդակ բայի վրա (եթե նախադասության մեջ հարցական բառ չկա): Օրինակ՝ «*Հիմա ե՞ք իջնում*», երևույթ, որը գրական լեզվում սխալ է համարվում:

Տարբեր հնչերանգով արտասանված միևնույն նախադասությունը մի դեպքում հանդես է գալիս որպես հարցական, մյուս դեպքում՝ հրամայականի երանգ ունեցող արտահայտություն, ինչպես՝ «Կանգառում կկանգնե՞ք» և «Կանգառում կկանգնե՛ք»:

Փոխադրամիջոցներում գործածվում են պարզ նախադասություններ, բառերը գործածվում են ուղղակի իմաստով, խոսքը հակիրճ է: Երբեմն էլ հնչում են բարդ նախադասություններ, ինչպես՝ «*Որ հասնեք կանգառին, կկանգնեք*», «*Էսի մի հատ ստացեք, կանգառում կպահեք*»: Հանդիպում են անդեմ նախադասություններ՝ «*Կանգառից դուրս կանգառ չպահանջե՛լ*»,

«Իջնելուց առաջ նախապես զգուշացնել»: Իրադրական մի շարք հանգամանքների շնորհիվ (անմիջական շփում, իրադրության իմացություն) որոշ ձևակերպումներ տրվում են նվազագույն սեղմությամբ, խոսքի զեղչումների, թերասածության հնարավորությունները շատ ավելի մեծանում են, և այն բոլորովին էլ չի առաջացնում ըմբռնման դժվարություն, մտքի աղավաղում, քանի որ վարորդն ու ուղևորը միմյանց հասկանում են, կարելի է ասել, կես բառից՝ նույնիսկ ձեռքի շարժումներ, դիմախաղ և այլն: Այսպիսով՝ խոսքի անկաշկանդության շնորհիվ կարող են երևան գալ խոսակցական լեզվին բնորոշ մի շարք զեղչումներ՝ *«Իջնո՛ղ»*, *«Ստացե՛ք»*, *«Իջե՛ք»*, *«Կանգառում: Մեկ հատ:»*, կրկնություններ՝ *«Իջի՛, իջի՛»*, *«Նստի՛, նստի՛»*, շարադասության և բառերի կապակցման անկանոնություններ, ցուցական դերանունների առատություն՝ *էս, էտ, էն, էստեղ, էնտեղ, ըստե, ընդե, ստե, ստուց, ըստուց, ընդից* և այլն:

Չպետք է մոռանալ, որ ներկայացվող ամեն մի արտահայտություն կարելի է դասակարգել երկու խմբի մեջ. արտահայտություններ, որոնք հատկանշական են գրական լեզվին, հետևաբար, բնական է, որ դրանք գործածում են կրթված մարդիկ, և արտահայտություններ, որոնք բնորոշ են առօրյա խոսքին, և դրանք հիմնականում գործածում են այնպիսի մարդիկ, որոնք

նույնիսկ նման իրադրություններում ի վիճակի չեն վերահսկելու իրենց խոսքը, երբեմն էլ փորձելով խառնում են առօրյա-խոսակցականը գրական խոսակցականին՝ խոսքը դարձնելով շատ անփույթ:

Lusine Ghamoyan-The situational

Words and Expressions in the Urban Transport.-The colloqu-

ial language is used in unofficial environment, so it has spontaneous and unembarrassed nature, therefore lack of the control to regularity of the speech. Though the certain number of people is always guarding own speech subconsciously with apart responsibility as well, as in the urban transport. In the following article we touched upon the situational words and phrases used in the urban transport.

Лусине Гамоян - Ситуативные слова и выражения в городском транспорте.- Разговорный язык используется в неофициальной среде, поэтому он имеет спонтанный и неэмбаррированный характер, поэтому отсутствует контроль за регулярностью речи. Хотя определенное количество людей всегда подсознательно следит за своей речью, не считаясь с ответственностью, как, например, в

городском транспорте. В следующей статье мы затронули ситуативные слова и фразы, используемые в городском транспорте.

ԿՐՈՆԱԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՇԵՐՏԱԲԱՆԱԿԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

Պապիկյան Սիլվա

ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Բառապաշարի ցանկացած մասնագիտական համակարգ շերտաբանական դասակարգման ենթարկելիս այն դիտում ենք որպես մի կայուն ամբողջություն, որ ներառում է բոլոր այն բառերը, որոնք գործածվել կամ գործածվում են գրականության և մամուլի մեջ՝ անկախ նրանց գործածության հաճախականությունից, գործառական ոլորտից, տարբերակային բնույթից և այլն: Յուրաքանչյուր բնագավառի տերմինաբանության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ներառում է ն՛ բնիկ, և՛ փոխառյալ, և՛ հին շրջանից ավանդված տերմիններ, ինչպես նաև նորակազմություններ: Տերմինահամակարգը, ըստ այդմ, կազմված է տարբեր ենթաշերտերից, որտեղ յուրաքանչյուր միավոր հանդես է գալիս որպես տվյալ բնագավառին հատուկ հասկացությունների ամբողջությունը ներկայացնող համակարգի տարր:

*Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ (հանրապետական գիտաժողով), Գիտական նյութերի ժողովածու, Վանաձոր, ՄԻՄ տպագրատուն, 2013, էջ 175-183:

Կրոնակեղեցական տերմինահամակարգը, ըստ շերտերի, ներկայացնում է հետևյալ պատկերը.

ա) *Ընդհանուր կրոնակեղեցական տերմինների շերտ*: Այս շերտին պատկանող տերմինները ընդհանուր են հայերենի զարգացման բոլոր փուլերում՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, ինչպես՝ *աբեղա, աղոթք, ամեն, ապաշխարություն, Աստված, բազին, դժոխք, դրախտ, եղեմ, եկեղեցի, եպիսկոպոս, երեց, խորան, կաթողիկոս, կրոն, հեթանոս, հրաշք, մատաղ, մարտիրոս, մեղք, նշխար, պատարագ, օրհնություն* և այլն:

բ) *Հին կամ գրաբարյան տերմինների շերտ*: Այս շարքի տերմինները գործածական են եղել գրաբարյան շրջանում, և եթե ժամանակակից կրոնական տերմինահամակարգում գործածվում են, ապա դրանք ոչ թե պատմական ժառանգորդությամբ են անցել այլ, այսպես կոչված, ներքին փոխառություններ են:

Բերենք հինհայերենյան շրջանին պատկանող կրոնակեղեցական տերմինների օրինակներ՝ *ադեն, ազգաբուն* (սատանա) *ախտարմար* (աստղահիմա), *ապաշաւ, բուտ* (եկեղեցու տեսուչ), *դեն, դենիմազդեզն, խորգ* (մազեղեն քուրձ ապաշխարության համար), *կախարդասար, յագ, յաշտ, քաղդեայ, քովմարիմ* (քուրմեր) և այլն:

զ) *Միջինհայերենյան կրոնակեղեցական տերմինների շերտ*¹: Այս շերտի տերմինները վկայված են 12-16-րդ դարերի ինքնուրույն և թարգմանական գործերում, որոնք կարող են լինել գրաբարյան բառերի հնչյունափոխված ձևեր, գրաբարում չվկայված բառեր, ուշ շրջանում կատարված փոխառություններ, ինչպես՝ *աղոթակողմն*, *աղոթակոչ* (աղոթքի կանչող), *աղոթյարդար* (աղոթարար), *արքայուն* (քրիստոնյա), *աւազերէց* (ավազ քահանա), *աւազիրիցութիւն*, *դժոխահրաւեր*, *էրէց*, *էրէցկին*, *էրէցփոխան*, *ժամ* (եկեղեցի), *ժամիկ* (նվազ. ժամ-ի), *ժամագրկունք* (ժամագիրք), *ժամկոչ/ժամայկոչ*, *ժամգարնող* (եկեղեցու զանգերը հնչեցնող), *ժամհարել*, *ժամհրօք* (եկեղեցու զանգերը հնչեցնելու պահը), *ժամտուն* (եկեղեցի), *ժամրարութիւն* (պատարագիչ լինելը), *եկեղեցպան* (եկեղեցու պահապան), *հոգեփրկանք*, *հոգին առնիլ*, *հոգին հանիլ*, *հոգիակորուստ*, *հոգոբաժին* (հոգեբաժին), *մահմատական/մահմատիկոս* (մահմեդական), *մեղացու* (մեղք գործած), *մեղկան* (մեղավոր), *մեղկունք* (մեղք), *մեղսեթող* (մեղքերը թողած), *նշխարատուն* (նշխարները պահելու փոքր շինություն), *պատարագատետր* (խորհրդատետր), *պատարագելի* (զոհ մատուցելու ենթակա), *ջատու* (վիուկ), *ռատուլ* (մահմեդական առաքյալ), *սաղմոսասէր*, *սարկաւաք/սարկաւաքք*, *սատանայա-*

¹ Օգտվել ենք Ռ.Ղազարյանի և Հ.Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանից», հհ.1-2, Ե., 1987-1992 թթ.:

գիւտ (սատանայից ծագած), *սիրիլ* (կին մարգարե, մարգարետուհի), *քահանայեցնել*, *քահանայթաղէք*, *քարոզգիրք*, *քաւչապետութիւն* (քահանայապետություն), *քրիստոնէ* (քրիստոնյա), *քրիստոսադաւ*, *քրիստոսախնամ*, *քրիստոսաճաւալ* (Քրիստոսից ծավալված), *քրիստոսահիմն*, *քրիստոսաշէն* (Քրիստոսից ստեղծված), *օրհնաբանելի*, *օրհնաբեր*, *օրհնաբուղիս*, *ֆալաք* (բախտ), *ֆետայ* (ձոն, մատաղ), *ֆիրանկ/ֆոանկ/ֆրանք* (կաթոլիկ), *ֆրեր* (եղբայր՝ Արևելքի երկրներում կաթոլիկ միսիոներների ընդհանուր անվանումը) և այլն:

դ) *Արևմտահայերեն կրոնակեղեցական տերմիններ* ² :
Ստորև բերվող բառերը պատկանում են արևմտահայերենին՝ *բանկալ* (տեղ, ուր մոմ են վաճառում), *գերեզմանօրհնողչէք*, *եղամ* (գավիթ), *գոմբ* (աբեղայի կնգուղ), *ընծայանոց* (պահարան, ուր պահվում են պատարագի նշխարը և գինին), *ժամանոց* (պատարագի գինու սրվակ), *ժամավոր* (եկեղեցի գնացող), *ժամարար* (պատարագիչ քահանա), *ժամոց* (պատարագիչին տրվող նվեր), *խոռել* (եկեղեցական կարգուկանոնը խախտել),

² Օգտվել ենք Ռ.Սաքապետոյանի Կրոնակեղեցական և ծիսական բառերը արևմտահայերենում» հոդվածից. «Էջմիածին», 2003, Ժ-ԺԱ, էջ 102-107: Հեղինակը գրում է. «Վերջիններս, թվում է, պետք է ընդհանուր լինեին հայերենի բոլոր փուլերի և շերտերի համար...., սակայն դեր են խաղացել հասարակական-քաղաքական տարբեր միջավայրերը, որոնցում 20-րդ դարում հայտնվեցին մեր ժողովրդի երկու հատվածները և մեր լեզվի երկու ճյուղերը»:

խոստուկ (խոստովանող), *ծիսատեր* (հոգևոր հովիվ), *ծիսատուն* (1. քահանա ունեցող ընտանիք, 2. քահանայատուն), *ծֆուլ* (վեղար), *կեռոն* (վրան մոմ կրող հատուկ գավազան), *կորբան* (1. գոհ, մատաղ, 2. կամավոր նվերների գանձանակ), *հոգեբաժին* (տուրք քահանային՝ ննջեցյալի տիրոջից), *ձեռքպագ*, *ձոնարան*, *ճաշակ* (հաղորդություն), *մատրնապետ* (մատուռի պատասխանատու), *նվիրանոց* (սկիհ), *շաբաթանալ* (հանգստանալ), *շուշտակ* (կնոջ մահից հետո կուսակրոն դարձած մարդ), *պահքկեր* (պահքը խախտող), *տափանակ* (գանձանակ), *Տեր պապա* (քահանա), *փակակալ* (եկեղեցու բանալիները պահող մարդ) և այլն:

ե) *Բարբառային և ժողովրդախոսակցական բառերի շերտ*: Բարբառային և ժողովրդախոսակցական լեզվի բառերը գրական լեզուն հարստացնելու կարևոր աղ-բյուր են: Այս շերտի բառերի մի մասը ժամանակի ընթացքում ձեռքագատվում է բարբառայնությունից և համալրում գրական լեզուն: Այս բառերի շերտը պայմանականորեն կարելի է համարել կրոնական տերմիններ³: Կարող ենք նշել՝ *անեծքբերան* (շատ անիծող), *անեծքաչոր անել* (անեծքով մեռցնել), գիր անել (կախարդական գիր գրել), *թաթախման գիշեր* (Ծննդյան և Զատիկի ճրագալույց

³ Օգտվել ենք Սահակ վրդ. Ամատունու «Հայոց բառ ու բան»-ից, Վաղարշապատ, 1912:

երեկոն և գիշերը), *թաթախումն* (ընթրիք, որ ուտում են Օննոյան և Ջատկի ճրագալույց երեկոները), *իզնահողեք/եզնահող* (նոր ննջեցյալի թաղման հաջորդ օրը այգը կատարելը), *իրիցկին*, *ժամահաց*, *ժամտուն*, *խաչ հանել*, *հրեշտակամորթ* (սատկելու մոտ անասունին մորթելը), *մեղաց որդի* (մարդ), *մեռելահաց*, *մեռելատուն*, *մեռոնեփեք*, *ողորմաթաս*, *ողորմածիկ*, *տիրօխնի*(երեցկին) և բազմաթիվ այլ բառեր:

զ) *Նոր բառերի շերտ*: Այս խմբին պատկանող բառերը առաջացել են նոր շրջանում. ստեղծվում են հայերենի բառակազմական հնարավորությունների օգտագործումով, ինչպես՝ *անխաչ*, *աստվածաբարո*, *աստվածակենտրոն*, *դրախտանման*, *դյուցազներգություն*, *խաչագող*, *կրոնուսույց*, *հավատուրաց*, *հավատաքննություն*, *մոգարվեստ* և այլն:

Գարեգին Առաջին կաթողիկոսի լեզվի բառապաշարի նորաբանություններին է նվիրված Հ.Մեսրոպյանի «Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի երկերի բառարանը»⁴, որում տեղ են գտել ոչ միայն նոր բառեր, այլև բառերի նոր իմաստային կիրառություններ. կան կրոնական տերմիններից բաղադրված բառեր, ինչպես՝ *աղօթագիր*, *աղօթաճաճանչ*, *աղօթամրմունջ*, *աղօթասույզ*, *աստառածաբանակաօրեն*, *աստռածաէջ*,

⁴ Հ. Մեսրոպյան, Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի երկերի բառարան, Մոնրեալ, 2000:

*աստուածաթափանց, աստուածաճանաչում,
աստուածաճառագայթ, դրախտագուարձ, եկեղեցականօրէն,
ծիսավայր, հրաշակերպել, միւռոնագործութիւն, քրիստոնէադրոշմ,
քրիստոնէաթաթաւ, քրիստոնէականօրէն, քրիստոսաբարբառ,
քրիստոսակոխ* և այլն:

Նոր բառերի շերտին են պատկանում նոր ժամանակներում կատարված փոխառությունները: Եվրոպական լեզուներից (իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն) փոխառյալ բառերին նվիրված Հ.Աճառյանի «Եւրոպական փոխառեալ բառեր հայերէնի մէջ»⁵ աշխատության մէջ, որն ընդգրկում է մոտ 860 բառամիավոր, կրոնական բնույթի բառեր արձանագրված չէին:

*Կրոնակեղեցական տերմինաբանության համալրման
աղբյուրները*

Ինչպես ցանկացած գիտակարգի, այնպես էլ կրոնակեղեցական տերմինահամակարգի համալրումը կատարվում է երկու ճանապարհով՝ ներքին և արտաքին: Ներքին ճանապարհը տերմինահամակարգի համալրումն է իմաստաբանական միջոցով, հայերէնի բառակազմական միջոցներով ստեղծված բառերով, ինչպես նաև ներքին

⁵ Տե՛ս Հ.Աճառեան, Եւրոպական փոխառեալ բառեր հայերէնի մէջ, Վիեննա, 1951:

փոխառություններով՝ արտաքին ճանապարհը օտար լեզուներից կատարված փոխառություններն են:

Ա. 1. Տերմինակերտման համալրման ներքին աղբյուր է իմաստաբանական միջոցը, երբ համընդհանուր բառապաշարի բառերը իմաստային վերափոխման են ենթարկվում. տեղի է ունենում համագործածական բառի հարմարեցումը ավելի նեղ մասնագիտական բնագավառի: Պատմականորեն դա բացատրվում է նրանով, որ գիտական հասկացությունները առաջանում են աշխարհի ճանաչողության ընդհանուր գործընթացում և առաջացած հասկացությունների համար ստեղծվում են ոչ միայն նոր տերմիններ, այլև օգտագործվում են լեզվում եղած բառերը: Այս դեպքում տեղի է ունենում համագործածական բառի իմաստի կոնկրետացում (սովորաբար՝ բառիմաստի նեղացում). համագործածական բառը տերմինացվում է. մտնելով որոշակի տերմինահամակարգ՝ նոր հարաբերությունների մեջ է մտնում տերմինահամակարգի մյուս միավորների հետ և ձեռք է բերում իմաստային նոր երանգ:

⁶ «...այդ բառերը մեր գրական լեզվի մեջ գործածվում են որպես բարբառներից կամ ժողովրդախոսակցական լեզվից, գրաբարից, միջին հայերենից կամ արևմտահայերենից կատարվող ներքին փոխառություններ, ապա դրանց փոխառությունը մեզ համար բառապաշարի հարստացման ներքին միջոց է»:
Է.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1978, 173:

Կարելի է նշել որոշակի թվով կրոնակեղեցական տերմիններ՝ ստեղծված այս ճանապարհով: Այսպես, Մաղաքիա Օրմանյանի «Ծիսական բառարանի»⁷ երկրորդ մասը (էջ 48-126) ընդգրկում է եկեղեցական զանազան առարկաների անվանումներ՝ զգեստ, գործիք, զարդ և այլն, և որոնց ստվար մասը ստեղծվել է համագործածական բառի տերմինացումով, ինչպես՝ *աթոռ, աղավնի, աստիճան, ավազան, արձան, բակ, բաժակ, բանալի, բեւ, բռնիչ, գավազան, գավիթ, գմբեթ, գրակալ, գոտի, դաս, դուռ, երգարան, երգեհոն, զանգակ, թիկնոց, լսպտեր, լեզվակ, խաչափայտ, խնկաման, խունկ, ծնծղա, կոնք, հանդերձ, մասունք, յուղ, շապիկ, պահարան, պատկեր, պնակ, ջահ, սեղան, սեւ, վարագույր, վերարկու, վեւ, փարչ, քար* և այլն:

Համագործածական բառի տերմինացումով են ստեղծվել *աղ, անապատ, բազպան, գինի, դրոշմ, խաչ, խոստովանություն, կաճառ, կարգ, կնդրուկ, կնիք, հաց, հավատ, հովիվ, հույս, մոմ, ներբող(եան), նշխար, շնորհ, որդի (Որդի Աստուծոյ կամ Որդի Մարդոյ, Աստվածաշունչ մատյանում ունի 4200 վկայություն)⁸, սկևռին (խաչը պարունակող արկղ), վեհ, վիհ, տաճար, փառք, քարտուղար, քուրձ, օրենք, ֆրեր* և այլ բառեր:

⁷ Օրմանյան Մաղաքիա, Ծիսական բառարան, Ե., 1992, էջ 48-126:

⁸ Տե՛ս նաև Ն. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի (խմբ.՝ Ս.Գալստյանի և Խ.Բաղիկյանի), Ե., 2005, էջ 132:

Համագործածական բառերի տերմինացումով նոր տերմիններ ստեղծելը հասուկ է բոլոր լեզուներին և տերմինահամակարգերի համալրման արդյունավետ միջոցներից է: Այս դեպքում լեզուն ստիպված չի լինում երբեմն անհարկի փոխառություններ կատարել, և, բացի դրանից, համագործածական բառերի տերմինացումով ստեղծված տերմիններն ավելի հասկանալի են տվյալ լեզվակիր հանրային:

2. Բառակազմական միջոցներից բառածանցումը և բառաբարդումը նոր բառերի և տերմինների կերտման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներն են: Ինչպես բոլոր լեզուներում, այնպես էլ հայերենում նոր արմատներ չեն ստեղծվում (եզակի բացառություններով), այլ նոր բառերի կազմությունը կատարվում է եղած արմատներով: Այդ պատճառով է, որ ժամանակակից լեզուներում գերիշխում են բաղադրյալ բառերը:

Տերմինակազմության մեջ կիրառվում են այն բոլոր միջոցները, ինչ համընդհանուր բառապաշարում` բառակազմության մեջ: Սակայն այստեղ նկատելի են նաև տերմիններին ներկայացվող ընդհանուր պահանջները` մենիմաստություն, ոճական չեզոքություն, սեղմություն և այլն:

Հայերենում բառաձանցումը կազմում է 15 տոկոս, բառաբարդումը՝ 30 տոկոս⁹ (ընդ որում, նկատի են առնված երկարմատ բարդությունները և մենաձանց բառերը): Տերմինային բառաձանցման մեջ մեծ կենսունակություն են ցուցաբերում վերջաձանցները:

Տերմինակազմության մեջ գործուն է տերմին-բառակապակցությունների ստեղծումը, որոնք արտահայտում են ամբողջական հասկացություններ, և դրանցում տերմինային պատճառաբանվածությունն ավելի հստակ է երևում: 3. Կրոնաեկեղեցական տերմինահամակարգի համալրման մյուս ներքին աղբյուրներն են գրաբարը, միջին հայերենը, բարբառները, արևմտահայերենը, ժողովրդախոսակցական լեզուն:

Բ. Բոլոր բնագավառների տերմինահամակարգերում զգալի թիվ են կազմում տարբեր լեզուներից վերցված պատրաստի միավորները՝ փոխառությունները: Ինչպես և ակնկալելի է, տերմինահամակարգերում փոխառությունները ավելի բարձր տոկոս են կազմում (դրանց մասին կխոսվի առանձին):

⁹ Տե՛ս Ա.Ե.Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985, էջ 106-107:

Գրականություն

1. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1978:
2. Աճառեան Հր., Եւրոպական փիլատեալ բառեր հայերէնի մէջ, Վիեննա. 1951:
3. Ռ.Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հհ. 1-2, 1987-1992 թթ.:
4. Մետրոպյան Հ., Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի երկերի բառարան, Սոնրեալ, 2000:
5. Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985:
6. Օրմանյան Մաղաքիա արքեպիսկոպոս, Ծիսական բառարան, Ե., 1992:

Сильва Папикян- Анализ пластов религиозно-церковных терминов армянского языка- Каждая специальная терминологическая система состоит из различных пластов, рассматриваемых как единое целое, которая включает слова, употребляющиеся в литературе и в прессе.

Армянская религиозно-церковная лексика, классифицированная по пластам, представляет следующую картину: 1. Общерелигиозные слова; 2. Древнеармянские слова: 3.

Среднеармянские слова: 4. Западноармянские слова: 5.
Диалектизмы: 6. Неолигизмы.

Пополнение религиозно-церковной лексики армянского языка происходит двумя способами: внутренним и внешним. Внутренний – пополнение терминосистемы созданием новых терминов, словообразовательными средатвами, внутренними заимствованиями, внешний – заимствования из других языков.

Silva Papikyan- Layered analysis of religious-ecclesiastical terms- Each vocational term system consisted of different layers is considered as a whole, which includes all whose words that have been used or have been using in literature and media.

Each term system analysis demonstrates that it has different layers.

The Armenian religious- ecclesiastical vocabulary has the following picture according to its layers:

1. General religious words
2. Old Armenian words
3. Middle Armenian words
4. Western Armenian words
5. Dialectal words
6. New words

There are two ways of replenishment of the Armenian religious- ecclesiastical vocabulary: internal and external. The

internal replenishment is realized through creation of new terms, word-formation and internal borrowings. The external replenishment is realized through borrowings from other languages.

Պապիկյան Սիլվա
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Զրադաշտականությունը Իրանում նախամահմեդական կրոնն էր, որի հիմնադիրը համարվում է Զրադաշտը (Ավեստայի լեզվով՝ Զարատուշտրա): Զրադաշտի ծննդյան կոնկրետ ժամանակը հայտնի չէ: «...Զրադաշտ անունով մի քուրմ սիստեմի վերածեց ժողովրդական հավատալիքները և մարդկային հասկացողություններ հաղորդեց աստվածապաշտությանը», - գրում է Լեոն¹:

Ըստ զրադաշտականության՝ նախապես գոյություն է ունեցել երկու սկզբունք՝ բարու և չարի: Բարին անձնավորում է Ահուրամազդան, չարը՝ Ահրիմանը: Բարու և չարի պայքարում մեծ տեղ է հատկացված մարդուն, որն ունի ազատ ընտրության իրավունք. կարող է կանգնել և՛ այս, և՛ այն կողմում (դրանք ներկայացված են Ավեստայի հնագույն մասում՝ Գաթերում)²: Պայքարի վերջում պետք է հաղթեն բարի ուժերը:

*ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վանաձորի Հ. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտ, Գիտական հոդվածներ, Բանասիրություն. Ա, Վանաձոր, ՄԻՄ տպագրատուն, 2013, էջ 138-148:

¹ Լեո, Մեարոպ Մաշտոց, Ե., 1962, էջ 141:

² Стé u Avesta в русских переводах, под ред. И.В.Рака, Санкт-Петербург, 1998 :

Զրադաշտականությունը ազդել է բուդդայականության, հուդայականության, քրիստոնեության, մահմեդականության վրա³:

Հին հայերենում որոշակի քանակ են կազմում իրանական հին կրոնին՝ զրադաշտականությանը վերաբերող բառերը՝ *աթաշ, ատրուշան, քարսմունք, բոզպայիտ, գումեզ, դեն, դենիմագդեզն, դենպետ, կեշտ, համակդեն, մագդեզն, մոզ, մոզպետ, պարտքաշ, պետմոզ, ոստ, քեշ, քրտիկար*:

301թ. հայերն ընդունեցին քրիստոնեություն, Պարսկաստանում էլ Սասանյանների՝ իշխանության գլուխ անցնելուց հետո պետական կրոն հռչակվեց զրադաշտականությունը, որ տևեց մոտավորապես չորս հարյուր տարի, և միայն մահմեդականությունը կարողացավ վերացնել այն: Ընդ որում, տիրապետող էր զրադաշտականության մի տարատեսակը՝ զրվանականությունը, որի մասին տեղեկություններ ենք ստանում Եղիշեից՝ Միհրնեսեի մեծ վեզիրի նամակից⁴ և Եզնիկ Կողբացու

³ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ.3 , Ե., 1977, էջ 710-711, Վարդույան Գ., Մարգարյան Ե., Կրոնների պատմություն, Ե., 2006, էջ 64-74, Большая советская энциклопедия, т. 9, М., 1972, էջ 593:

⁴ Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Ե., 1971, էջ 35-38 (ծանոթագրությունը Ե.Տեր-Մինասյանի) (այսուհետև՝ Եղիշե):

«Եղծ աղանդոց»-ից⁵:

Զրադաշտականության սուրբ գիրքն Ավեստան է: Այն սկզբնապես եղել է բանավոր ձևով, գրավոր ավանդված է մ.թ.ա. 7-6 դդ. հին իրանական մի լեզվով, որ պայմանականորեն անվանվում է Ավեստայի լեզու (ավեստերեն): Մասանյանների օրոք (3-7-րդ դդ.) օրինականացվել է Ավեստայի միջին պարսկերեն (պահլավերեն) տեքստը, ինչպես նաև նրա մեկնությունը՝ Ջենդը: Հետագայում տերմինների ոչ ճիշտ գործածության հետևանքով Ավեստան կոչվել է Ջենդ-Ավեստա, իսկ Ավեստայի լեզուն էլ՝ զենդերեն⁶: Ավեստայի հնագույն մասը կազմում էմ Գաթերը՝ հիմներ, որոնք վերագրվում են Զրադաշտին:

Անդրադառնանք իրանական հին կրոնին վերաբերող բաներին:

Աթաշ: Այս բառը պարսկ. *ātaš*, միջ.պարսկ. *ātaxš*, ավեստ. *atarš* բառն է՝ «կրակ» նշանակությամբ: Աճառյանը բացատրում է. «անուն հրոյ պարսից» (ՀԱԲ, 1, 88,)⁷: Օրինակ բերենք Եղիշեից՝ «Հրաման ունիմք և ի քաղաքս շինել ատրուշան, և *զվրամա-*

⁵ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Ե., 1970 (թարգմ. Ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա.Ա.Աբրահամյանի) (այսուհետև՝ Եզնիկ):

⁶ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 50:

⁷ Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հհ. 1-4, Ե. 1971-1979

կան կրակն ի ներքս դնել» (Եղիշէի..., 70)⁸: Ծանոթագրության մեջ վռամական կրակ արտահայտությունը բացատրվում է «Բահրամ աթաշ, ամենասրբազան կրակը»⁹:

Ատրուշան: Բառի առաջին մասը՝ *ատր* (*atur*) միջ. պարսկերենից է և նշանակում է «կրակ», որ երևում է *ատրագոյն*՝ «հրագոյն» և *ատրճանակ* բառերում (ՀԱԲ, 1, 290-291), ըստ Ջահուկյանի՝ *aturōšan *atr-aušāna «կրակարան». *atr- «կրակ» և *auš < հ.-ե. *eus «այրել» (Ջահուկյան, 1987, 517)¹⁰: ՆՀԲ-ի բացատրությամբ՝ «տուն կամ մեհեան կրակի կրակապաշտից, կրակատուն» (ՆՀԲ, 1, 336): Օրինակներ.՝ «Քանդեալ էր և սոցա գատրուշանն յԱրտաշատ» (Եղիշէի..., 129): «Ի տեղիս տեղիս բազում վնաս արարին ... քանդելով զբազում *ատրուշանս*» (ն.տ., 69):

Ատրուշանը կրակապաշտ պարսիկների պաշտամունքի վայրն էր, որտեղ կրակը միշտ վառ էր պահվում. շատ դեպքերում գործածվում է *կրակատուն* իմաստով: *Ատրուշան* բառը ժամանակակից հայերենում ձեռք է բերել փոխաբերական գործածութ-

⁸ Եղիշէի վասն Վարդանայ և հայոց պատերազմին (այսուհետև՝ Եղիշէի...) , Ե., 1957:

⁹ Եղիշէի..., ն.տ., էջ 206:

¹⁰ Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Ե. 1987(այսուհետև՝ Ջահուկյան, 1987):

յուն՝ *անմար կրակ, ոգևորություն* (ԱՀԲԲ¹¹, 124): Հիշենք Վ. Տերյանի հայտնի տողերը՝ գրված Ստեփան Շահումյանի հիշատակին՝ «Սիրտդ, որպես վառ *ատրուշան*, պահի՛ր վառ» (Վ.Տերյան, Երկեր, 1956, էջ 330) :

Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում:

Բարսմունք : Բառը ավետս. *barasma*, պրսկ. *barsam*-ից է: Ըստ Աճառյանի՝ բառը ենթադրում է ավելի հին ձև. հայերեն *բարսմունք*-ը ենթադրում է եզակի **բարսմն* կամ **բարսումն* ձևերը (ՀԱԲ, 1, 429-430): ՀՄԲ-ում որպես գլխաբառ բերված է «բարս/ու/մն» ձևը՝ «տրցակ,որ կրակապաշտները աղոթքի ժամանակ պահում էին ձեռքներին» (ՀՄԲ¹²,122): Ինչպես երևում է վկայություններից և մեզ հասած քանդակապատկերներից, *ատրուշանի* կամ կրակավառ բազիմների մոտ կանգնում էին երկու պաշտամունքավար մոզեր՝ բերանները կապած (որ իրենց շնչով չպղծեին կրակը), իսկ իրենց ձեռքերին ունեին մանր ճյուղերով տրցակներ, այսինքն՝ *բարսմունք*, որ, ումանց կարծիքով, *վարսաման* բույսն է:

Բերենք օրինակներ Եզնիկից. «*Ձբարսմունս* գոր ի ձեռին

¹¹ Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976 (այսուհետև՝ ԱՀԲԲ):

¹² Գ.Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010(Վ.Սարգսյանի խմբագրությամբ և առաջաբանով. այսուհետև՝ ՀՄԲ):

ուներ՝ ցորդին իւր ցՈրմիզդ ետ» (Եզնիկ, 128): «Զի *բարսմունս* ունել և յաշտ առնել՝ մարդկան գործ է» (Եզնիկ, 137):

Եղիշէի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» գրքում մի ամբողջ հատված վերաբերում է զրադաշտական կրոնին՝ հենց Եղիշէի բացատրություններով: Հատվածը մեջբերում ենք ամբողջությամբ:

«Մոզպետն (որում յանձն արարեալ էին Ղևոնդեանք) իշխան դենպետ էր Ապար աշխարհին... քան զբազում գիտունսն ևս տեղեակ էր զրադաշտական օրինացն: Նա և զոր մեծ պարծանս համարէին ըստ իւրեանց մոլորութեան կարգի, *Համակդէն* անուն էր. Գիտէր և *զԱմպարտքաշն*, ուսեալ էր և *զԲոզպայիտն*. Ունէր և *զՊահլաիկն* և *զՊարսկադէնն*. Քանզի այս հինգ կեշտք են՝ որ զբաւեալ ունէին զամենայն օրէնսն մոզութեանն: Բայց արտաքոյ սոցա է միւս ևս այլ վեցերորդ, զոր *Մոզպետն* կոչեն» (Եղիշէի..., 253): Աշխարհաբարով՝ «Բայց դեռ առաջ՝ թագավորի հրամանից շատ ավել էր չարչարել այն մոզպետը, որին հանձնված էին նրանք. որովհետև նա Ապար աշխարհի *դէնպետ* իշխանն էր և ավելի ջերմեռանդ էր մոզութեան մեջ. նախ շատ գիտուններից ավելի տեղյակ էր զրադաշտական կրոնին: Այլև մեծ պարծանք էին համարում իրենց մոլար հավատի համեմատ, *Համակդէն* անունն էին տալիս նրան. գիտէր նաև

Ամպարտքաշը, սովորել էր նաև *Բոզպայիտը*, ծանոթ էր նաև *Պահլավիկին* և *Պարսկադենին*» (Եղիշե, էջ 134) (ընդգծումները մերն են – Ս.Պ.):

Անդրադառնանք ընդգծված բառերին:

Ամպարտքաշ: Որպես գլխաբառ վկայված չէ բառարաններում (Հայկազյան բառարանները, ՀԱԲ-ը չունեն): ՆՀԲ-ում¹³ *պարտքաշ* գլխաբառն ունի *ամպարտքաշ* տարբերակը (ՆՀԲ, 2, 644):

Պարտքաշ-ը ավետս. *pairyōtkaēša*- բառն է՝ կազմված *pairyō* «առաջին» և *tkaēša*- «կրօն, քեշ» բառերից (ՀԱԲ, 4, 70): Մագդեզական գրքերը այդպես էին անվանում Իրանի հնագույն կրոնը, որ կար նախքան Զրադաշտը: Մա, հավանորեն, պարսից նախնական կրոնն էր:

Պարտքաշ-ը ՆՀԲ-ն բացատրում է. «Անուն ադանդոյ կամ գրոց առ Պարսիկս» (ՆՀԲ, 2, 644): ՀՄԲ-ում բառը բացատրվում է «առաջին կրոն» (ՀՄԲ, 634):

Բառը մեկ անգամ գործածված է Եղիշեի վերոբերյալ հատվածում:

Ամպարտքաշ բառի մասին «Բազմավեպ» -ում կա մի հոդված «Քանի մը պարսկերէն բառեր ի պատմութեան Եղիշէի»

¹³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ.1-2, Վենետիկ, 1836-1837 (այսուհետև՝ ՆՀԲ):

վերտառությամբ: Բերենք այդ հատվածը. «Գիտեր և *զԱմպարտքաշն*. «Հայկազեան բառարանը երկու ընթերծուածս ունի. *Ամպարտքաշ* և *Պարտքաշ*: Այդ տարբերութեան ուսկից յառաջ եկած լինելը կը գտնենք Կոստանդնուպոլսոյ 1823 տպագրոյն ծանոթութեանց մէջ, որոյ հրատարակիչը կ'ըսէ՝ թէ հին բառարանը *Ամպարտքաշ* կը դնէ. բայց որովհետև իւր հետեւած օրինակին մէջ (Ոժջ թուականը կրօղ հին ձեռագիր մի էր) *զամենայն պարտքաշ* գրուած էր, ինքն այս վերջին ընթերցուածը անփոփոխ պահեց: Ուղիղն ալ այդ է, որպէս պիտի տեսնենք ստորև: Ուստի պարտ է դնել «զամենայն Պարտքաշն» (Բազմավէպ, 1895, ԾԳ, փետրուար, էջ 47):

Հողվածագրի կարծիքով (հանդեսում հողվածի հեղինակը չի նշված) *ամպարտքաշ* բառը սխալ ընթերցման հետևանք է. *ամենայն պարտքաշ* կապակցությունը դիտվել է որպէս մէկ բառ:

Հ.Աճառյանը նույնպէս բառի ուղիղ ձևը համարում է *պարտքաշ*-ը. «Բառիս ուղիղ ձևն է *պարտքաշ*. բնագրի մէջ այստեղ գրուած էր *զամենայն պարտքաշ*, ինչպէս ունին տպ. Պօլսոյ 1823. դրա համառօտագրեալ *զամ պարտքաշ* ձևից առաջացաւ *ամպարտքաշ* ուղղականը, ինչպէս ունին տպ. Մոսկուա 1892, էջ 131 և Եղիշ. մատ., էջ 112 (ՀԱԲ, 4, 70):

Թերևս կարելի է ընդունելի համարել այս կարծիքը:

Բոզպայիտ: Բացատրվում է «անուն գրոց ի դենի պարսից» (ՆՀԲ, 1, 500), ըստ ԱԲ-ի¹⁴՝ «գիրք մը Պարսից մոզերուն» (ԱԲ, 192): Հին հայկազեան բառարանը չունի այս բառը:

Բառը ծագում է միջ.պարսկ. *baza* «մեղք» և ավեստ. *paititi* «քավություն» բառերից . վերականգնելի ձևը կինի **bazapaititi*՝ «մեղքերի քավություն») (ՀԱԲ, 1, 460): *Բոզպայիտը* պարսկական կրոնին վերաբերող մի գիրք է, որ, հավանաբար, վերաբերում էր ոչ միայն կրոնին, այլև կրոնական արարողություններին և պաշտամունքի կարգերին: Պարսիկները այս վերջիններին հատուկ կարևորություն էին տալիս: ՀՄԲ-ում բացատրվում է «պարսական կրոնական մի գրքի անուն» (ՀՄԲ, 132):

Դեն: Միջ. պարսկ. *dēn*՝ «կրոն, հավատ» (ՀԱԲ, 1, 652-653), «կրօնք, հաւատք. իբր աղանդք» (ՆՀԲ, 1, 610): Այս արմատից հին հայերենում վկայված են հետևյալ բառերը՝ *դենադարձ*, *դենակորոյս*, *դենիմազդեզն*, *դենպետ*, *համակդեն*, *պարսկադեն*՝ բոլորն էլ կրոնական նշանակությամբ: Այս բառերից *դենպետ*-ը նշանակում էր «դենի գլուխը, կրօնապետ», *դենադարձ* և *դենակորոյս* բառերը՝ «ուրացող, հաւատափոխ» (ՆՀԲ):

Դենիմազդեզն: Իրանական հին կրոնը տարբեր անվանումներ ունի՝ Զրադաշտի անունով կոչվում էր *զրադաշ-*

¹⁴ Առձեռն բառարան հայերէն լեզուի, Ս.Ղազար, 1865:

տականություն, այլ անվանումով՝ Ահուրա-Մազդայի հավատ՝ - դենիմազդեզն, մազդայականություն, նաև մոզական կրոն՝ այդ կրոնի ներկայացուցիչ քահանաների անունով:

Ահուրա-Մազդա(հ) անունը տարբեր կերպ են մեկնաբանում՝ «Տեր իմաստուն» կամ «Իմաստության տեր». հայերենն այն փոխառել է Արամազդ ձևով, ավելի ուշ՝ Որմիզդ: *Մազդա (հ)* նշանակում է «իմաստուն»: *Ահուրա-Մազդա(հ)* անվան երկրորդ բաղադրիչից է *մազդայականության*¹⁵ բառը: ՀՄԲ-ում բացատրվում է «պարսկական (մազդեզական) կրոն» (ՀՄԲ, 193): Ահուրա-մազդա/հ/ գլխավոր աստծուն համարում էին ամենակարող և տալիս էին բազմաթիվ մակդիրներ և կարծում էին՝ դրանց թվարկումը պահպանում է չարից¹⁶:

Դենիմազդեզն բառը միջ. պարսկ. *dēn-i-mazdēsñ* կամ *dēn-i-māzdēsñān* ձևից է (իզաֆետային կազմություն), որն էլ իր հերթին ավելստ. *daēnā mazdayasnanam* արտահայտությունից է՝ կազմված

¹⁵ Մազդայականությունը կամ մազդեականությունը Մարաստանում (մ.թ.ա. 9-6-րդ դդ.) և Աքեմենյան Իրանում (մ.թ.ա. 6-4-րդ դդ.) տիրապետող կրոն էր, որի դավանաբանական հիմքը գերագույն աստված Մազդայի (Ահուրամազդայի) և կրակի պաշտամունքն էր: Հին մազդայականության որոշ գաղափարներ և ծեսեր վերաիմաստավորված ձևով ներառել է զրադաշտականությունը (Հայկական Սովետական հանրագիտարան, 7, 132):

¹⁶ Հմմտ. «Քրարիչն եմ ես, Հովանավորը, Պահապանը, Ամենագետը, Սուրբ հոգի է անունը իմ, Բժշկող է անունը իմ, Ծառա է անունը իմ, Ահուրա է իմ անունը և Մազդահ է անունը իմ»: Տե՛ս Авеста в русских переводах (1861- 1996), Санкт-Петербург, 1998, էջ 164:

daēnā «կրոն» և *Mazdāh* «Արամազդ»¹⁷ բառերից (ՀԱԲ, 1, 653): Օր.՝ «Անարգեաց *զդենհմագդեզն...*» (Եդիշէի..., 162):

Համակդեն: Այս բառը միջին պարսկ. **hamākdēn* բառն է (ՀԱԲ, 3, 20), այսինքն՝ «զրադաշտական աստվածաբան, կրոնի ամբողջ վարդապետությունը լավ իմացող»: Թովմա Արծրունին գրում է. «Անուանէին զինքեանս *համակդենս*, այսինքն ամենագէտ ի հաւատ կրակի» (ՀԱԲ):

Համակդեն բառն ամբողջական փոխառություն է (բառի բաղադրիչ արմատներն իրենց հերթին առանձին-առանձին փոխառված են՝ *hamāk* «ամբողջ, բոլոր, ամբողջովին» և *dēn* «կրոն, հավատ»): ՆՀԲ-ի բացատրությամբ՝ «համակ դենին կրակապաշտ պարսից գիտակ, և ուսուցիչ այլոց» (ՆՀԲ, 2, 16): ՆՀԲ-ն տալիս է հաս բառի երկրորդ իմաստ՝ «հաւատակից»՝ «Զի մի՛ *համակդենքն* եկեալ բառնայցեն զոսկերս դոցա» (Եդիշէի..., 134):

Պարսկադեն: «Անուն դենի և մատենի դենին պարսկաց, և կրթելոց ի նոյն» (ՆՀԲ, 2, 640): ՀԱԲ-ը չունի: Եդիշեն բառը գործածում է նաև «գուշակություն» իմաստով՝ զբարբարով՝ «Յորժամ ար-

¹⁷ Աքեմենյան թագավորների, հատկապես Դարեհ Առաջինի ժամանակ (մ.թ.ա. 522-486 թթ.) Ահուրա-Մազդայի հավատը մեծ էր: Դարեհի արձանագրություններից մեկում գրված է. «Ահուրա-Մազդան մի մեծ աստված է, որ ստեղծել է այն երկինքը, որ ստեղծել է այս երկիրը, մարդկանց և երջանկություն նրանց համար, թագավոր է դարձրել Դարեհին, միակ թագավորը շատերի գլխին» (տե՛ս Եդիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Ծանոթագրություններ, Ե., 1971, էջ 193):

գելուս և փակէս զամենեսեանն իր հեռաւոր օտարութեան, կատարին խորհուրդք կամաց քոց. և որպէս երևիս մեզ ի *դէնիս* մերում, տիրես դու երկրին Քուշանաց» (Եղիշէի..., 9), աշխարհաբարով՝ «Երբ բոլորին արգելես ու պահես հեռավոր օտարության մեջ, քո կամքն ու խորհուրդները կկատարվեն և, ինչպէս երևում է մեր *գուշակությունների* մեջ, դու կտիրես նաև Քուշանների երկրին...» (տե՛ս Եղիշէ, էջ 23):

Եղիշէի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» -ի թարգմանիչ Ե. Տեր-Մինասյանի կարծիքով՝ «...*պարսկադէն* ասելով պետք է հասկանալ այն ուսմունքներն ու գրույցները, որոնք պահլավիկ գրքերում չկան, ինչպէս Զրվանի նախագոյությունը, Որմիգդի սպանումը, արեգակի և լուսնի առասպելախառն ծագումը և այլն, առաջ էին եկել Սասանյանների ժամանակ և տարածված էին Պարսկաստանի արևմտյան և հարավային նահանգներում և դավանանքի գորություն ունեին» (Եղիշէ, Ծանոթագրություններ, 216):

Կէշտ: Միջին . պարսկ. *kīš, kēš*՝ «ադանդ, կրօն» (ՀԱԲ, 2, 573): Օր.՝ «Մոզն և զանդիկն, հրեայն և քրիստոնէայն, և որ այլ ևս բազում *կէշտք*» (Եղիշէի..., 16): Հանդիպում է նաև *քէշ* և *քէշտ* տարբերակներով: Բազմիցս գործածել է Եզնիկը: «Եթէ նոյն *քէշ* է

երկոցունց, ընդէ՞ր ատիցեն մոգք զգանդիկս» (Եզնիկ, 116), «Ոչ քան զնոցայն միայն, այլև քան զամենայն *քէշիժ*» (Եզնիկ, 116):

Քէշ արմատից է *քէշակարկատ* բառը (գործածել է Եզնիկը). բառն ունի ծաղրական, արհամարհական երանգ, իբր «կցկցելով, կարկատելով կրոն հնարող, աղանդապետ»: «Հայեցեալ ընդ այն *քէշակարկատին* պարսից ... մարդկօրէն բարուք *զքէշն* կարկատէ, և յղութեամբ և ծննդեամբ զկրօնսն կցկցէ» (Եզնիկ, 122): Եզնիկի «Եղծ աղանդոց»-ում կարևոր տեղ է զբաղեցնում «Եղծ քէշին պարսից» հատվածը:

Մոգ: Միջ. պարսկ. *mog* (*mogu*), զենդ. *mogus-*, պրսկ. *muy(mōy)*՝ «կախարդ, քուրմ, աստղագուշակ»: Իրանական լեզուներից են փոխառյալ հուն. *μαγος*, եբր. *māg* «մոգ», լատ. *magus*, ֆրանս. *mag* բառերը (ՀԱԲ, 3, 337): ՆՀԲ-ի բացատրությամբ՝ «Մարգարէ հեթանոսաց. սուտ գուշակ, հմայօղ, քաղդէայ, գէտ. քուրմ. աստղագէտ,օրէնսգէտ ըստ դէնից, կրակապաշտ և դիւթ. կախարդ» (ՆՀԲ, 2, 291-292):

Ռ.Ղազարյանի «Գրաբարի հոմանիշների բառարանում»¹⁸ բառի հոմանիշներն են *քաղդէայ, գէտ, աստեղագէտ, քուրմ, կրակապաշտ, դիւթ, կախարդ* (ԳՀԲ, 488):

¹⁸ Ռ.Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, Ե., 2006 (այսուհետև՝ ԳՀԲ):

Բերենք օրինակներ մեր մատենագրությունից. «... կալալ գորէնս զմագդեզանցն, այսինքն *զմոզուցն*» (Բուզանդ,¹⁹ 119): «Եւ արդ կամիք փոխանակ Քրիստոսի արարչին ձերոյ՝ ծառայել ձեզ անաստուածն *մոզութեան* անօրինացն և նոցուն պաշտօնէիցն» (Բուզանդ, 148):

Մոզ արմատից են *մոզական, մոզակրօն, մօզակրօնիկ, մոզեան* (*մոզ* բառի հոգնակին է), *մօզեմ, մոզութիւն, մոզպաշտէ* (պաշտօնեայ մոզուց), *չարամոզական* բառերը (ՆՀԲ): *Մոզպետ* (մոզերի պետ) բառն ունէր *մովպետ* տարբերակը. գործածել է Եղիշեն. «Զի վաղիւ անդ *մովպետան մովպետ* ռատ յազէ և նոյն հաճեալ հաւանեցուցէ զմիտս ձեր» (Եղիշէի..., 181) (ընդգծումը մերն է՝ Ս.Պ.): *Մովպետան մովպետը* (մոզպետների մոզպետը) զրադաշտական կրոնի գլխավոր քահանայապետն է:

Մոզականն բառը գոյական է՝ «մոզութիւն, կախարդութիւն, դիւթութիւն»²⁰: *Մոզական* ածականը, բացի «մոզերին հատուկ» իմաստից, ունի նաև փոխաբերական *կախարդական, դյութական, հրաշագործ* իմաստները (ԱՀԲԲ, 1022). (այս նոյն իմաստներն արձանագրված են նաև ռուսերենում՝ (1. магический, 2. перен..

¹⁹ Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն հայոց, Ս.Պետերբուրգ, 1883(այսուհետև՝ Բուզանդ):

²⁰ Ռ.Ղազարյան, Գրաբարի բառարան, հհ Ա-Բ, Անթիլիաս-Լիբանան, 2000, 199:

чырауоуаий), ֆրանսերենում *magique*²¹ , որտեղից էլ՝ *մոգական լրացուցիչ* և *մոգական գավազան* կապակցությունները:

Դրանցից առաջինը ֆիզիկայի տերմին է՝ «գործիք, որի միջոցով փոքրիկ առարկաների պատկերները բնական գույներով և մեծացված պատկերվում են սպիտակ պաստառի վրա» (ԱՀԲԲ, 1022), իսկ *մոգական գավազան* արտահայտությունն ունի դարձվածային նշանակություն՝ «արտասովոր, հրաշագործ ուժ, անսպասելի՝ հանկարծական գործոն»²² : Ժամանակակից հայերենում բառը ձեռք է բերել նոր, փոխաբերական իմաստ՝ «որևէ ձիրքով բոլորին հմայող, գերող մարդ» (ԱՀԲԲ). հմմտ. «Եվ ողջ մի երկիր ելավ... իր տաղ ու երգի կախարդիչ մոգին հրաժեշտ տալու» (Պ.Սևակ):

Կազմվել են նոր բառեր՝ *մոգականորեն*, *մոգականություն*, *մոգել* (հմայել, կախարդել), *մոգիչ* (հմայիչ, թովիչ): Նորաստեղծ բառերը հատուկ են բանաստեղծական բառաշերտին: ՆԲ-ում վկայված է *մոգարվեստ* բառը (ՆԲ²³, 347):

Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում:

²¹ Ганшина К.А., Французско-русский словарь, М., 1977, 510:

²² Ա.Սուրիայան, Ս.Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, 438:

²³ Ս.Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002:

ՌՄՏ : Մոզերին տրված մի տիտղոս՝ «մեծ, գլխավոր» նշանակությամբ՝ միջ. պարսկ. *rāt* ՝ բառից) (ՀԱԲ, 4, 142): Գործածել է Եղիշեն. «Մովպետան մովպետ *masu*՝ յազէ» (Եղիշէի... , 181): ՆՀԲ-ի բացատրությամբ՝ «Իմաստուն , ներհուն, հմուտ, ճոխ, պատուաւոր, մեծ» (ՆՀԲ, 2, 681), ըստ ԱԲ-ի՝ « բանի-բուն, պատուաւոր» (ԱԲ, 709):

ՔՐՊԻԿԱՐ (ՔՐՏԻԿԱՐ): Աճառյանը բառը փոխառություն է համարում միջ. պրսկ. **kirpikār* «բարի և առաքինի գործ», *kirpak* «կրօնական պարտականութիւն և առաքինութիւն», պրսկ. *karfagar* «բարի և արդար գործեր կատարող (մարդ)»-ից (ՀԱԲ, 4, 601-602): Ըստ Աճառյանի՝ բառը երկու անգամ գործածել է Եղիշեն՝ «Ետ սպանանել զհօրեղբայր իւր զՎաղինակ և յինքն տարաւ զտէրութիւնն իբրն *քրտիկար* յարքունիս» (Եղիշէ, 137) և «...քանզի տգիտաբար մոլորեալ էք ի ճշմարիտ օրինացս մերոց, և գաստուածս անարգէք և զկրակ սպանանէք և զջուրս պղծէք և զմեռեալս ի հող թաղելով՝ զերկիր ապականէք և *քրտիկար* չառնելով՝ ոյժ տայք Հարամանոյ» (Եղիշէի..., 46)՝ «... որովհետև մոլորվել էք մեր ճշմարիտ կրոնից, աստվածներին անարգում էք, կրակն սպանում, ջրերը պղծում և մեռելներին հողի մեջ թաղելով՝ երկիրն ապականում, և

մեր կրոնի *պատվերները*²⁴ չկատարելով՝ ուժ էք տալիս Հարամանիին» (Եղիշե, 1971, էջ 53):

Մագդեզական կրոնի բարի գործերն ու առաքինությունները շատ են, մոտավորապես 33 տեսակ, ինչպես առատաձեռնությունը, ճշմարտախոսությունը, ողջախոհությունը, համեստությունը, բարությունը և այլն:

Քրպիկարը գրադաշտական կրոնի պատվիրած բարի ու առաքինի գործն է: Այս իմաստով բառը լրիվ համապատասխանում է Եղիշեի գործածած «*Քրտիկար* չառնելով՝ » նախադասությանը:

Աճառյանը գտնում է, որ բառի նախնական ձևը *քրպիկար* է, և *պ* և *տ* տառերի շփոթության հետևանքով հայերենում դարձել է *քրտիկար*: Լ. Հովհաննիսյանը «Գրաբարի բառապաշարը (5-րդ դար)» աշխատության մեջ *քրտիկար* բառի համար նշում է նաև *քրպիկար* տարբերակը (էջ 141), ՀՄԲ-ում *քրտիկար* է՝ «բարի գործեր, բարեգործություն» (ՀՄԲ, 790):

Ամփոփելով իրանական հնագույն կրոնի՝ գրադաշտականության մասին վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ այս կրոնին վերաբերող բառերը սակավ գործածություն ունեն. դրանք ըստ անհրաժեշտության գործածվել են այն երկերում,

²⁴ Ե.Տեր-Մինասյանը *քրպիկար* բառը թարգմանել է *պատվեր*:

որոնք վերաբերում են այդ կրոնին:

Գրականություն

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
2. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ.1-4, Ե., 1971-1979:
3. Առձեռն բառարաբ հայկազնեան լեզուի, Ս.Ղազար, 1985:
4. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Ե., 1970 (թարգմ., ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի):
5. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Ե., 1971 (թարգմ., ներածությունը և ծանոթագրությունները Ե. Տեր Մինասյանի):
6. Եղիշեի Վասն վարդանայ և հայոց պատերազմին, Ե., 1957:
7. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002:
8. Լեո, Մեսրոպ Մաշտոց, Ե., 1962:
9. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Ե., 1977:
10. Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990:
11. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշարը 5-րդ դար), Ե., 2006;

12. Ղազարյան Ռ., Գրաբարի բառարան, հհ Ա-Բ, Անթիլիաս-Լիբանան, 2000:
13. Ղազարյան Ռ., Գրաբարի հոմանիշների բառարան, Ե., 2006:
14. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:
15. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
16. Ջահուկյան Գ., Հայերեն ստուգրանական բառարան. Ե., 2010:
17. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվախաբանակաբ բառարան, Ե., 1975:
18. Վարդումյան Գ., Մարգարյան Ե., Կրոնների պատմություն, Ե., 2006:
19. Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
20. Большая советская энциклопедия, т. 9, М. 1972.
21. Ганшина К.А., Французско-русский словарь, М., 1977.

Сильва Папикян- О словах, относящихся к зороастрийской религии- Зороастризм – домусульманская догматическая религия в Иране, основатель которой является Заратустра /Заратуштра/. Разные исследователи относят ее к началу 2-ого тыс. д.н.э.

По зороастризму вначале существовала два начала- доброе и злое. В борьбе злого и доброго большое место дано человеку, который имеет право выбора.

В древнеармянском языке определенное количество составляют слова, относящиеся к древней религии Ирана. Нами

рассмотрены следующие слова: ašaš, ašrušan, barsmunk, bozpayit, den, denpet, kešt, hamakden, denimazdezn, mog , partkaš, rat, krtikar.

Слова, относящиеся к зороастризму, мало употреблялись. Они употреблялись в таких произведениях, в которых идет речь о зороастризме.

Silva Papikyan- About the words referring to zoroastranism- Zoroastranism was a Pre-Muslim, dogmatic religion founded by Zoroaster. According to different investigators it dates back to 2nd century BC.

According to Zoroastranism there were two original principles: the good one and the evil one. In the struggle between good and evil a great attention was paid to human being, who had the freedom of choice.

In Old Armenian we have some words referring to the Old Iranian religion.

We have turned to the following words: ašaš, ašrušan, barsmunk, bozpayit, den, denpet, kešt, hamakden, denimazdezn, mog , partkaš, rat, krtikar.

The words referring to Zoroastranism are less used, they have been using in works, where it talks about Zoroastranism.

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՄԲ ԲՆՈՒԹԱԳՐՎՈՂ
ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ
ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ*

Սարգսյան Նվեր
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Այդպիսիք են դերանունները, ձայնարկություններն ու վերաբերականները, ինչպես նաև կապերի ու շաղկապների առանձին տեսակներ: Հոդվածում ներկայացնում ենք միայն դերանունների գործածության ակտիվությանն առնչվող մի քանի բնորոշ առանձնահատկություններ:

Բնութագրություններ ու որակումներ կատարելիս, ինչպես նաև տերմինակազմն օգտագործելիս մնում ենք այն տեսության շրջանակներում, ըստ որի դերանունները, որքան էլ տարատեսակ են ու բազմազան, կազմում են մեկ առանձին, ինքնուրույն խոսքի մաս, և նրանց միավորող գլխավոր հատկանիշն ամենևին էլ այլ խոսքի մասերին փոխարինելը չէ, որովհետև դերանունների մեծ մասը գուրկ է փոխարինման գործառույթից. դա հատուկ է դերանունների միայն մի մասին, այն էլ ոչ միշտ, նույնիսկ նման դեպքերում այլ բառերի փոխարեն դրվելը բխում է նրանց գործածության որոշ պայմաններից, դա դերանունների ոչ թե էությունն է, այլ <<այդ էությունից ու գործածության յուրահատուկ պայմաններից բխող հետևանք, ուրեմն և պայմանական է>> /1/: Իսկ այդպես փոխարինման գործառույթ հաճախ կարող են կատարել նաև այլ խոսքի մասեր:

*«Ջահուկյանական ընթերցումներ, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ», Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 136-141:

Քննարկվող երկու համակարգերում էլ /գրական և խոսակցական/ իրենց խոսքամասային գլխավոր հատկանշով դերանունները նույնական են, ոչ թե անվանում են առարկա, հատկանիշ, այլ ցույց են տալիս դրանք որևէ հարաբերությամբ: Այս առումով դժվար է էական տարբերություններ գտնել, առավել ևս՝ բացահայտել ու բացատրել դերանունների գործածության ակտիվացումը. մի հանգամանք, որ հաստատվում է նաև վիճակագրությամբ: Ընտրած խոսույթների բնույթով պայմանավորված՝ խոսակցական լեզվում դերանունների գործածության դեպքերը տասնչորսից-քսան տոկոսով շատ են: Ուշադրությունը պետք է բևեռել տարբերություններին: Բայց դրանք էլ են բազմանշանակ ու տարատեսակ: Առանձին դերանուններ բնորոշ են նշված համակարգերից մեկին և տիպական չեն մյուսի համար /տույն-այս, յուրաքանչյուր-ամեն մի, ամենայն-ամեն և այլն/, որոշ դեպքերում այդ տարբերություններն արտահայտվում են դերանունների ուղիղ կամ թեք ձևերի հնչյունափոխությամբ /այս, այդ, այն, այսպես, այդպես, այնպես և այլն –էս, էդ, էն, էսպես, էդպես, էնպես, մեզնից-մեզանից, ձեզնով-ձեզանով և այլն/: Հաճախ էլ խոսակցական լեզվում հանդիպում են սխալ ձևեր, որոնք խրախուսելի չեն գրականում /իր տունը-իրա տունը, իր մեջ-իրեն մեջ, երախտապարտ եմ ձեզ-երախտապարտ եմ ձեզնից և այլն/:

Սակայն այս կարգի տարբերությունները ևս չեն օգնում լուծելու խոսակցական լեզվում գրականի համեմատությամբ դերանունների քանակական գերակշռության հարցը: Այս երևույթի հիմքերն ու պատճառները պետք է փնտրել դերանունների գործառության ոլորտում:

Գրական լեզվում դերանունները սովորաբար հանդիպում կամ այլ խոսքի մասերին փոխարինում են զոնե մեկ անգամ խոսքաշարում գործածվելուց հետո: Եզակի բացառություններ են որոշ անձնական, ինչպես նաև հարցական-հարաբերական դերանուններ, բայց այդ հանգամանքը էականորեն չի փոխում նրանց գործածության հիմնական սկզբունքը: Սա հանրահայտ իրողությունն է, որը նույնիսկ օրինակներով հաստատման կարիք չունի:

Իսկ խոսակցական լեզվում դերանունները կարող են ազատ հանդես գալ, փոխարինել այլ խոսքի մասերի՝ առանց դրանց նախապես գործածության: Սա է սկզբունքային, էական տարբերությունը: Ավելին, ի տարբերություն գրական լեզվի՝ խոսակցականում դերանունները անսահմանափակ հնարավորություններ ունեն կիրառվելու անվանողական արժեք ունեցող ցանկացած բառի նշանակությամբ և լինել հաղորդակցության առաջնային լիարժեք բաղադրամաս՝ կոնկրետ իմաստով, առանց լրացուցիչ ճշգրտում կատարելու անհրաժեշտության:

Դրանցով կմրսես, իմ գործածները տար հետդ: Սա է կարճը, սա հարմար է: Էսքանը ինձ մեկ շաբաթ հերիք է: Էսպես քեզ կհիվանդացնես և այլն:

Բերված օրինակների դերանունները գրական լեզվում կարող էին հանդիպել որոշակի խոսքաշարում, փոխարինման գործառույթով, համապատասխան մեկնություններով, նկարագրություններով կամ ճշգրտումներով: Մինչդեռ հաղորդակցության մասնակիցների համար դրանք իրենց առարկայական կամ հատկանշային նշանակությամբ միանգամայն հստակ են, կոնկրետ ու հասկանալի: Այսպիսի դեպքերում և

ընդհանրապես դերանունների գործածության ժամանակ հաճախ են օգտագործվում նաև զանազան շարժանքներ, դիմախաղ, որոնք չեն կարող իրենց դրսևորումների բազմազան ձևերով առկա լինել գրական լեզվով հաղորդակցության դեպքում:

Հիմնական տարբերությունը մատնանշող այս երևույթը մեծապես պայմանավորված է խոսակցական լեզվի ընդհանուր հատկանիշներով ու առանձնահատկություններով, մասնավորապես՝ իրադրության հետ կապի սերտության աստիճանով ու բազմագործառայնությամբ: Դա նշանակում է, որ խոսակցական լեզվում դերանուններն օժտված են գործառական ավելի մեծ բեռնվածությամբ, կատարում են ավելի մեծ թվով գործառույթներ, որոնք գրական լեզվում ա/կամ բացակայում են, բ/կամ, եթե կան էլ, զիջում են իրենց քանակով ու տարածվածությամբ, խոսակցական լեզվի ազդեցության արդյունք են, ոճական ցուցիչ:

Առանց մանրամասնելու և համակարգային ու հանգամանալից նոր խմբավորումներ կատարելու՝ հակիրճ ներկայացնենք մի քանի բնութագրական իրողություններ, որոնք առավել հստակ ու տեսանելի կդարձնեն ինչպես երկու համակարգերում դերանունների կիրառության հիմնական տարբերությունների, այնպես էլ խոսակցական լեզվում դերանունների գործառական ակտիվացման պատճառների բնույթը:

Առօրյա խոսքում ավելի հաճախական են դերանունների նրբինաստային, հուզական կիրառության դեպքերը: Իհարկե, տրամաբանական շեշտի և որոշակի հնչերանգի ուղեկցությամբ հուզական նրբերանգով կարող է կիրառվել գրեթե ամեն մի դերանուն, բայց այդ տեսակետից հատկապես աչքի են ընկնում ցուցական և հարցահարաբերական մի քանի դերանուններ /ինչ,

ինչքան, այնքան-էնքան և այլն/: Մեր կատարած ձայնագրություններում ու գրառումներում, օրինակ, ինչ դերանվան այդպիսի բազմաթիվ կիրառություններ ենք գտել, որոնցում առկա են տարատեսակ նրբերանգներ՝ հորդոր, խրախույս, հիացում, հավանություն, մերժում, հեզմանք, սպառնալիք, հակադրում և այլն: Դրանց մի մասը գրական լեզվի համար տիպական չէ, վերցված է խոսակցականից: Իսկ նույն դերանվան տարբեր գուգակցումները այլ խոսքի մասերի կամ նախադաս որ-ի հետ կարծես դարձել են յուրատեսակ շարահյուսական կարծրատիպեր՝ համապատասխան նրբերանգներ դրսևորելու համար:

Ինչ հարևան, հետս մարդ չի եղել: Ինչ փող, ինչ բան, շավվարիդ գրպանը դատարկ էր: Ինչ հեյ, ինչ հույ, արդեն ուշ է: Ինչ ուտել, արդեն ուշանում ենք: Քեզ ու քեզ խնդմնդում ես /որ ինչ: Թարս ես նայում /որ ինչ, ես ինչ անեմ: Բուլոր զարդերը կախել է /որ ինչ և այլն:

Նմանատիպ կառույցներ խոսակցական լեզվում շատ կան, և դրանցում հաճախ են պատահում նախադասության անդամի պաշտոն չկատարող կամ ոչ բնորոշ շարահյուսական դերով հանդես եկող մի շարք ցուցական, հարցահարաբերական, մասամբ նաև ժխտական դերանուններ:

Ա. Վայ, ես սրբիչը մոռացել եմ: Բ. Ոչինչ, ոչինչ, մեծ հանցանք չես արել: Ա. Չավենը հրաժարվում է: Բ. Ինչպես, հիմա ինչ, ուրեմն երկուսով կզնանք: Բուրթ, բուրթ, էդքան բուրթ:

Այսպիսի դեպքերում ևս հաճախ գործ ունենք ձևավորված կարծրատիպերի հետ: Մասնավորապես. Ա. Գնամ, խոսեմ հետը: Բ. Ուր խոսես, տրամադրությունը տեղը չի /այսինքն՝ մի խոսիր, խոսել պետք չէ/: Այդպես նաև՝ ուր տեսնես, ուր համաձայնես, ուր

ներես և այլն /բոլորն էլ ժխտական նշանակությամբ/: Նույն ձևով՝ երբ խոսեցինք, երբ հանդիպեց, երբ տեսավ /այսինքն՝ չխոսեցինք, չհանդիպեց, չտեսավ/: Անշուշտ, տարածված բոլոր կարծրատիպերը չէ, որ ընդունելի են. հիշենք, թեկուզ, գործողության ձև մատնանշող որոշ ցուցական դերանունների որոշչային կիրառությունները /եղպես մարդ չի լինի, էսպես երեխա ունենամ՝ չեմ պահի և այլն/, որոնք սխալ են, մերժելի, լեզվական ցածր մակարդակի արդյունք:

Դժվար չէ տեսնել, որ նշված դեպքերում դերանունները գործառույթով հիմնականում նույնանում են վերաբերականների, միջանկյալ բառերի հետ:

Խոսակցական լեզվում դերանունները հաճախ են կիրառվում պարզապես որպես խոսքի դադարները լցնող միավորներ. դրանք այսպիսի գործածությամբ դառնում են ավելադրություններ: Խոսողը ստիպված է տարբեր պատճառներով դադար տալ /չի հիշում դեպքերի հետագա ընթացքը, չի գտնում անհրաժեշտ բառը, ուզում է կատարել որևէ էական ճշգրտում կամ փոխել նախադասություն կառուցելու համար ընտրած պլանը և այլն/, բայց ինքնընթացորեն շարունակում է արտահայտվել, հնչեցնել որոշ ավելորդ բառեր, որոնց մեջ կարող են լինել նաև դերանուններ: Այս գործառույթամբ կարող են հանդես գալ տարբեր դերանուններ, հատկապես՝ դադարին նախորդող արդեն գործածված որևէ դերանուն, բայց ակտիվությամբ ու տարածվածությամբ առանձնանում են մի քանի ցուցականներ /Էս, էդ, էսպես, էդպես, էնպես և այլն/: Բերենք միայն մեկ նմուշ:

Երեկ տեսա, է, /էս/ հենց Զվարթնոցում, /էս/ բանի՝ երգչի, /էս/ Դարբինյանի հետ:

Առարկա ցույց տվող դերանունները և առհասարակ դերանունները գրական լեզվում կոչական չեն լինում, բայց խոսակցական լեզվում դա ոչ միայն հնարավոր է, այլև բավականաչափ տարածված է և ամենին էլ անհատական իրողություն չէ:

Դո՛ւք, դո՛ւք, մի հատ մոտեցեք, էլի: Այսքա՛նդ, դե հիմա լսե՛ք՝ ինչ եմ ասում: Ա՛յ ոչինչ, քեզ են կանչում, է:

Այդ դերանունները որոշյի պաշտոն էլ չեն կատարում գրական լեզվում:

Սակայն տեղին է վերհիշել, որ, օրինակ, *ինչ* դերանունը հենց գրական լեզվում էլ <<որ>>, <<որքան>>, <<ինչու>>, <<ինչպիսի>> և այլ իմաստներով ազատորեն գործածվում է ոչ միայն որոշյի, այլև գրականին ոչ բնորոշ շարահյուսական այլ դերով: Այդ բոլորն էլ գալիս են խոսակցականից:

Այս ինչ փորձանք բերեցիր գլխներին: Դու ին՛չ ընկեր ես, որ տեղյակ չես: Ա՛յ տղա, ինչ ես խառնվել իրար: Հանգի՛ստ ասա, ի՛նչ ես ճչում և այլն:

Անձնանիշ դերանունները գրական լեզվում որոշյալ էլ չեն դառնում, դա ևս պարզ է, սակայն հատկապես կրկնաենթակա կառույցներում խոսակցականից գրականին են անցել *նրանք*, *իրենք* դերանունների այդպիսի կիրառություններ /նրանք բոլորը փախստականներ են – բոլոր նրանք փախստականներ են/: Հետաքրքիր է, որ շուրջ վեց տասնամյակ առաջ տպագրված իր գրքերից մեկում, որ մինչև այսօր էլ դերանուններին նվիրված ուսումնասիրությունների մեջ մնում է լավագույնը, Ս. Աբրահամյանը դրանք կանոնական է համարում երկրորդական նախադասության առկայության դեպքում՝ բոլոր նրանք,

ովքեր.../2/: Բայց լեզվի զարգացման այս փուլի համար նման վերապահում կարելի է և չանել:

Գրական լեզվում բացահայտչի պաշտոն կատարող առարկայանիշ դերանունները հազվադեպ կիրառություն ունեն, մինչդեռ խոսակցական լեզվում դրանք բավականաչափ գործուն են ու տարածված:

Էդ նոր եկածներդ՝ դու, դու և դու, զանգից հետո կմնաք լսարանում: Այս երեքդ՝ դու, ինքը, ինքը, պարզներ եք ստանալու: Ուշացածներիս՝ ինձ, քեզ և Արտոյին, ցուցակից հանել են և այլն:

Նույնը կարելի է ասել հատկացյալի շարահյուսական դերի մասին. գրական լեզվում այդպիսի գործածությունները քիչ են, ընդգրկում են հազիվ մեկ-երկու դերանուն և հիմնականում ոճական երանգավորման արդյունք են, իսկ խոսակցական լեզվում դրանք անհամեմատ շատ են և առնչվում են ավելի մեծ թվով դերանունների:

Մեր ամեն ինչը կիսատ է մնացել: Դու նրա ի՛նչն ես: Ձեր էդքանի տները վթարային են: Մեր էսքանի թռչակները դեռ չեն բերել և այլն:

Խոսակցական լեզվի բնորոշ առանձնահատկություններից են, այսպես կոչված, նախադաս ստորոգական անվանումներով կառույցները, երբ

անվանվող անձը կամ առարկան բացակայում են, դրանց նշույթավորողը դառնում է նախադաս երկրորդականի ստորոգական մասը, որն էլ գրեթե միշտ զուգակցված է լինում որևէ դերանվան հետ /հիմնականում՝ որ, էս, էս որ և այլն/:

Էս որ կաթ էր բերում // էսօր չի եկել: Որ կարմիր ակնոցով էր // ձեր շենքի աղջիկ է: Էստեղ որ խնձոր էր առնում // արդեն չի գալիս: Էս որ աթոռի վրա դրված էին //երբ տարան և այլն:

Առանձին դերանուններ էլ, խոսակցական լեզվում հանդես գալով փոփոխված գործառույթով և ունենալով հաճախական կիրառություն, ամրա- կայվում են որպես տվյալ իրողության դրսևորման միջոց, կարգային ցուցիչ: Օրինակ, *էնպես* դերանունը բայերի հետ նախադաս գործածվելիս կայուն կերպով ասվածին հաղորդում է սաստկացման երանգ /էնպես խոսեց, էնպես արտասանեց, էնպես երգեց և այլն/, մի այլ դեպքում՝ կարող է դրան չտալ էական նշանակություն /էնպես եմ ասում, մի նեղվիր/, իսկ ածականների հետ կարծես դառնում է համեմատության աստիճան կազմող բաղադրիչ /էնպես լավ, էնպես սիրուն, էնպես հետաքրքիր և այլն/:

Խոսակցական լեզվում դերանունների գործառույթների փոփոխության դեպքերի թվարկումը կարելի է շարունակել, բայց ասվածն էլ բավական է՝ համոզվելու համար, որ դերանունների բազմագործառայնության, գործառական ակտիվացման հիմքում հենց նման տարբերություններն են: Այս հարցի վերաբերյալ բավական հետաքրքիր մի դիտողություն ունի Գ.Ջահուկյանը: Դերանունները համարելով ինքնին որոշյալ կամ ինքնին անորոշ իրադրական բառեր և փաստելով, որ դրանք գոյականներից կարող են տարբերվել ոչ միայն ձևաբանական փոփոխության առանձնահատկություններով, այլև ըստ կապակցելիության, նա գրում է. «Որոշյալին բնույթի երկրորդական նախադասությունների քննությունից նկատում ենք, որ այս դեպքում կապակցելիական տարբերությունը վերանում է, և գոյական դերանունները ձեռք են բերում որոշիչ ստանալու հատկություն...եթե գոյական դերանունները կարող են որոշիչ երկրորդական նախադասություն ստանալ, ապա որոշիչ դերանունները /դերանվանական որոշիչները/ չեն կարող

փոխարինվել որոշիչ երկրորդական նախադասությամբ: Այս դեպքում նրանք հանդես են գալիս որպես հարաբերիչ բառեր կամ հարաբերյալներ՝ անմիջական առարկայական իրադրության մեջ առարկաներ նշանակելու փոխարեն դառնալով այդ առարկաների նշանակումների նշանակիչներ>>/3/:

Մեզ համար տվյալ դեպքում կարևորը այն միտքն է, որ հաղորդակցության բուն գործընթացում դերանունները ձեռք են բերում նոր գործառույթներ: Իսկ դա կարող է կատարվել ինչպես գրական լեզվի ներսում, այնպես էլ խոսակցականում, այնտեղից էլ մուտք գործել գրական լեզու:

Մի հանգամանք ևս պետք է նկատի ունենալ, որ առհասարակ խոսակցական լեզվում գրական լեզվի նորմերից կատարվող շեղումները տարբեր բնույթի են: Լեզվի համակարգը խաթարող, բացասական ազդեցություն ունեցող շատ շեղումների, օտարաբանությունների, բարբառաբանությունների և այլ կարգի անընդունելի, անթույլատրելի սխալների կողքին կան նաև համակարգի պարզեցմանը միտված, լեզվի բնականոն զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված տարբերություններ: Եվ դրանց որակումն ու գնահատությունը կատարելիս պետք է զգոն լինել, նույն մոտեցմամբ չդիտարկել մերժելին ու ոչ մերժելին, որովհետև խոսակցական լեզուն էլ ունի իր նորմերը, որոնց հաշվառումը նույնպես կարևոր է: Դերանունների գործառույթյան ոլորտում էլ կան այդպիսիները՝ կապված հոգնակի թիվ չունեցող և չհոլովվող մի քանի դերանունների հոլովման, հոգնակի թվով գործածելու և այլ երևույթների հետ: Բայց դրանց վերլուծությունն արդեն առանձնակի քննություն է պահանջում և այս հոդվածի նպատակներից դուրս է:

Ծանոթագրություններ

1. Ս. Արրահամյան, Արդի հայերենի դերանունները, Ե., 1956, էջ` 40:
2. Ս. Արրահամյան, նշվ. աշխ., էջ` 211:
3. Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ` 541:

Саркисян Нвер – Активные грамматические классы слов в армянском разговорном языке. – Между системами армянской разговорной речи и книжного литературного языка в сфере распределения и функционирования частей речи и грамматических классов слов существуют разного рода количественные и качественные отличия, которые обусловлены более тесной связью с ситуацией и синкретизмом. Особенно выделяются те, которые характеризуются высокой активностью. По примеру местоимений анализируются и представляются основные причины и виды обнаружения этих явлений.

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ

ՉԵԶՈՔ ԵՎ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԵՐԸ*

Սաֆարյան Տաթևիկ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Բայի կարևոր քերականական կարգերից մեկը լինելով՝ սեռը դեռևս վերջնական ու հիմնավոր սահմանումների կարիք ունի: Չուտ ձևաբանական հիմունքներով արևելահայերենում պետք է առանձին տեսակ դիտել կրավորական բայերը՝ *վ* ցուցիչով, նաև պատճառականները՝ *ցն* ածանցով: Բայց քանի որ արևմտահայերենը ձևակազմորեն առանձնացնում է փաստորեն բոլոր սեռերը՝ ներգործական *ել*, չեզոք *իլ*, կրավորական *ուիլ* (վի) վերջավորություններով, իսկ երկու գրական հայերենները, որպես կանոն, պահպանում են բառապաշարային. լեզվամտածողական և քերականական ընդհանրությունները (հիմնականում տարբերվելով *ուիլ* և *կը* խոնարհման առանցքային հիմունքներով և դրա հետ կապված այլ հատկանիշներով), ուստի բացատրելի է դառնում երեք գլխավոր սեռերի առանձնացումը, մանավանդ նրանցում ակնհայտ են ձևաբանական և իմաստային նույն դրսևորումները: Նկատելի է, օրինակ, այսպիսի ընդհանրություն. *է*

*«Էջմիածին» հանդես, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, 2013, N 11, (ԺԱ), էջ 109-114:

խոնարհման բայերի մեծ մասը երկու ճյուղերում էլ ներգործական սեռի են (*խամել, խոսել, մարել, սիրել, ուտել, քակել-քանդել* և այլն), *ա* խոնարհման պարզ բայերի գերակշիռ մասը՝ չեզոք սեռի (*լալ, խաղալ, խշշալ, ծղրտալ, հավատալ, նողկալ, շողալ* և այլն), ինչպես և *ան* ածանցավոր բայերի մեծ մասը և «չ սոսկածանց բայերը, որոնց թիվը 10-15 է (*անձնանալ, հեռանալ, մերկանալ, վստահանալ, տիրանալ, քնքշանալ* և *դիպչել, թռչել, կպչել, փախչել*). (արևմտահայերեն՝ *դիպչիլ, թռչիլ, կպչիլ, փախչիլ* - S.U.), բոլորն էլ չեզոք սեռ ունեն»¹:

Անկախ այն բանից, որ այս քանակային օրինաչափությունը հարաբերական է, և եթե խոնարհիչներին ու բայածանցներին սեռատարբերակիչ հատկանիշ չպետք է վերագրել, ապա ձևաբանական տարբերակման հիմունք կարող է համարվել *վ* կրավորական ցուցիչը: Եվ հենվելով այն բանի վրա, որ «հայերենում *վ* մասնիկ ստանալու ընդունակությունն է միայն, որ ընդհանուր է թե դիմավոր և թե անդեմ բայերի համար»², կարելի է առանձնացնել միայն ներգործական և կրավորական սեռերը՝ դուրս թողնելով չեզոքը, ինչը և անում է Ռ. Իշխանյանը:

¹ Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 132:

² Տե՛ս Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1971, էջ 138:

Ձևաբանական և կառուցվածքային հիմունքներով տիպարի և սեռի կարգը համադրաբար քննելով՝ Գ. Ջահուկյանը դիտարկում է *-եց, -աց, -ն, -չ* հիմնական տիպարային տարբերակիչները, որոնցից *ա, է*, իսկ արևմտահայերենում ավելացրած նաև *ի, ու, ցն-ցր, վ* մասնիկները համարում է սեռանիշներ: Դրանք արտահայտում են պատճառական և կրավորական կառույցի անցողականություն (*խաղ-ա-ցն-ել, խաղ-ցն-ել և խաղ-ա-ցր-ել, խաղ-ցր-ել, խոս-ե-ցն-ել, խոս-ցն-ել և խոս-ե-ցր-ել, խոս-ցր-ել, գր-վ-ել*), ի վերջո շեշտում են ցուցիչի սեռորոշիչ դերը: Մանավանդ *վ-*ն բավականին ընդհանրական է, և ինչպես եվրոպական շատ լեզուների «պասիվ» կառույցներում, այնպես էլ հայերենում *վ-*ն նշում է գործողության հեղինակի օտարումը, ուստի *վ* կարող են ստանալ այն բայերը, որոնք ենթադրում են պատճառ և հետևանք (*գրել-գրվել, ծեծել-ծեծվել քանդել-քանդվել* և այլն), *վ* չեն ստանում այն բայերը, որոնք բնութագրվում են եղելությամբ, վիճակով, շարժմամբ (*ապրել, գնալ, դեղնել, քնել* և այլն): Այլ կերպ ասած՝ *վ* չստանալու հատկանիշը բնութագրում է չեզոք սեռին, և այստեղ *աց, ան/աց, չ* մասնիկները հանդես են գալիս «որպես անանցողականության կամ վիճակայնության արտահայտիչներ»³:

³ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 260:

Այսպիսով՝ սեռի տարբերակման ձևաբանական հիմունքն ամփոփվում է նրանով, որ կրավորական սեռի բայերը ունեն *վ* (*ուիլ-վիլ*) ցուցիչը, ներգործական են այն բայերը, որոնք կարող են *վ* ստանալ, իսկ չեզոք սեռի բայերը, անկախ այն բանից, որ արևմտահայերենում ունեն *իլ* ձևը, որը գալիս է միջին հայերենից (ներգործական-*բաժնեմ*, չեզոք-*բաժնիմ*, կրավորական- *բաժնուիմ*), *վ* չեն կարող ստանալ, մանավանդ հաճախ հենց *վ* – ով ձևի իմաստ ունեն (*բաժնիլ-բաժանվել, խրիլ-խրվել, ծավալիլ-ծավալվել, կկոցիլ-կկոցվել, շեղիլ-շեղվել* և այլն): Կրավորական *վ* ցուցիչը «ավելանում է *ե* և *ի* խոնարհման աններածանց բայերի ներկայի հիմքին՝ *բերել-բերվել-բերվիլ, խոսել-խոսվել-խոսվիլ*, իսկ *ա* խոնարհման աններածանց և սուկածանցավոր բայերի անցյալի հիմքին՝ *կարդալ-կարդացվել-կարդացվիլ, հեռանալ-հեռացվել-հեռացվիլ*»⁴ : Այսինքն՝ զուտ ձևաբանական հիմունքը սեռի տարբերակման մեջ, իր որոշակիությամբ հանդերձ, առաձգականացում է բերում, և շատ բան չի փոխվում նրանից, որ արևմտահայ գրական լեզուն պահպանում է երեք հիմնական սեռերի ձևակազմական ինքնուրույնությունը:

Ի վերջո, սեռի տարբերակումը որոշվում է բայի այն գործողությամբ, որը կապվում է ինչպես կատարող, այնպես էլ

⁴ Յու. Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քերականություն, Երևան, 2007, էջ 141:

կրող առարկայի հետ, ուստի սեռը հաճախ հնարավոր է լինում որոշել շարահյուսական կառույցներում, խնդրատական հարաբերությունների մեջ: Ահա թե ինչու բայասեռի կարգը նույնացվում է անցողականության և անանցողականության հետ, և այդ դիրքորոշումը նկատելի է դեռևս գրաբարի քերականների գործերում, ուր առանձնացվում էր հինգ սեռ: Այս հիմունքներով Մ. Աբեղյանը բոլոր բայերը բաժանում է *ենթակայական և առարկայական*, ապա՝ *անցողական և անանցողական* տեսակների: Առաջին երկու դեպքերում կարևորվում է այն, թե գործողությունը ենթակայից բացի պահանջո՞ւմ է խնդիր, կամ անցնում է ենթակայից խնդրի՞ն, թե՞ խնդրից ենթակային: Հենց կրող խնդրի գոյությունն էլ սեռային բաժանման հիմք դարձնելով՝ Մ. Աբեղյանը գրում է. «Կրող խնդրի նկատմամբ բոլոր բայերը բաժանվում են երկու տեսակի կամ սեռի՝ անցողական և անանցողական»⁵: Երկրորդի մեջ են դիտարկվում կրավորական և չեզոք սեռի բայերը: Որքան բնական է, որ բայասեռը դիտարկվում է շարահյուսության ոլորտում, և, ըստ էության, դա ճիշտ է նաև արևմտահայերենի համար, քանի որ անգամ չեզոք *իլ* և կրավորական *վիլ* ձևերով բայերի սեռային դրսևորումը կարելի է պարզել նախադասության մեջ, միևնույն է,

⁵ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 375:

անհետևողականություն կա նրանում, որ կրավորական բայերը ևս դիտվում են անանցողականության մեջ:

Ձևաբանական և շարահյուսական մակարդակներում սեռը բնորոշելու անհստակությունը հաղթահարելու միտում ունի Ա. Աբրահամյանի դասակարգումը, մանավանդ, ինչպես կտեսնենք, արևելահայերենի և արևմտահայերենի բայասեռերի ընդունված քանակը տարբերվում է կարգի և ենթակարգի հարաբերությամբ: Լեզվաբանն առանձնացնում է անցողական և անանցողական *սեռադասեր*, ներգործական, կրավորական և չեզոք *սեռեր*, պատճառական և միջին-անդրադարձ *սեռային առումներ*, ընդ որում՝ անանցողականի մեջ է դիտում չեզոք և կրավորական սեռերը և միջին-անդրադարձ սեռային առման ու կրավորաձև չեզոք բայերը (անցողականի մեջ մնում են ներգործական սեռը և պատճառական սեռային առումը) ⁶ : Գ. Ջահուկյանի հիմնավորումից հետո պետք է լուծված համարել կրավորական սեռը, ինչպես և փոխադարձ ու անդրադարձ գործողություն ցույց տվող բայերը անցողականի մեջ տեղադրելը: Այդ դեպքում անանցողական կմնա միայն չեզոք սեռը, և կրավորականի հետ համեմատած՝ նրա տարբերությունը կբխի հենց անցողականության հատկանիշից՝ անշուշտ, ներառելով նաև

⁶ Տե՛ս Ա. Աբրահամյան, Բայր ժամանակակից հայերենում, գիրք Ա, Երևան, 1962, էջ 491:

արևելահայերենի *վ* ցուցիչը ու արևմտահայերենի *իլ*, *վիլ* վերջավորությունները, որոնք իմաստային առումով միշտ չէ, որ սեռատարբերակիչ միակ հատկանիշն են:

Եվ այսպես՝ արևմտահայերենը բայասեռի, ինչպես և այլ լեզվական երևույթների մեջ, պահպանում է միջին հայերենի բնորոշ վիճակը, այսինքն՝ ձևակազմորեն ինքնուրույնանում են երեք սեռերը՝ ներգործական-*դատել*, չեզոք-*դատիլ*, կրավորական-*դատվիլ*: Իլ լծորդիչը միջին հայերենով անցել է արևմտահայերենին գրաբարից, որտեղ այն կրավորաձև խոնարհման արտահայտություն ուներ, երբ *է* խոնարհման բայերը *ի*-ով կրավորականություն էին արտահայտում՝ *պաշտել-պաշտիլ* (պաշտվել): Հ. Աճառյանի դիտարկմամբ՝ «7-րդ դարում արդեն այս ձևը տիրապետող էր (Սեբեոս. «Ապա յայնմ ժամանակի Հայկն Աբեթածին ոչ կամեցաւ հնագանդիլ ի ծառայութիւն Բելայ»)»⁷: Այսինքն՝ *իլ*-ը կրավորականության ցուցիչ է եղել: Բայց միջին հայերենը կրավորականն արդեն արտահայտել է *ուիլ* ձևով, իսկ այս *ու* կամ *վ* ավելացած ածանցը Կարստը և Հյուբշմանը կապում են *ու* լծորդիչի հետ և նրանից են առաջացած համարում (*զեն-ու-իլ*), Այտընյանը և ուրիշ հայ լեզվաբաններ *վ*-ի ծագումը բխեցնում են գրաբարի անցյալ դերբայից, որը աշխարհաբարը վերցրեց

⁷ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Խ. Ա, Երևան, 1959, էջ 369:

վաղակատար և հարակատար դերբայների իմաստով՝ *գրեալ-գրել-գրած*: Հենց հարակատարն էլ, որը վիճակ է արտահայտում, սկսում է գործածվել *ուած* ձևով (Հիշենք, որ Գ. Ջահուկյանը կրավորականությունը նույնացնում էր վիճակայնության հետ), և հետագայում *վ*-ն սկսում է գործածվել վիճակ արտահայտող այլ բայաձևերի մեջ ևս: Ավելորդ չի լինի կրկին հիշել, որ այսօրվա *վ*-ով որոշ բայաձևեր դեռ 19-րդ դարի գեղարվեստական գրականության մեջ ունեին առանց *վ*-ի գործածություն, որը հավասարապես բնորոշ էր ոչ միայն արևմտահայերենին, այլև արևելահայերենին. «Երկու սիրելիներ դրած են (դրված են) իմ առջև» - Բաբել. «Նրա ճակատը կապած էր (կապված էր) սև թաշկինակով» - Շիրվանզադե:

Հ. Աճառյանը նկատել է, որ միջին հայերենի *իլ, ուիլ* սեռատարբերակիչ ձևերը «անցան արևմտյան գրական հայերենին, ուր դժբախտաբար բոլոր բայերի վրա չտարածվեցին» (էջ 399): Եվ մյուս կողմից այն, որ գրաբարում *իլ* ձևը կրավորականության կամ կրավորաձև խոնարհման ցուցիչ է, հասկանալի է դարձնում արևմտահայերենի *իլ*-ով չեզոք սեռի բայերի հակումը, երբեմն՝ նույնացումը *վիլ* ձև ունեցող կրավորական բայերին, որից և երկու գրական հայերենների այս սեռերը շարահյուսական մակարդակում էական տարբերություն հանդես չեն բերում:

Օրինակ՝ «Սակայն *չհաջողեցավ* այս ասպարեզին մեջ՝ գնո մասին չկրնալով *համաձայնիլ* դերասաններուն հետ» (ՀՊ⁸, էջ 128) նախադասության ընդգծված բայերը արևելահայերենում ունեն *վ*-ով ձևի կրկին չեզոք գործածություն (*չհաջողվեց, համաձայնվել*): Մի այլ օրինակ. «Ինք օրինավորութենէ բնավ չջեղիր» (ՀՊ, էջ 133. *չէր ջեղվում*):

Արևելահայերենի և արևմտահայերենի կրավորական *վ*-ի առկայությունը պարտադիր չի դարձնում անուղղակի խնդրի գոյությունը, բայց որպէս կանոն, դրա շարահյուսական դերը ենթիմաստորեն ընկալելի է: Այսպէս՝ «Տասն օր ետքը եկեղեցի *տարվեցավ* կնքվելու համար» (ՀՊ, էջ 82. *տարվեց կնքվելու*) նախադասության մեջ կրավորական սեռի ընդգծված բայերը չեն պահանջել ներգործման անուղղակի խնդիրներ, բայց «ո՞ւմ կողմից» հարցը երկու բայերի համար էլ կա («ո՞ւմ կողմից տարվեց», «ո՞ւմ կողմից կնքվել»): Նույնպիսի շարահյուսական հարաբերություն է նաև հետևյալ նախադասություններում. «Իսկ հիմա պ. Արծրունին *կը հրավիրվի* ժողովներուն» (ՀՊ, էջ 128. *հրավիրվում է*). «Վիրավորները քաջալերելու համար բացավ հյուրանոցները, որպէսզի աներկյուղ *վիրավորվին* և երթան հյուրանոցներու մեջ *դարմանվին*» (ՀՊ, էջ 129. *վիրավորվեն,*

⁸ Հակոբ Պարոնյան, Երկեր, Երևան, 1979:

բուժվեն). «Երբ ճեմարանը *փակվեցավ*, Սամաթիո մեջ ընկերություն մը *կազմվեցավ* թաղին վարժարանը հառաջացնելու համար» (ՀՊ, էջ 132. *փակվեց, կազմվեց*). «Տոմարակալության շատ հմուտ ջրլալուն պատճառով սկսավ *բամբասվիլ*» (ՀՊ, էջ 132. *բամբասվել*): Իսկ այս նախադասության մեջ, որքան էլ երկու ստորոգյալները չեն պահանջել անուղղակի խնդիրներ, բայց ակնառու են արևմտահայերենի *վին* ձևով կրավորականը և *ին* ձևով չեզոքը, որոնք արևելահայերենի են փոխադրվում միևնույն *վեն* ձևով. «Պիտի *գտնվին* մարդեր, որ *համարձակին* իրենց հայրն կամ մայրն սպաննելու» (ՀՊ, էջ 82. *գտնվեն, համարձակվեն*): Բերենք նաև կրավորական կառույցի նախադասություններ՝ անուղղակի խնդրով, որոնք դրվում են մեծ մասամբ բացառական, երբեմն նաև՝ գործիական հոլովներով. «Նախ հիշյալ դպրոցին *մեծավորներեն մերժվեցավ*, բայց հետո վարդապետներուն *ջանքովն* և *աղաչանքովն* ընդունվեցավ հոն» (ՀՊ, էջ 83. *մեծավորներից մերժվեց, ջանքով և աղաչանքով ընդունվեց*): «Գաղատիո Հռովմեական հայերը *կը կեղեքվեին* քանի մը քահանաներե» (ՀՊ, էջ 83. *կեղեքվում էին քահանաներից*):

Բոլոր դեպքերում արևմտահայերենի չեզոք և կրավորական սեռերի ձևակազմական ինքնուրույնության մասին ճիշտ է այն եզրահանգումը, թե «համակարգը վերջնականապես չի կայացել,

այլ ընդգրկում է անցողական բայերի մի մասը, ինչպես՝ այրել-այրիլ-այրուիլ, թափել-թափիլ-թափուիլ, խոնարհել-խոնարհիլ-խոնարհուիլ, սեղմել-սեղմիլ-սեղմուիլ և այլն»⁹: Օրինաչափ է, որ արևելահայերենում *իլ, վիլ* ձևերը ընկալվում են որպես *վ* ածանցավոր կազմություն, այսինքն՝ *կտրիլը* և *կտրվիլը*, ինչպես տեսանք, արտահայտվում են նույն *կտրվել* ձևով, և այս կառուցվածքներում ներգործող խնդրի առկայությունը հաճախ պարտադիր չէ, քանի որ տրամաբանական ենթակայի կամ գործողի դերը իջեցվում է. «Առաջարկը մերժվում է» - «Առաջարկը կը մերժվի», - պարտադիր չէ նշել՝ ում կողմից: Ի վերջո, շարահյուսական նույն գործառույթն ունեն «Անձրեն սկսավ կտրիլ»-«Անձրեն սկսավ կտրվիլ»-«Անձրեն սկսեց կտրվել» կառուցվածքները: Կամ՝ «Տասը տարվան անցյալ մը, որ մեկ երկվայրկյանով մը *կը կտրի*» (ԳԶ¹⁰, էջ 55) նախադասությունը կարող է ունենալ «*կը կտրվի*» կառուցվածքը, և համապատասխանաբար պարզ է նաև արևելահայերեն փոխադրությունը. «...*կտրվում է*»: Այսինքն՝ արևելահայերենում և արևմտահայերենում կրավորականություն («պասիվ» կառուցվածք) արտահայտող բայերի խումբ կա, որ պարզապես չունի անուղղակի խնդրի անհրաժեշտություն, թեպետ

⁹ Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006, էջ 145:

¹⁰ Գրիգոր Զոհրապ, Երկեր, հ. 1, Երևան, 2001:

անցողականության երանգը առկա է. *առնչվել-առնչվիլ, բաժանվել-բաժնվիլ, բացվել-բացվիլ, գոհվել-գոհվիլ, թրջվել-թրջվիլ, լսվել-լսվիլ, կախվել-կախվիլ, հուզվել-հուզվիլ, պարզվել-պարզվիլ, փրկվել-փրկվիլ* և այլն: Բայերի մի մեծ մասի մեջ, անկախ անցողականության չափից, անուղղակի խնդրի գիտակցումը ավելի որոշակիորեն կա. *ավերվել-ավրվիլ* (ինչ-որ մեկի կողմից), *գողացվել-գողցվիլ, փակվել-գոցվիլ, գրկվել-գրկվիլ, թալանվել-թալանվիլ (թալնվիլ), կազմվել-կազմվիլ, ներկվել-ներկվիլ, սիրվել-սիրվիլ, վնասվել-վնասվիլ, տպվել-տպվիլ* և այլն:

Արևելահայերենի և արևմտահայերենի բայասեռերի դասակարգման տարբերությունը (ձևակազմական վերոհիշյալ դրսևորումներից բացի, երբ իմաստային առումով ակնառու են ընդհանրությունները) կապվում է քերականական կարգի և ենթակարգի հարաբերության հետ, անդրադարձ և փոխադարձ գործողություն ցույց տվող բայերը արևմտյան գրական հայերենում հակված են առանձին սեռ համարել: Նրանք ձևաբանորեն ունեն կրավորական կառուցվածք՝ *վել-վիլ* վերջավորություններով, պարզապես ցույց են տալիս, որ գործողությունը կամ ենթական է կատարում ինքն իր վրա (*լվացվել-լվացվիլ, հազնվել-հազնվիլ, սանրվել-սանտրվիլ, սափրվել-սափրվիլ*), կամ այն առնչվում է մեկից ավելի անձերի հետ (*գրկախառնվել-գրկվիլ, համբուրվել-*

համբուրվի): Այս բայերի համար նշվում է, որ «խիստ սահմանափակ է այս խմբին պատկանող բայերի թիվը արևելահայերենում և արևմտահայերենում: Երկուսում էլ (այդպես է նաև մի շարք այլ լեզուներում) անդրադարձ խմբին պատկանող բայերի ենթական բնութագրվում է շնչավորության հատկանիշով»¹¹:

Այսպիսով՝ սեռի տարբերակման հիմքում դնելով ձևային ցուցիչները (*վ, ցն*) և խնդրառական կապակցությունը կամ անցողականությունը՝ պարզում ենք, որ այս հիմքերով բնութագրվող ներգործական և կրավորական սեռերի կողքին մնում է բայերի մեծ քանակ, որը չունի քերականական ցուցիչ և անցողականություն, ուստի նրանց կոչում են չեզոք սեռի բայեր: Միակ անանցողական խումբը լինելով՝ այդ բայերը հատկանշվում են նաև նրանով, որ մեծ մասամբ *վ* չեն կարող ստանալ բայց, որպես կանոն, ստանում են *ցն* ածանցը՝ *ասյրել-ասյրեցնել, կորչել-կորցնել, վազել-վազեցնել* և այլն: Եթե արևելահայերենում չեզոք և կրավորական սեռերի բայերի անցյալ կատարյալը կազմվում է ցոյական հիմքից (*ասյրեցի-ասյրեցիր-ասյրեց... սիրվեցի-սիրվեցիր-սիրվեց...*), ապա արևմտահայերենում դրանք ստանում են գրաբարյան կրավորակերպ խոնարհման

¹¹ Ա. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուները, Երևան, 1985, էջ 222:

վերջավորություններ (*ասյրեցա-ասյրեցար-ասյրեցավ... սիրվեցա-սիրվեցար-սիրվեցավ...*): Այսինքն՝ արևմտահայերենը, պահպանելով միջին հայերենին բնորոշ չեզոք *իլ* և կրավորական *վիլ* ձևային հատկանիշը և այս բայերի կրավորակերպ խոնարհման վերջավորությունները, որպես նոր գրական լեզու կամ աշխարհաբար, իր լեզվա-մտածողական, իմաստային և շարահյուսական բնութագրիչների բովանդակությամբ քերականական «ավանդապահությունից» անցնում և ավելի է մոտենում արևելահայերենին, և դա արվում է ինչպես անցողականության ու անանցողականության, շարահյուսական կառուցվածքների, այնպես էլ չեզոք և կրավորական կառույցների շարահյուսական փոխներթափանցման ընդհանրությամբ:

Համառոտագրություններ

ԳԶ - Գրի՛որ Զոհրապ, Երկեր, հատոր 1, Երևան, 2001:

ՀՊ - Հակոբ Պարոնյան, Երկեր, Երևան, 1979:

Գրականություն

1. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. Ա, Երևան, 1959:

3. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք Ա, Երևան, 1962:
4. Յու. Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Երևան, 2007:
5. Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:
6. Գրիգոր Ջոհրապ, Երկեր, հ. 1, Երևան, 2001:
7. Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1971:
8. Հակոբ Պարոնյան, Երկեր, Երևան, 1979:
9. Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974:
10. Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006:
11. Ա. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուները, Երևան, 1985:

Татевик Сафарян- Восточноармянский и западноармянский страдательные и средние залоги - Являясь единственной непереходной группой, глаголы среднего рода характеризуются тем, что они не могут получать *ի*, но, как правило, получают суффикс *ցն*. Если в восточноармянском языке прошедшее

совершенное глаголов среднего и страдательного рода образуется от сослагательного наклонения, то в западноармянском они получают окончания страдательного спряжения грабара. По этому, западноармянский, сохраняя свойственный среднеармянскому нейтральный /h/ и страдательный ւիւ и страдательные окончания спряжения этих глаголов, как новый литературный язык ближе к восточноармянскому, причем как с точки зрения переходности, так и непереходности, синтаксические структуры, а также синтаксическая структура средних и страдательных структур с общностью взаимопроникновения.

Tatevik Safaryan- Passive and Neural Genders in Eastern and Western Armenians- Being the only non-transitive groups, the verbs of Neutral Gender are characterized by the fact that most of them cannot get “ւ” but as a rule they get “gû” particle. If in Eastern Armenian the past tense of Passtive and Neutral Genders are formed of “g” root, then in Western Armenian they get accusative conjunction endings of grabar (old Armenian). In other words, the Western Armenian, preserving the typical characteristics of Middle Armenian of neutral “իւ” and definitive “ւիւ” the passive conjugation endings of these verbs, as a new literary language us closer to Eastern Armenian and this is done both in terms of

transitivity and intransitivity, syntactic structures, and the syntactic structure of neutral and passive structures with the generality of interpenetration.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
Առաքելյան Կ. Լ., Առարկայահասկացական և գնահատողական բառաշերտը Գ. Ջահուկյանի բանաստեղծական գրքում.....	5
Առաքելյան Կ. Լ., Բնանկարի կերտման լեզվական միջոցները	
Միսաք Մեծարենցի քնարերգության մեջ.....	19
Բարսեղյան Ա.Գ., Շարահյուսական կապակցությունների ոչ կանոնական դրսևորումներ ՋԼՄ-ների լեզվում.....	46
Գալստյան Ա.Ս., Լեզվաբանական տերմինների գործածության սխալների և հարակից այլ հարցերի մասին	54
Գալստյան Ա.Ս., Հայերեն լեզվաբանական տերմինների ստեղծման և կիրառության մի քանի հարցեր.....	63
Ղամոյան Լ. Ա., Անկախ արմատով և կախյալ բայահիմքով համանունների բառակազմության իմաստաբանություն.....	79
Ղամոյան Լ. Ա., Իրադրային բառերն ու արտահայտությունները քաղաքային փոխադրամիջոցներում.....	86
Պապիկյան Ս. Վ., Կրոնակեղեցական տերմինների շերտաբանական վերլուծություն.....	96
Պապիկյան Ս. Վ., Զրադաշտական կրոնին վերաբերող բառերի մասին.....	110
Սարգսյան Ն. Ժ., Գործառական ակտիվությամբ բնութագրվող բառաքերականական կարգեր խոսակցական լեզվում	130
Սաֆարյան Տ. Վ., Արևելահայերենի և արևմտահայերենի չեզոք և կրավորական սեռերը.....	141

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՐԱԿ Ա

Ձևավորումը և էջադրումը՝
Տ. Սաֆարյանի